



Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Ծիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 10-ի
N 46-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Գյումրու համայնքապետարանի կողմից համայնքային բյուջեի միջոցների
օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և համայնքային սեփականության
օգտագործման վերաբերյալ**

2020

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի ապրիլի 11 թիվ 8/6, հոկտեմբերի 30-ի թիվ 23/5, նոյեմբերի 26-ի թիվ 8/6, դեկտեմբերի 24-ի թիվ 28/25 և 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 14-Ա որոշումներ:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարան:

Հաշվեքննության առարկան

Համայնքային բյուջեի միջոցների օգտագործում, բյուջետային մուտքերի ապահովում և համայնքային սեփականության օգտագործում:

Հաշվեքննություն ն ընդգրկող ժամանակաշրջա նը

2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2019 թվականի ապրիլի 22-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներառյալ: Ձեռնման և դիտարկման ընթացակարգերի իրականացման ժամկետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 19-ը ներառյալ:

Հաշվեքննության տեսակներ

Իրականացվել է Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն:

Հաշվեքննության ընթացակարգեր

Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

1.ԱՆԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքի ղեկավարին.

Մենք հաշվեքննության ենք ենթարկել ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարան) 2017- 2018 թթ. ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները և համայնքապետարանի կողմից նույն տարիների ընթացքում համայնքային բյուջեի միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և համայնքային սեփականության օգտագործման համապատասխանությունը իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Ղեկավարության պատասխանատվությունը

Համայնքապետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 176-Ն ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի:

Համայնքապետարանի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ծրագրերի կատարումն իրականացնել ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարության կարծիքով թույլ կտա պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից և/կամ անհամապատասխանություններից զերծ ֆինանսական հաշվետվություն:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք համայնքապետարանի կողմից համայնքային բյուջեի միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և համայնքային սեփականության օգտագործման վերաբերյալ:

Մենք հաշվեքննությունն անցկացրեցինք «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Մենք հետևեցինք վարքագծի սկզբունքների պահանջներին և հաշվեքննությունը պլանավորեցինք և իրականացրեցինք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական գործունեության իրականացումը զերծ է էական անհամապատասխաններից:

Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ անհամապատասխանության հետևանքով Գյումրու համայնքապետարանի կողմից իրականացվող գործընթացի էական անհամապատասխանության ռիսկերի գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք են բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ոչ լիարժեք եզրահանգման հիմքեր

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի կողմից համայնքային բյուջեի միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և համայնքային սեփականության օգտագործման ընթացքում առկա են անհամապատասխանություններ ՀՀ օրենսդրության պահանջների հետ, մասնավորապես՝

Ինչպես նկարագրված է ընթացիկ եզրակացության II-րդ բաժնում, հաշվեքննության ժամանակահատվածում՝

ՈՒՆԵՆԱԼՈՎ հողի հարկի բյուջե վճարման ենթակա գումար 01.11.2016թ. դրությամբ՝ 77,087.8 հազ. դրամ և 02.11.2017թ. դրությամբ՝ 89,211.0 հազ. դրամ ու տարեկան հաշվարկային ցուցանիշ 01.11.2016թ. դրությամբ՝ 46,142.9 հազ. դրամ և 02.11.2017թ. դրությամբ՝ 47,870.7 հազ. դրամ, հողի հարկը պլանավորել են՝ 2017թ.՝ 46,205.2 հազ. դրամ և 2018թ.՝ 47,949.3 հազ. դրամ, այսինքն տարեկան հաշվարկայինից ավել են պլանավորել ընդամենը 2017թ-ի՝ 62.3 հազ. դրամ և 2018թ-ի՝ 78.6 հազ. դրամ: Մասնավորապես՝ իրավաբանական անձանց 2017-2018թթ. հողի հարկի պլանային ցուցանիշը ուղիղ հավասար է համապատասխանաբար նախորդ տարվա (բյուջեների պլանավորման տարվա) հաշվարկային ցուցանիշին: Իրավաբանական անձանց 2017-2018թթ. հողի հարկի պլանային ցուցանիշների մեջ ապառքներից ոչ մի մաս չի ներառվել:

Հաշվեքննության ընթացքում հայտնաբերվել են անճշտություններ ֆիզիկական անձանց հողի հարկի 2017-2018թթ. բազաներում (չհաշվառված հողակտորներ, անվանափոխություն չկատարած հողակտորներ) ներկայացվում է աղյուսակի տեսքով (Հավելվածներ 1-4):

Համայնքի հողի հարկի բազայից դուրս մնացած կազմակերպությունների կողմից նախորդ տարիներից կուտակված, համայնքի բյուջե վճարման ենթակա գումարը 01.12.2019թ. դրությամբ կազմել է՝ 3,005.9 հազ. դրամ, իսկ 2017-թթ. այն կազմել է՝ 692.5 հազ. դրամ:

Համայնքի իրավաբանական անձանց 2017թ. գույքահարկի պլանային ցուցանիշը ուղիղ հավասար է նախորդ տարվա (բյուջեների պլանավորման տարվա) հաշվարկային ցուցանիշին՝ 43,086.7 հազ. դրամ է, պլանային ցուցանիշի մեջ ապառքներից ոչ մի մաս չի ներառվել, իսկ փաստացին կազմել է՝ 104.1%, կամ 44,833.1 հազ. դրամ: Իրավաբանական անձանց 2018թ.գույքահարկը տարեկան հաշվարկայինից ավել են պլանավորել ընդամենը 5,3 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում հայտնաբերվել են անճշտություններ /ընտրանքային կարգով/ ֆիզիկական անձանց շինությունների գույքահարկի 2017-2018թթ. բազաներում (չհաշվառված շինություններ, անվանափոխություն չկատարած շինություններ, իրական արժեքից պակաս հաշվառված շինություններ) ներկայացվում է աղյուսակի տեսքով.(Հավելվածներ 5-10):

Համայնքի գույքահարկի բազայից դուրս մնացած կազմակերպությունների կողմից նախորդ տարիներից կուտակված համայնքի բյուջե վճարման ենթակա գումարը 01.12.2019թ. դրությամբ կազմել է՝ 8,772.4 հազ. դրամ, իսկ 2017-թթ. այն կազմել է՝ 1,735.9 հազ. դրամ:

Համայնքապետարանի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 22.06.2012թ. N 822-Ն որոշմամբ հաստատված “Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի” 6-րդ կետի 1-ին ենթակետի, այն է՝ “Համայնքի ղեկավարը հարկ վճարողի դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ հարկային արտոնության տրամադրմանը համաձայնելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում հարկային արտոնության գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև հարկային արտոնություններ տալու վերաբերյալ հարկ վճարողի ներկայացրած փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը” պահանջը և 2017-2018 թթ. ընթացքում ընդհանուր՝ 2,196.2 հազ. դրամի գույքահարկի արտոնություններ է տրամադրել փոխադրամիջոցների գծով գույքահարկ վճարողներին:

Համայնքապետարանի կողմից չի պահպանվել “Գույքահարկի մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ “Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ” և ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի ա) ենթակետի՝ “ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ ներկայացնում՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը՝ նախորդ ամսվա ընթացքում ՀՀ օրենսդրության համապատասխան նոր կառուցված, նոր առաջացած (ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ ունեցող) շենքերի, շինությունների ընթացիկ հաշվառման մասին” պահանջները: Վարչական տարածքում գտնվող շենք- շինությունների ընթացիկ հաշվառման մասին տեղեկատվությունը չի ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում և զրկվել է լրացուցիչ եկամտից:

Համայնքապետարանի կողմից չի պահպանվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ «Տեղական տուրքը և (կամ) վճարը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է տեղական տուրք և (կամ) վճար

հաշվարկող և գանձող պաշտոնատար անձանց վրա» և 20-րդ հոդվածի՝ «Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու ու գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը» պահանջները և համայնքում առանց թույլտվության աշխատող տեղական տուրք վճարողների կողմից 2017-2018թթ. համայնքի բյուջե նախատեսվածից պակաս է վճարվել ընդամենը՝ 16,058.1 հազ. դրամ, իսկ մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնողների կողմից համայնքի 2017-2018թթ. բյուջե չի վճարվել պակաս հաշվառված 53 մարդատար տաքսի ավտոմեքենայի համար 530.0 հազ. դրամ:

Մարզադպրոցներում որոշ մարզիչներ, չեն համապատասխանում իրենց կրթական տվյալներով, որը պահանջվում է ՀՈԱԿ-ների Կանոնադրության 4-րդ գլխի 33 կետով:

Մարզադպրոցներում որոշ դեպքերում ծնողվճարների դրամարկղային մուտքի օրդերների վրա բացակայում են վճարողների ստորագրությունները և համարակալումը ինչպես նաև առկա են դեպքեր, երբ չեն լրացվել դրամարկղի մուտքի օրդերներ ընդանրապես: Հավաքագրված ծնողվճարները սպորտդպրոցների կողմից համայնքի բյուջե մուտքագրվել է ոչ պատշաճ, սահմանված ժամանակին: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 05.10.2017 թվականի N 1260-Ն հաստատված «Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման կարգի» հավելված 1-ի 5-րդ կետով սահմանված պահանջների նկատմամբ:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների նախարարի 2016թ.փետրվարի 1-ի թիվ 37- ն հրամանի պահանջների նկատմամբ՝ պատասխանատու անձի կողմից վառելիքը բաշխվել է վարորդներին կտրոններով յուրաքանչյուր մեկ ամսվա համար: Յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ տարվել է հաշվառում և լրացվել ուղեթերթիկները, տվյալ շաբաթվա վառելիքի վերաբերյալ: Առկա են նաև ավտոմեքենաներ, որոնց վազբաչափերը չեն աշխատում: Ըստ պատասխանատուի, վազքը ուղեթերթիկներում լրացվել է վարորդներին տրված վառելիքի կտրոններով, իսկ տրված վառելիքի չափից ելնելով ավտոուղեգրերը լրացվել են վառելիքի ընդհանուր քանակությունից կատարելով հաշվարկ՝ կիրառելով ավտոմեքենաների վառելիքի ծախսի գործարանային նորմաները: Ավտոմեքենաների երթուղային թերթերի վրա մասամբ բացակայում են ժամը և վերջնական վազքի տվյալները:

Հողերի վարձակալության ուսումնասիրությունից պարզվեց, որ հողօգտագործողների կողմից խախտվել են պայմանագրային պարտավորությունները, որի դիմաց 31.12.2017թ. դրությամբ հաշվարկվել և արձանագրվել է 89,759. 0 հազ. դրամի պարտք՝ ներառյալ տույժերը: 31.12.2018թ. դրությամբ հաշվարկվել և արձանագրվել է 107,865.3 հազ. դրամի պարտք՝ ներառյալ տույժերը: Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է՝ մրցույթներին հաղթող են ճանաչվել

լավագույն պայմաններ առաջարկող մասնակիցները, սակայն մրցույթներին հայտ ներկայացրած մնացած մասնակիցների կողմից առաջարկված պայմանները նշված չեն:

Գույքի վարձակալության ապառքը 31.12.17թ. դրությամբ կազմել է 4,848.0 հազ. դրամ, տույժ՝ 1,415.4 հազ. դրամ: 31.12.2018թ. դրությամբ՝ ապառքը կազմել է 2,890.9 հազ. դրամ, տույժ՝ 2,715.8 հազ. դրամ:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդներում հաղթող ճանաչված մասնակիցների մեծամասնության կողմից չեն կատարվել պայմանագրերով նախատեսված պարտավորությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի 4/7 հասցեի շինությունը /31,36 քմ մակերեսով, 2333,0 քմ հողատարածքով / «Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ անկախ գնահատողի կողմից գնահատվել է 3, 280. 0 հազ. դրամ, որը Գյումրու համայնքի ավագանու 30.04.2015թ. N 56-Ն որոշմամբ հաստատվել է որպես շինության՝ աճուրդային կարգով վաճառքի մեկնարկային գին: Համայնքի ավագանու որոշմամբ այդ մեկնարկային գինը փոփոխվել է՝ դառնալով 2,500.0 հազ. դրամ և վաճառվել է 2,625.0 հազ. դրամով:

Համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի 10/2 հասցեի շինությունը /437,23քմ մակերեսով, 0.053765 հա հողատարածքով / «Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ անկախ գնահատողի կողմից գնահատվել է 1,481.0 հազ. դրամ: Համայնքի ավագանու 19.04.2018թ. N 59-Ն որոշումով շինության վաճառքի մեկնարկային գին է սահմանվել 1,000.0 հազ. դրամ և վաճառվել է 1,050.0 հազ. դրամով:

Համայնքապետարանի կողմից համայնքի բյուջեի միջոցների հաշվին 2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն չեն համապատասխանել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Նշված աշխատանքները անմիջականորեն չեն իրականացրել համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը:

Համայնքի ավագանին 2017-2018թթ. համար չի հաստատել համայնքի սանիտարական մաքրմանը վերաբերող ամբողջական սխեման, առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով:

Համայնքում օգտահանման ենթակա թափոնների տեսակավորում չի կատարվել /բացառությամբ պլաստիկ շշերի/, առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, սպառման թափոնների

գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգենիկ պահանջների թիվ 2.1.7.002-09 սանիտարական կանոնների և նորմերի թիվ 11-րդ, 21-րդ, 19-րդ, 22-րդ, 34-8-րդ և 35-րդ կետերի մասով՝ չի պահպանվել փողոցում աղբամանների միջև հեռավորության չափորոշիչը, աղբահավաքման կոնտեյներները չունեն կափարիչներ, աղբատար փոխադրամիջոցների թափքերը չեն ախտահանվում աղբաթափման վայրում, աղբավայրը չունի տնտեսակենցաղային գոտի, աղբավայրի տարածքը շրջապատից մեկուսացված չէ ցանկապատով:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով, համայնքի ավագանին 2017-2018 թթ. համար չի հաստատել համայնքի սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները:

Սանիտարական մաքրմանը բաժին ընկնող տարածքների հաշվարկները թերի կատարելու հետևանքով սանիտարական մաքրման աշխատակիցների միջև աշխատանքների բաշխումը կատարվել է անհավասարաչափ: Կնքված աշխատանքային պայմանագրերում աշխատավարձի չափը բոլորի համար հավասար է և աշխատողներին վճարվել է հավասարաչափ աշխատավարձ:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկին, աղբի հավաքմանը, պահմանը, փոխադրմանը և տեղադրմանը ներկայացվող պահանջների մասով՝ ավտոտեղեկությունները լրացնել են թերություններով՝ չեն նշվել աղբատար մեքենաների փաստացի կատարված երթերի քանակը և տեղափոխված աղբի ծավալների հաշվարկ չի կատարվել:

Աղբավայրի հարթեցման աշխատանքների համար կազմված կատարողական ակտերում նշված աղբի հարթեցման ծավալները լրացվել են ելնելով պայմանագրում նշված ծավալներից՝ առանց լիարժեք հաշվարկների՝ հաշվի չառնելով աղբավայրում տեղադրված աղբի փաստացի ծավալները:

Վարձակալված տրանսպորտային միջոցների պայմանագրերը չեն կնքվել անհրաժեշտությունից ելնելով՝ բացակայում են հաշվարկներ տրանսպորտային միջոցների կատարվելիք աշխատանքների վերաբերյալ, պայմանագրերում չի նշել կատարվելիք աշխատանքի ծավալները և ժամկետները:

2017-2018թթ. ընթացքում համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակներում կանաչապատման աշխատակիցների թվաքանակը հաստատվել է առանց լիարժեք հաշվարկների, իսկ նախահաշիվները կազմվել են հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում փաստացի կատարված ծախսերը:

Կանաչապատման աշխատանքների համար ծառերի, թփերի և ծաղկասածիլների մատակարարման մասով առկա է անհամապատասխանություն պայմանագրով

նախատեսված մատակարարման ժամկետների և փաստացի կազմված փաստաթղթերի հետ, արդյունքում ստացվել է, որ ծառերը, թփերը և ծաղկասածիլները ստացվել են ավելի ուշ, քան կազմած փաստաթղթերի համաձայն դրանք տեղադրվել է համապատասխան վայրերում:

Համայնքապետարանի կողմից 2017-2018թթ. ընթացքում համայնքի թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների ձեռք բերման մասով հաշվեքննությամբ արձանագրվել են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, 25-րդ և 13-րդ հոդվածների մասով՝ գնումը մեկ անձից կատարելը հիմնավորված չէ և տեխնիկական բնութագրերում հստակ չեն նկարագրվել ձեռք բերվող ծառայության պայմանները:

2018թ. օգոստոս ամսին Բյուջետային հիմնարկը՝ փաստաթղթերով դիզեյային վառելիքի բացակայության պայմաններում ցույց է տվել 555 լիտր դիզեյային վառելիքի ծախս:

Համայնքապետարանը բյուջեի միջոցների հաշվին համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործման համար 23.02.2017թ. կնքված պայմանագրով գնումը կատարել է մեկ անձից՝ առանց հիմնավորումների, առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի մասով: Համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործումը 2017-2018թթ. ընթացքում իրականացվել է նույն կազմակերպության կողմից, յուրաքանչյուր տարի ներկայացնելով նույն գնային առաջարկը, այսինքն մեկ կետի շահագործման ծառայության արժեքը կազմել է նույն գումարը, չնայած այն բանին, որ մրցույթին մասնակցել է նաև այլ կազմակերպություն:

2017-2018թթ. ընթացքում ձեռք բերված ապրանքների մասով գնման առարկան Բյուջետային հիմնարկի կողմից բաժանվել է առանձին չափաբաժինների մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթների վերաբերյալ:

Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1260-Ն որոշման հավելված 1-ով սահմանված կարգի 9-րդ, 13-րդ, 15-րդ և 22 -րդ կետերով, որի արդյունքում համայնքապետարանի հաշվապահությունում դրամարկղի վարման գրքում գումարի մուտքագրման և ելքագրման համարակալումը չի առանձնացվել յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից ընդորոշում համարակալումը կատարվել է ոչ ճիշտ, որոշ դեպքերում սխալներով, իսկ վճարման տեղեկագրերով կանխիկ դրամ վճարելիս յուրաքանչյուր ամիս չի փակվել, այլ վճարումները կատարվել են երկուսից երեք ամիսների ընթացքում, և յուրաքանչյուր վճարման տեղեկագրին համապատասխան չի կազմվել դրամարկղի ելքի օրդեր, իսկ դրամարկղի ելքագրման օրդերների գումարները արտացոլվել են թերություններով՝ համապատասխանեցնելով ավագանու որոշմամբ տրված օգնության գումարների հետ:

Առկա է անհամապատասխանություն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի պահանջների հետ, այն է. «Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Ընթացիկ եզրակացության II-րդ բաժնի 31-րդ կետում համայնքապետարանի կողմից 2018թ. ձեռք բերված թվով հինգ հատ ԿԱՄԱՁ մակնիշի ավտոմեքենաների գնման գործընթացում առակա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի պահանջների հետ:

Ընթացիկ եզրակացության II-րդ բաժնի 32-րդ և 35-րդ կետերում նկարագրված համայնքապետարանի ենթակայության կրթական բնագավառի ՀՈԱԿ-ներում 2017-2018թթ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներում առկա են անհամապատասխանություններ <Գնումների մասին> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի հետ: Առկա են անհամապատասխանություններ նաև համայնքի ավագանու 2017թ. հունիսի 5-ի N 68-Ա և 2017թ. դեկտեմբերի 6-ի N 131-Ա որոշումներով հաստատված կրթական ՀՈԱԿ-ների հաստիքացուցակների և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունվարի 26-ի <ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանի պահանջների հետ:

Ընթացիկ եզրակացության II-րդ բաժնի 36-րդ և 37-րդ կետերում նշված ՀՈԱԿ-ների կողմից այցելությունների համար նախատեսված տոմսերը չեն համարակալվել և չեն հաշվառվել /չեն հանդիսանում խիստ հաշվառման փաստաթղթեր/, հետևաբար դրանց վաճառված քանակի և մուտքերի վերաբերյալ կարծիք տալ հնարավոր չէ: Բացի այդ առկա է անհամապատասխանություն նաև Գյումրու «Ա. Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից «BLUTHNER» մակնիշի կոնցերտային ռոյալի ձեռքբերման ընթացակարգի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի հետ/:

Ոչ լիարժեք եզրահանգում

Մեր կարծիքով, բացառությամբ «Ոչ լիարժեք կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների առումով 2017-2018թթ. ընթացքում համայնքապետարանի կողմից համայնքային բյուջեի միջոցների օգտագործումը, բյուջետային մուտքերի ապահովումը և համայնքային սեփականության օգտագործումը բոլոր էական առումներով համապատասխանում է իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական

հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին:

Լևոն Յոլյան՝

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

30 մարտի 2020 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,

Բաղրամյան փող. 19, ք.Երևան, Հայաստան

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Հողի հարկի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հողի հարկի տարեկան հաշվարկային ցուցանիշները, նախատեսվածն ու փաստացի կատարվածը և բյուջե չվճարված գումարները ըստ տարիների և հարկատեսակների ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Հողի հարկ 2017-2018 թթ.

Աղյուսակ-1 /հազ. դրամ

Հարկ վճարող	Տարեկան հաշվարկային ցուցանիշ 01.11.2016 թ. դրությամբ	2017թ.		Ենթակա է վճարման 01.11.2016թ. դրությամբ	Տարեկան հաշվարկային ցուցանիշ 02.11.2017թ. դրությամբ	2018թ.		Ենթակա է վճարման 02.11.2017 թ. դրությամբ
		պլան	փաստ			պլան	փաստ	
Ֆիզիկական անձ	26,691.2	26,753.5	25,910.5	68,094.9	27,678.0	27,756.6	25,307.7	80,627.1
Իրավաբանական անձ	19,451.7	19,451.7	20,186.3	8,992.9	20,192.7	20,192.7	21,151.3	8,583.9
Ընդամենը	46,142.9	46,205.2	46,096.8	77,087.8	47,870.7	47,949.3	46,459.0	89,211.0

Իրավաբանական անձանց 2017- 2018 թթ. հողի հարկի պլանային ցուցանիշը ուղիղ հավասար է համապատասխանաբար նախորդ տարվա (բյուջեների պլանավորման տարվա) հաշվարկային ցուցանիշին: Իրավաբանական անձանց 2017-2018թթ. հողի հարկի պլանային ցուցանիշների մեջ ապառքներից ոչ մի մաս չի չներառվել:

Համայնքի 2017-2018թթ. բյուջեների հողի հարկի բարձր կատարողականը պայմանավորված է համայնքապետարանի կողմից տարեկան բյուջեների ոչ լիարժեք պլանավորմամբ և իրական ապառքների գումարները նախատեսված պլաններում չներառմամբ, համայնքապետարանը չի բավարարել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) կետի պահանջը, այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի

կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ»:

Հեղևանք

Ունենալով հողի հարկի բյուջե վճարման ենթակա գումար 01.11.2016թ. դրությամբ՝ 77,087.8 հազ. դրամ և 02.11.2017թ. դրությամբ՝ 89,211.0 հազ. դրամ ու տարեկան հաշվարկային ցուցանիշ 01.11.2016թ. դրությամբ՝ 46,142.9 հազ. դրամ և 02.11.2017թ. դրությամբ՝ 47,870.7 հազ. դրամ, հողի հարկը պլանավորել են՝ 2017թ.՝ 46,205.2 հազ. դրամ և 2018թ.՝ 47,949.3 հազ. դրամ, այսինքն տարեկան հաշվարկայինից ավել են պլանավորել ընդամենը 2017թ.՝ 62.3 հազ. դրամ և 2018թ.՝ 78.6 հազ. դրամ: Մասնավորապես՝ իրավաբանական անձանց 2017-2018թ.հողի հարկի պլանային ցուցանիշը ուղիղ հավասար է համապատասխանաբար նախորդ տարվա (բյուջեների պլանավորման տարվա) հաշվարկային ցուցանիշին: Իրավաբանական անձանց 2017-2018թ.հողի հարկի պլանային ցուցանիշների մեջ ապառքներից ոչ մի մաս չի չներառվել:

Առաջարկ

Համայնքի բյուջեի հողի հարկը պլանավորելիս առաջնորդվել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) կետի պահանջը, 7-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով ապառքները և տարեկան հաշվարկային ցուցանիշները:

Համայնքապետարանի դիրքորոշումը

2017թ. և 2018թ. բյուջեները պլանավորելիս ուսումնասիրվել են նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, կատարվել է հողի հարկի ապառքների և գերավճարների վերլուծություն, նպատակ ունենալով առանձնացնել հավաքագրման տեսակետից պարզաբանման ենթակա, վիճահարույց ապառքները, որոնք ենթակա են ճշգրտման, պարզաբանման և վերանայման, բյուջեի տվյալ եկամտային հոդվածի պլանավորումը հնարավորինս իրատեսական կատարելու համար:

2017թ. տարեկան հաշվարկային ցուցանիշների համար հիմք հանդիսացող 01.11.2016թ. բազայով հողի հարկի գծով ապառքը կազմել է 53698.8 հազ. դրամ, որից.

5309.4 հազ. դրամը պայմանավորված է հարկային տեսչությունից համայնքներին հողի հարկի բազաները փոխանցելու ժամանակ այն հողամասերի առկայությամբ, որոնց 1հա-ի կադաստրային արժեքը նշված է եղել 50000 դրամ, իսկ մակերեսները սխալ: Նշված հողամասերի առկայության, կարգավիճակի, կադաստրային արժեքների և մակերեսների վերաբերյալ տվյալների ճշգրտման աշխատանքը կրում է անընդհատ բնույթ և ապառքի գումարը ենթակա է ճշգրտման և նվազման:

Հողի հարկի գծով ապառքների զգալի մասը՝ 32,876.0 հազ. դրամ, 1990-ականների սկզբներին սեփականության իրավունքով տրամադրված այն հողամասերի ապառքներն են, որոնց սեփականատերերը մահացած են և հաշվառող մարմնում ժառանգության իրավունքի հիման վրա որևէ մեկին սեփականության իրավունքը փոխանցված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Գյումրի համայնքից երկար տարիներ բացակայողներին ապառքների վերաբերյալ պատշաճ ծանուցելը գրեթե անհնար է, ինչպես նաև 6,862.3 հազ. դրամ գերավճարի առկայությունը, հողի հարկը պլանավորվել է հիմնվելով հավաքագրման համար իրատեսական թվերի վրա:

2018թ. տարեկան հաշվարկային ցուցանիշների համար հիմք հանդիսացող 02.11.2017թ. բազայով հողի հարկի գծով ապառքը կազմել է 65,198.1 հազ. դրամ, որից.

3,861.6 հազ. դրամը պայմանավորված է հարկային տեսչությունից համայնքներին հողի հարկի բազաները փոխանցելու ժամանակ այն հողամասերի առկայությամբ, որոնց 1հա-ի կադաստրային արժեքը նշված է եղել 50000 դրամ, իսկ մակերեսները սխալ: Նշված հողամասերի առկայության,

կարգավիճակի, կադաստրային արժեքների և մակերեսների վերաբերյալ տվյալների ճշգրտման աշխատանքը կրում է անընդհատ բնույթ և ապառքի գումարը ենթակա է ճշգրտման և նվազման:

Հողի հարկի գծով ապառքների զգալի մասը՝ 38,427.6 հազ. դրամ, 1990-ականների սկզբներին սեփականության իրավունքով տրամադրված այն հողամասերի ապառքներն են, որոնց սեփականատերերը մահացած են և հաշվառող մարմնում ժառանգության իրավունքի հիման վրա որևէ մեկին սեփականության իրավունքը փոխանցված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Գյումրի համայնքից երկար տարիներ բացակայողներին ապառքների վերաբերյալ պատշաճ ծանուցելը գրեթե անհնար է, ինչպես նաև 6,225.0 հազ. դրամ գերավճարի առկայությունը, հողի հարկը պլանավորվել է հիմնվելով հավաքագրման համար իրատեսական թվերի վրա: Հողի հարկի գծով ապառքների պարզաբանման, ճշգրտման և գանձման գործընթացը կրում է ամենօրյա բնույթ և իր մեջ ներառում է բազաների ճշգրտում, նախազգուշացումների և ծանուցումների ուղարկում, վարչական վարույթներ, դատական հայցեր, բռնագանձման պահանջներ, ինչով պայմանավորված վերոգրյալ պարզաբանումներում արտացոլված թվերը ժամանակի ընթացքում կարող են ենթարկվել փոփոխությունների:

2. Հողի հարկի կադաստրի պետական կոմիտեի բազայի և համայնքի համեմատություն

Անհամապատասխանություն

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 01.07.2019թ. համայնքի հողամասերի և դրանց գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ձևով տրամադրվել է համայնքապետարանին, որի ճշտման որոշակի աշխատանքներ համայնքապետարանի կողմից արվել են, սակայն հաշվեքննության ընթացքում կատարվել է 2017-2018թթ. համայնքի հողի հարկի բազայում առկա՝ հարկատուների թվի, հողամասների մակերեսների, հողակտորների թվի և հողի հարկերի համեմատական անշարժ գույքի կադաստրի բազաների հետ և որը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Համայնքի 2017-2018թթ. հողակտորների քանակների, մակերեսների և հողի հարկի վերաբերյալ

Աղյուսակ-2

2017թ.-ի	Կադաստր			Համայնքապետարան			Տարբերություն		
	քանակ	մակերես (հա)	հողի հարկ (հազ. դրամ)	քանակ	մակերես (հա)	հողի հարկ(հա զ. դրամ)	քանակ	մակերես (հա)	հողի հարկ(հա զ. դրամ)
Ֆիզիկական անձանց պատկանող հողակտորներ	16078	509.88	25477.98	21199	845.21	27762.92	5121	335.33	2284.94

Կազմակերպություններին պատկանող հողակտորներ, որից	505	264.68	13225.79	505	264.68	13572.26	0	0	346.47
լուծարվածներին և սնանկներին պատկանող հողակտորներ	29	57.44	2870.22	29	57.44	2870.22	0	0	0
հաշվետվություն չներկայացրածների և պատկանող հողակտորներ	11	3.24	161.90	11	3.24	161.90	0	0	0
Կազմակերպություններ, որից	266	264.68	13225.79	266	264.68	13572.26	0	0	346.47
լուծարվածներ և սնանկներ	18	57.44	2870.22	18	57.44	2870.22	0	0	0
հաշվետվություն չներկայացրածներ	8	3.24	161.90	8	3.24	161.90	0	0	0
Ընդամենը հողակտորներ	16583	774.56	38703.77	21704	1109.89	41335.18	5121	335.33	2631.41
2018թ.-ի	Կադաստր			Համայնքապետարան			Տարբերություն		
	քանակ	մակերես (հա)	հողի հարկ (հազ. դրամ)	քանակ	մակերես (հա)	հողի հարկ (հազ. դրամ)	քանակ	մակերես (հա)	հողի հարկ (հազ. դրամ)
Ֆիզիկական անձանց պատկանող հողակտորներ	17065	543.53	27159.68	21540	856.69	28138.63	4475	313.16	978.95
Կազմակերպություններին պատկանող հողակտորներ, որից	546	269.48	13465.65	546	269.48	13881.32	0	0	415.67
լուծարվածներին և սնանկներին պատկանող հողակտորներ	35	56.73	2834.74	35	56.73	2834.74	0	0	0
հաշվետվություն չներկայացրածների և պատկանող հողակտորներ	14	3.81	190.38	14	3.81	190.38	0	0	0
Կազմակերպություններ, որից	270	269.48	13465.65	270	269.48	13881.32	0	0	415.67
լուծարվածներ և սնանկներ	16	56.73	2834.74	16	56.73	2834.74	0	0	0
հաշվետվություն չներկայացրածներ	10	3.81	190.38	10	3.81	190.38	0	0	0
Ընդամենը հողակտորներ	17611	813.01	40625.3	22086	1126.17	42019.95	4475	313.16	1394.62
Պարզվել է, որ ֆիզիկական անձանց պատկանող հողակտորների քանակների տարբերությունները պայմանավորված է									

դեռևս հարկային տեսչությունից հողի հարկի բազաները համայնքապետարանին փոխանցելու ընթացքում ավելի հողամասերի առկայությամբ՝ որոնց 1հա-ի կադաստրային արժեքը հողի հարկի բազայում նշված է եղել 50,0 հազ. դրամ, հողակտորների մակերեսների սխալ տվյալների առկայությամբ, ինչպես նաև ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողատարածքների յուրաքանչյուր բաժնեմաս որպես առնձին միավոր հաշվառելու հանգամանքով, իսկ կազմակերպությունների հողի հարկի չափի տարբերությունները պայմանավորված է հիմնականում տվյալ տարվա ընթացքում հողակտորների օտարման և ձեռք բերման հետ:

Համաձայն անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող (չհարկվող) հողակտորների քանակը կազմել է 1556, իսկ մակերեսը՝ 1699.99 հա: Օգտագործման իրավունքով 2017-2018 թթ.տրված է եղել 8 կազմակերպությունների 12 հողակտոր, որից մեկ կազմակերպությունը 0.37 հա հողակտորով սնանկ է, իսկ 7 կազմակերպության 11 հողակտորի ընդհանուր մակերեսը կազմել է 193.17 հա 9,652.5 հազ. դրամ հարկի գումարով:

Հետևանք

Հաշվեքննության ընթացքում ֆիզիկական անձանց հողի հարկի 2017-2018թթ. բազաներում հայտնաբերված անճշտությունների օրինակները (Համայնքի հողի հարկի բազայում չհաշվառված հողակտորներ, համայնքի հողի հարկի բազայում անվանափոխություն չկատարած հողակտորներ) ներկայացվում է աղյուսակի տեսքով. (Հավելվածներ 1-4)

Առաջարկ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ կատարել համայնքի հողի հարկի բազայի ճշտումներ, հայտնաբերել և գրանցել չհաշվառված հողակտորները, կատարել անվանափոխություններ:

3.Իրավաբանական անձանց հողի հարկ

Անհամապատասխանություն

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 01.07.2019թ. ներկայացված համայնքի հողամասերի հաշվառման և գնահատման տվյալների ու համայնքապետարանի իրավաբանական անձանց հողի հարկի 2017-2018թթ. բազաների համեմատման արդյունքում պարզվել է որ, չբավարարելով «Հողի հարկի» մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը, որոշ կազմակերպություններ 2017-2018թթ. ընթացքում համայնքապետարան չեն ներկայացրել հողի հարկի կիսամյակային հաշվետվություններ և դուրս են մնացել համայնքի հողի հարկի բազայից չդառնալով համայնքի եկամուտի աղբյուր, որոնց հողի հարկի պարտավորությունները 01.01.2017թ. սկսած ներկայացվում է աղյուսակի տեսքով.

**2017-2018թթ. ընթացքում բնակավայրերի հողի հարկի հաշվետվություններ չներկայացրած
իրավաբանական անձանց հողի հարկի հաշվարկ**

Աղյուսակ-3 /հազ. դրամ/								
Հ/Հ	Հարկ վճարողի անվանումը	Հողամասի մակերեսը (հա)	Տարեկան Հարկի Գումարը/ Հաշվետվ. չներկայ. ժամկետի հարկը	Հաշվետվ. ութ. չներ. ժամկետի տույժը 01.12. 2019թ. դրությ.	Հաշվետ. չներկայ. ժամկետի տուգանք 01.12. 2019թ. դրությ.	Վճարումը 01.01. 2017թ.-ից 01.12. 2019թ./ Վճարումը 01.01. 2017թ.- 31.12. 2018թ. դրությ.	Վճարման ենթակա գումարը 01.12. 2019թ. դրությ./ Վճարման ենթակա գումարը 01.01. 2017թ.-ից 01.12. 2019թ. դրությ.	Հաշվարկը չներկայ. ժամկետը: Հաշվարկի ներկայաց. ամսաթիվը
1	“Նարեկ-Դիոնիս” ՍՊԸ	0.456165	22.8 /45.6/	17.2	34.8	57.0 /0/	168.9 /70.6/	2017թ. 1-ին, 2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ: Հաշվարկները ներկայաց. է 01.04.2019թ
2	“Շիրակ կոմբինատ” ԲԲԸ	0.247752	12.4 /24.8/			0		
	“Շիրակ կոմբինատ” ԲԲԸ	0.261952	13.1 /26.2/			0		
	“Շիրակ կոմբինատ” ԲԲԸ	0.025495	1.3 /2.5/			0		
	Ընդամենը Շիրակ կոմբինատ ԲԲԸ	0.535199	26.7 /53.5/	20.2	23.4	0	278.2 /97.1/	2017թ. 1-ին, 2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ: Հաշվարկները ներկայաց. է 22.05.2019
3	“Գյումրի կահույք” ԲԲԸ	2.0537	102.6 /205.2/	77.5	205.2	0	2460.2 /488.0/	2ի ներկայ. 2011թ. 2-րդ կիսամյակից ԴԱՀԿ-ում է
4	“Լյուքս-96” ՍՊԸ	0.0096	0.5 /1.0/	0.3	0.8	4.0 /0/	-1.0 /2.1/	2017թ. 1-ին, 2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ:

								Հաշվարկները ներկայաց. է 17.06.2019թ
5	“Առյա թեքս”ՍՊԸ	0.01690 8	0.8 /1.7/	0.6	1.7	0	8.6 /4.0/	Չի ներկայ. 2014թ. 2-րդ կիսամյակից
6	“Առևտրի կենտրոն”Ս ՊԸ	0.1046	5.2 /10.5/					
	“Առևտրի կենտրոն”Ս ՊԸ	0.0129	0.6 /1.3/					
	Ընդամենը “Առևտրի կենտրոն”Ս ՊԸ	0.11754	5.8 /11.8/	1.8	7.0	35.2 /29.7/	-3.0 /-9.0/	2017թ. 1-ին, 2- րդ, 2018թ. 1- ին, 2-րդ կիսամյակ: Հաշվարկները ներկայաց. է 27.02.2019
7	Օրինաց երկիր կուսակցությ ուն	0.04	2.0 /3.0/	0.6	1.8	30.9 /28.6/	-1.1 /0.2/	2017թ. 1-ին, 2- րդ, 2018թ. 1- ին կիսամյակ: Հաշվարկները ներկայաց. է 29.08.2018
8	“Մուսալեռ- 97” ՍՊԸ	0.008	0.4 /0.8/	0	0	0	-13.8 /-14.0/	2017թ. 1-ին, 2- րդ, 2018թ. 1- ին, 2-րդ կիսամյակ: Հաշվարկները ներկայաց. է 04.03.2019
9	“Արմենիե” ՀՄԴ	0.0340 82	1.7 /0.4/	0.07	0.2	4.0 /0/	-1.3 /0.7/	2018թ. 1-ին կիսամյակ: Հաշվարկները ներկայաց. է 22.02.2019թ
10	“Կահույք» ՓԲԸ	0.37776 4	18.9 /9.4/					
	“Կահույք» ՓԲԸ	0.15614	7.8 /3.9/					
	Ընդամենը “Կահույք» ՓԲԸ	0.5339 04	26.7 /13.3/	3.1	13.3	63.2 /63.2	89.8 /29.8/	Չի ներկայացր. 2018թ. 2-րդ կիսամյակից

	Ընդամենը	3.80 5098	190.1 /336.3/	121.5	288.3	194.3 /121.5/	3005.9 - 20.3 /692.5 - 23.1/	
--	----------	--------------	------------------	-------	-------	------------------	---------------------------------------	--

Հետևանք

Համայնքի հողի հարկի բազայից դուրս մնացած կազմակերպությունների կողմից նախորդ տարիներից կուտակված, համայնքի բյուջե վճարման ենթակա գումարը 01.12.2019թ-ի դրությամբ կազմել է՝ 3,005.9 հազ. դրամ, իսկ 2017-թթ. այն կազմել է՝ 692.5 հազ. դրամ:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ՝ 2017-2018թթ. ընթացքում համայնքապետարան հողի հարկի կիսամյակային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպություններին հողի հարկի բազայում ներառելու և առաջացած հողի հարկի պարտավորությունները մարելու ուղղությամբ:

4. Գույքահարկի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Գույքահարկի տարեկան հաշվարկային ցուցանիշները, նախատեսվածն ու փաստացի կատարվածը և բյուջե չվճարված գումարները ըստ տարիների և հարկատեսակների ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Գույքահարկ 017-2018թթ.

Աղյուսակ-4 /հազ. դրամ/

Հարկ վճարող	Տարեկան հաշվարկային ցուցանիշ 01.11.2016 թ. դրությամբ	2017թ.		Ենթակա է վճարման 01.11.2016 թ. դրությամբ	Տարեկան հաշվարկային ցուցանիշ 02.11.2017 թ. դրությամբ	2018թ.		Ենթակա է վճարման 02.11.2017 թ. դրությամբ
		պլան	փաստ			պլան	փաստ	
Ֆիզիկական անձ	418,644.6	471,316.5	457,904.5	589,511.3	442,699.8	496,961.0	465,178.7	658,441.3
Իրավաբանական անձ	43,086.7	43,086.7	44,833.1	56,172.6	42,057.9	42,063.2	45,928.5	55,017.2
Ընդամենը	461,731.3	514,403.2	502,737.6	645,683.9	484,757.7	539,024.2	511,107.2	713,458.5

Համայնքի 2017-2018 թթ. բյուջեների գույքահարկի բարձր կատարողականը պայմանավորված է համայնքապետարանի կողմից տարեկան բյուջեների ոչ լիարժեք պլանավորմամբ և իրական ապառքների գումարները նախատեսված պլաններում չներառմամբ, համայնքապետարանը չի բավարարել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) կետի պահանջը այն է՝ «Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը ներառում է պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ»:

Հեղևանք

Համայնքի իրավաբանական անձանց 2017թ. գույքահարկի պլանային ցուցանիշը ուղիղ հավասար է նախորդ տարվա (բյուջեների պլանավորման տարվա) հաշվարկային ցուցանիշին՝ 43,086.7 հազ. դրամ է, պլանային ցուցանիշի մեջ ապառքներից ոչ մի մաս չի ներառվել, իսկ փաստացին կազմել է՝ 104.1%, կամ 44,833.1 հազ. դրամ: Իրավաբանական անձանց 2018թ. գույքահարկը տարեկան հաշվարկայինից ավել են պլանավորել ընդամենը 5,3 հազ. դրամ:

Առաջարկ

Համայնքի բյուջեի գույքահարկը պլանավորելիս առաջնորդվել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի ե) կետի պահանջներով, հաշվի առնելով ապառքները և տարեկան հաշվարկային ցուցանիշները:

Համայնքապետարանի դիրքորոշումը

2017թ. և 2018թ. բյուջեները պլանավորելիս ուսումնասիրվել են նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, կատարվել է գույքահարկի ապառքների և գերավճարների վերլուծություն, նպատակ ունենալով առանձնացնել հավաքագրման տեսակետից պարզաբանման ենթակա, վիճահարույց ապառքները, որոնք ենթակա են ճշգրտման, պարզաբանման և վերանայման, բյուջեի տվյալ եկամտային հոդվածների պլանավորումը հնարավորինս իրատեսական կատարելու համար: 2017թ. տարեկան հաշվարկային ցուցանիշների համար հիմք հանդիսացող 01.11.2016թ. բազայով գույքահարկի գծով ապառքը կազմել է 369483.7 հազ. դրամ, որից.

ՀՀ կառավարության 25.06.2015թ. 708-Ա որոշմամբ 31.12.2010թ. դրությամբ խոտանված փոխադրամիջոցների ցանկում ներառված փոխադրամիջոցների 2008-2010թթ. ապառքը կազմում է 25685.8 հազ. դրամ, որը ենթակա է վերանայման:

Բազայում առկա են զգալի քանակությամբ փոխադրամիջոցներ, որոնք 01.01.2011թ.-ից հետո չեն շահագործվել, խոտանման ենթակա են կամ գոյություն չունեն, սակայն ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության համապատասխան ստորաբաժանման կողմից չեն ներառվել ՀՀ կառավարության 25.06.2015թ. 708-Ա որոշմամբ 31.12.2010թ. դրությամբ խոտանված փոխադրամիջոցների ցանկում, հաշվառումից ժամանակավոր հանված լինելու պատճառաբանությամբ, ինչը տվյալ որոշման մեջ նշված չէ: Կարծում ենք տվյալ կատեգորիայի փոխադրամիջոցները ևս պետք է ներառվեն վերը նշված որոշմամբ խոտանված համարվող

փոխադրամիջոցների ցանկում, որոնց ապառքը կազմում է 96243.2 հազ. դրամ և ենթակա է վերանայման:

Բազայում առկա են որոշ քանակությամբ փոխադրամիջոցներ, որոնք հաշվառումից հանվել են և հաշվառվել այլ համայնքներ մինչև 31.12.2013թ., սակայն տեխնիկական վրիպակների պատճառով 10659.4 հազ. դրամի չափով ապառքները չեն փոխանցվել գնորդին, համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող “Գույքահարկի մասի” ՀՀ օրենքի: Համապատասխան ճշգրտման գործընթացը կրում է անընդհատ բնույթ և վերը նշված ապառքները էականորեն կնվազեն:

Բազայում առկա են զգալի քանակությամբ փոխադրամիջոցներ, որոնք.

շահագործման ենթակա չեն կամ գոյություն չունեն և ենթակա են հաշվառումից հանելու խոտանման պատճառով, սակայն սեփականատերերը թյուրիմացաբար հաշվառումից հանել են ժամանակավոր, ինչի հետևանքով առաջացել են գույքահարկի գծով ապառքներ, որպես սեփականություն հաշվառված են մահացած անձանց անունով և հաշվառող մարմնում ժառանգության իրավունքի հիման վրա որևէ մեկին սեփականության իրավունքը փոխանցված չէ, հաշվառվել են այլ երկրներում՝ հիմնականում ՌԴ-ում, սակայն ՀՀ ՃՈ շտեմարանից հաշվառումից չեն հանվել:

Վերը նշված կատեգորիայի փոխադրամիջոցների ապառքը կազմում է 87312.4 հազ. դրամ:

Բազայում առկա են որոշ քանակությամբ շինություններ, որոնք օտարվել են, սակայն տեխնիկական վրիպակների պատճառով 2808.2 հազ. դրամի չափով ապառքները չեն փոխանցվել գնորդին, համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող “Գույքահարկի մասի” ՀՀ օրենքի: Համապատասխան ճշգրտման գործընթացը կրում է անընդհատ բնույթ և վերը նշված ապառքները էականորեն կնվազեն:

Վերագրյալով պայմանավորված գույքահարկի գծով հավաքագրման տեսակետից պարզաբանման ենթակա, վիճահարույց ապառքները կազմում են 222709.0 հազ. դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյումրի համայնքից երկար տարիներ բացակայողներին ապառքների վերաբերյալ պատշաճ ծանուցելը գրեթե անհնար է, ինչպես նաև 43775.5 հազ. դրամ գերավճարի առկայությունը, գույքահարկի մասով ապառքները պլանավորվել են 34314.8 հազ. դրամի չափով, ինչը հիմնված է հավաքագրման համար իրատեսական թվերի վրա:

2018թ. տարեկան հաշվարկային ցուցանիշների համար հիմք հանդիսացող 02.11.2017թ. բազայով գույքահարկի գծով ապառքը կազմել է 436263.5 հազ. դրամ, որից.

ՀՀ կառավարության 25.06.2015թ. 708-Ա որոշմամբ 31.12.2010թ. դրությամբ խոտանված փոխադրամիջոցների ցանկում ներառված փոխադրամիջոցների 2008-10թթ. ապառքը կազմում է 25441.0 հազ. դրամ, որը ենթակա է վերանայման:

Բազայում առկա են զգալի քանակությամբ փոխադրամիջոցներ, որոնք չեն շահագործվել 01.01.2011թ.-ից հետո, խոտանման ենթակա են կամ գոյություն չունեն, սակայն ՀՀ ոստիկանության “Ճանապարհային ոստիկանություն” ծառայության համապատասխան ստորաբաժանման կողմից չեն ներառվել ՀՀ կառավարության 25.06.2015թ. 708-Ա որոշմամբ 31.12.2010թ. դրությամբ խոտանված փոխադրամիջոցների ցանկում, հաշվառումից ժամանակավոր հանված լինելու պատճառաբանությամբ, ինչը տվյալ որոշման մեջ նշված չէ: Կարծում ենք տվյալ կատեգորիայի փոխադրամիջոցները ևս պետք է ներառվեն վերը նշված որոշմամբ խոտանված համարվող փոխադրամիջոցների ցանկում, որոնց ապառքը կազմում է 104576.3 հազ. դրամ և ենթակա է վերանայման:

Բազայում առկա են որոշ քանակությամբ փոխադրամիջոցներ, որոնք հաշվառումից հանվել են և հաշվառվել այլ համայնքներ մինչև 31.12.2013թ., սակայն տեխնիկական վրիպակների պատճառով 10412.7 հազ. դրամի չափով ապառքները չեն փոխանցվել գնորդին, համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող “Գույքահարկի մասի” ՀՀ օրենքի: Համապատասխան ճշգրտման գործընթացը կրում է անընդհատ բնույթ և վերը նշված ապառքները էականորեն կնվազեն:

Բազայում առկա են զգալի քանակությամբ փոխադրամիջոցներ, որոնք.

շահագործման ենթակա չեն կամ գոյություն չունեն և ենթակա են հաշվառումից հանելու խոտանման պատճառով, սակայն սեփականատերերը թյուրիմացաբար հաշվառումից հանել են ժամանակավոր, ինչի հետևանքով առաջացել են գույքահարկի գծով ապառքներ, որպես սեփականություն հաշվառված են մահացած անձանց անունով և հաշվառող մարմնում ժառանգության իրավունքի հիման վրա որևէ մեկին սեփականության իրավունքը փոխանցված չէ, հաշվառվել են այլ երկրներում հիմնականում ՌԴ-ում, սակայն ՀՀ ՃՈ շտեմարանից հաշվառումից չեն հանվել:

Վերը նշված կատեգորիայի փոխադրամիջոցների ապառքը կազմում է 97387.0 հազ. դրամ:

Բազայում առկա են որոշ քանակությամբ շինություններ, որոնք օտարվել են, սակայն տեխնիկական վրիպակների պատճառով 2697.4 հազ. դրամի չափով ապառքները չեն փոխանցվել գնորդին, համաձայն տվյալ ժամանակահատվածում գործող “Գույքահարկի մասի” ՀՀ օրենքի: Համապատասխան ճշգրտման գործընթացը կրում է անընդհատ բնույթ և վերը նշված ապառքները էականորեն կնվազեն:

Վերոգրյալով պայմանավորված գույքահարկի գծով հավաքագրման տեսակետից պարզաբանման ենթակա, վիճահարույց ապառքները կազմում են 240514.4 հազ. դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյումրի համայնքից երկար տարիներ բացակայողներին ապառքների վերաբերյալ պատշաճ ծանուցելը գրեթե անհնար է, ինչպես նաև 46211.3 հազ. դրամ գերավճարի առկայությունը, գույքահարկի մասով ապառքները պլանավորվել են 25502.2 հազ. դրամի չափով, ինչը հիմնված է հավաքագրման համար իրատեսական թվերի վրա:

Գույքահարկի գծով ապառքների պարզաբանման, ճշգրտման և գանձման գործընթացը կրում է ամենօրյա բնույթ և իր մեջ ներառում է բազաների ճշգրտում, նախազգուշացումների և ծանուցումների ուղարկում, վարչական վարույթներ, դատական հայցեր, բռնագանձման պահանջներ, ինչով պայմանավորված վերոգրյալ պարզաբանումներում արտացոլված թվերը ժամանակի ընթացքում կարող են ենթարկվել փոփոխությունների:

Հայտնում եմ նաև, որ 2017-18թթ. ուղարկվել են գույքահարկի և հողի հարկի գծով թվով 1567 նախազգուշացում, որի արդյունքում վճարվել է 9185.1 հազ. դրամ:

Իրավաբանական բաժին է ուղարկվել 284 գործ 74993.4 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից ուղարկվել է ԴԱՀԿ թվով 71 գործ՝ 20418.7 հազ. դրամ ընդհանուր գումարով, ներկայացվել է թվով 5 սնանկության պահանջ 1237.9 հազ. դրամ ընդհանուր գումարով, թվով 73 գործից գանձվել է 15138.4 հազ. դրամ:

5. Գույքահարկի կադաստրի պետական կոմիտեի բազայի և համայնքի բազայի համեմատություն

Անհամապատասխանություն

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 01.07.2019թ. համայնքի շենք- շինությունների և դրանց գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ձևով տրամադրվել է համայնքապետարանին, որի ճշտման որոշակի աշխատանքներ համայնքապետարանի կողմից արվել են, սակայն հաշվեքննության ընթացքում կատարվել է 2017-2018թթ. համայնքի գույքահարկի բազայում առկա ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատկանող շինությունների թվի, կազմակերպությունների թվի համեմատական, անշարժ գույքի կադաստրի բազաների հետ և որը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Համայնքի 2017-2018թթ. շինությունների քանակների վերաբերյալ

Աղյուսակ-5

2017թ.	Կադաստր	Համայնքապետարան	Տարբերություն
	քանակ (01.07.2019թ. բազայով)	քանակ	քանակ
Ֆիզիկական անձանց պատկանող շինություններ, որից	32591	27971	-4620
Մինչև 3 մլն դրամ կադաստրային արժեքով, չհարկվող շինություններ	25674	16628	-9046
Հարկվող շինություններ	6917	11343	4426
Կազմակերպություններին պատկանող շինություններ, որից	873	873	0
լուծարվածներին և սնանկներին պատկանող շինություններ	39	39	0
հաշվետվություն չներկայացրածներին պատկանող շինություններ	11	11	0
Կազմակերպություններ, որից	371	371	0
լուծարվածներ և սնանկներ	25	25	0
հաշվետվություն չներկայացրածներ	10	10	0
Ընդամենը շինություններ	33464	28844	-4620
2018թ.	Կադաստր	Համայնքապետարան	Տարբերություն
	քանակ (01.07.2019թ. բազայով)	քանակ	քանակ
Ֆիզիկական անձանց պատկանող շինություններ	34455	28372	-6083
Մինչև 3 մլն դրամ կադաստրային արժեքով, չհարկվող շինություններ	27060	16998	-10062
Հարկվող շինություններ	7395	11374	3979
Կազմակերպություններին պատկանող շինություններ, որից	930	930	0
լուծարվածներին և սնանկներին պատկանող շինություններ	40	40	0
հաշվետվություն չներկայացրածներին պատկանող շինություններ	9	9	0
Կազմակերպություններ, որից	359	359	0
լուծարվածներ և սնանկներ	23	23	0
հաշվետվություն չներկայացրածներ	8	8	0
Ընդամենը շինություններ	35385	29302	-6083

Ֆիզիկական անձանց պատկանող շինությունների քանակային տարբերությունը համայնքի և կադաստրի բազաների միջև հիմնականում պայմանավորված է մինչև 3 մլն դրամ

կադաստրային արժեքով, այսինքն չհարկվող անհատական տների և բնակարանների որոշ մասի համայնքապետարանի բազայում մուտքագրված չլինելով, ինչպես նաև 01.07.2019թ. կադաստրի տվյալներով չհարկվող դարձած, սակայն 2017-2018 թթ. դեռ հարկվող անհատական տների և բնակարանների առկայությամբ:

Հետևանք

Հաշվեքննության ընթացքում, ընտրանքային կարգով ֆիզիկական անձանց շինությունների գույքահարկի 2017-2018թթ. բազաներում հայտնաբերված անճշտությունների օրինակները (Համայնքի գույքահարկի բազայում չհաշվառված շինություններ, անվանափոխություն չկատարած շինություններ, իրական արժեքից պակաս հաշվառված շինություններ) ներկայացվում է աղյուսակի տեսքով.(Հավելվածներ 5-10):

Անշարժ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ կատարել համայնքի գույքահարկի բազայի ճշտումներ, հայտնաբերել և գրանցել չհաշվառված շինությունները, կատարել անվանափոխություններ և ճշտել շինությունների իրական կադաստրային արժեքները:

6. Իրավաբանական անձանց գույքահարկ

Անհամապատասխանություն

Համայնքի գույքահարկի բազայից դուրս մնացած կազմակերպությունների կողմից նախորդ տարիներից կուտակված համայնքի բյուջե վճարման ենթակա գումարը ընդհանուր կազմել է 01.12.2019թ.-ի դրությամբ՝ 8,772.4 հազ. դրամ, իսկ 2017-2018թթ.-ին այն կազմել է՝ 1,735.9 հազ. դրամ:

Համայնքի գույքահարկի բազայի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 01.07.2019թ. ներկայացված համայնքի գույքահարկով հարկվող անշարժ գույքի հաշվառման և գնահատման տվյալների համադրման արդյունքում պարզվել է որ, չբավարարելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը, որոշ կազմակերպություններ 2017-2018 թթ. համայնքապետարան չեն

ներկայացրել կիսամյակային հաշվետվություններ և համայնքի գույքահարկի բազայից դուրս են մնացել, որոնց գույքահարկի պարտավորությունները ներկայացվում է աղյուսակի տեսքով.

**2017-2018թթ. ընթացքում գույքահարկի հաշվետվություններ չներկայացրած
իրավաբանական անձանց գույքահարկի հաշվարկ**

Աղյուսակ-6/հազ.դրամ/

Հ/Հ	Հարկ վճարողի անվանումը	Շինության տեսակը կամ փոխադրամիջոցը	Տարեկան Հարկի Գումարը/ Հաշվետվչ ներկ. ժամկետի հարկը	Հաշվետվութ. Չներկ. ժամկետի տույժը 01.12. 2019թ.	Հաշվետ. չներկ. ժամկետի տուգանքը 0.1.12. 2019թ. դրությ.	Վճարումը 01.01. 2017թ-ից 01.12. 2019թ.դր./ Վճարումը 01.01.2017 թ- 31.12.2018 դրությամբ	Վճարման ենթակա գումար 01.12. 2019թ./ Վճարման ենթակա գումարը 01.01. 2017թ.- 01.12. 2019թ.	Հաշվարկը չներկայ. ժամկետը, Հաշվարկի ներկայացման ժամկետը
1	“Լյուքս 96” ՍՊԸ	Վարսավիրանոց	7.5 /14.9/	4.9	12.9	45.0 /0/	37.7 /32.7/	2017թ.1-ին,2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացվել է 17.06.2019թ.
2	“Սեկո”ՍՊԸ	Խանութ	30.4 /60.8/	22.7	44.1	75.0 /0/	150.3 /127.5/	2017թ.1-ին,2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացվել է 18.03.2019թ.
3	“Նարեկ-Դիոնիս” ՍՊԸ	բացվածք	8.9 /17.7/	6.7	13.5	17.9 /0/	66.4 /38.0/	2017թ.1-ին,2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացվել է 01.04.2019թ.
	“Նարեկ-Դիոնիս” ՍՊԸ	շենք	14.0 /28.0/	10.6	21.4	30.0 /0/	110.8 /60.0/	2017թ.1-ին,2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացվել է 01.04.2019թ.
	Ընդամենը Նարեկ-Դիոնիս ՍՊԸ		22.9 /45.8/	17.3	34.9	47.9 /0/	177.2 /98.0/	2017թ.1-ին,2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացվել է 01.04.2019թ.
4	“Շիրակ կոմբինատ”ԲԲԸ	ՎԱՋ 21063	6.9 /13.8/	5.2	5.3	0 /0/	116.7 /24.4/	2017թ.1-ին,2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ, Հաշվարկները ներկայացվել է 22.05.2019թ.
5	“Առյա Թեքս” ՍՊԸ	Վերականգնողակ. կենտրոն	39.5 /78.9/	29.8	78.9	0 /0/	490.8 /187.7/	Չի ներկայացրել 2014թ. 2-րդ կիսամյակից

6	“Գյումրի-կահույք” ԲԲԸ	արտադրամաս	69.1 /138.2/	52.2	138.2	0 /0/	1769.9 328.7/	Չի ներկայացրել 2011թ. 2-րդ կիսամյակից ԴԱՀ-ում է
7	“Առևտրի կենտրոն” ՍՊԸ	Առևտրի սրահ	140.8 /281.6/	106.4	281.6	0 /0/	4239.0 /669.5/	Չի ներկայացրել 2008թ.1-ին եռամսյակից ԴԱՀ-ում է
8	“Մուսալեն 97” ՍՊԸ	տաղավար	15.8 /31.5/	11.9	22.5	13.5 /0/	135.2 /65.9/	2017թ.1-ին,2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկը ներկայացրել է 04.03.2019թ.
9	“Ռ.Բադալյան” ՍՊԸ	օբյեկտ	6.2 /2.6/	1.0	2.6	0	6.2 /6.2/	Չի ներկայացրել 2017թ. 1-ին կիսամյակը Շենքը վաճառվել է 05.2017թ.
10	“Նյու Լենոք” ՍՊԸ	բացվածք	6.5 /6.5/	0.1	2.4	47.6 /44.3/	3.0 /-0.5/	2017թ.1-ին,2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացվել է 21.02.2018թ.
11	Գյումրու վերակա նգնող սպառողական կոոպերատիվ	Բազմաբն. շենք	18.8 /37.5/	14.2	37.5	0 /0/	138.8 /89.3/	Չի ներկայացրել 2009թ. 4-րդ եռամսյակից ԴԱՀ-ում է
12	“Վալման” ՍՊԸ	Գազ 32213	5.0 /6.2/	2.1	6.2	5.0 /5.0/	18.4 /14.5/	Չի ներկայացրել 2017թ. 2-րդ կիսամյակից
13	“Երաշխիք” ՍՊԸ	ԳԱՀ 24	8.5 /17.0/	6.4	17.0	0 /0/	116.6 /40.4/	Չի ներկայացրել 2014թ. 1-ին կիսամյակից
	“Երաշխիք” ՍՊԸ	Վազ 2101	6.9 /13.8/	5.2	13.8	0 /0/	94.6 /32.8/	Չի ներկայացրել 2014թ. 1-ին կիսամյակից
	Ընդամենը Երաշխիք ՍՊԸ		15.4 /30.8/	11.6	30.8	0	211.2 /73.2/	Ընդամենը պարտքը 01.12.2019թ. դրությամբ 281030դրամ է, որից 69836 դրամը շինության գույքահարկի նախկին պարտքն է, որը օտարված է 15.10.2013թ.
14	“Ազա” ՍՊԸ	ԳԱՀ 322132	4.2 /4.2/	1.9	1.9	16.0 /0/	-0.048 /0.75/	
	“Ազա”	ԳԱՀ	4.2	1.9	1.9	16.6	-0.048	

	ՍՊԸ	322132	/4167/			/0/	/0.752/	
	Ընդամենը “Ազա” ՍՊԸ		8.4 /8.4/	3.8	3.8	32.6 /0/	-0.096 /1.5/	2017թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացրել է 05.04.2018թ.
15	“Հովհաննես Գրիգորյան և ընկերներ” ՍՊԸ	Վազ 2101	6.4 /12.8/	3.4	0.5	13.0 /0/	7.0 /10.3/	2017թ.1-ին, 2-րդ, 2018թ. 1-ին, 2-րդ կիսամյակ Հաշվարկները ներկայացրել է 18.03.2019թ.
16	“Սոլիդ ստառ” ՍՊԸ	Ֆորդ-տրանզիտ	5.8 /2.9/	0.7	2.9	0 /0/	22.0 /6.4/	Չի ներկայացրել 2018թ. 2-րդ կիսամյակից
	Ընդամենը		405.2 /773.2/	288.3	705.2	279.6 /49.3/	8772.4 -0.096 /1735.9 -0.565/	

Հետևանք

Համայնքի գույքահարկի բազայից դուրս մնացած կազմակերպությունների կողմից, նախորդ տարիներից կուտակված համայնքի բյուջե վճարման ենթակա գումարը ընդհանուր կազմել է 01.12.2019թ. դրությամբ՝ 8,772.4 հազ. դրամ, իսկ 2017-2018թթ. այն կազմել է՝ 1,735.9 հազ. դրամ:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ՝ 2017-2018թթ. ընթացքում համայնքապետարան գույքահարկի կիսամյակային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպություններին գույքահարկի բազայում ներառելու և առաջացած գույքահարկի պարտավորությունները մարելու ուղղությամբ:

7. Գույքահարկի և հողի հարկի արտոնությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017-2018թթ. ընթացքում համայնքի ավագանու կողմից մեկ իրավաբանական և 13 ֆիզիկական անձանց տրվել են գույքահարկի արտոնություններ 2017թ.՝ 2,327.4 հազ. դրամի, 2018թ.՝ 593.1 հազ. դրամի: Թվով 10 ֆիզիկական անձանց (աղյուսակի 3-13 համարները, բացի 11-րդ-

Քաղաքապետարանը չի բավարարել ՀՀ կառավարության 22.06.2012թ. N 822-Ն որոշմամբ հաստատված «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի պահանջը և 2017-2018 թթ. ընթացքում ընդհանուր՝ 2,196.2 հազ. դրամի գույքահարկի արտոնություններ է տրամադրել փոխադրամիջոցների գծով գույքահարկ վճարողներին:

ից) տրված գույքահարկի արտոնությունների գումարը կազմել է՝ 2017թ.՝ 1,948.5 հազ. դրամ, 2018թ.՝ 247.7 հազ. դրամ, որի տրման անհրաժեշտության հիմնավորումն է՝ “տրանսպորտային միջոցի անսարքության պատճառով չշահագործվելու” պայմանը: Տրված գույքահարկի և հողի հարկի արտոնությունները ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ-7 /դրամ/

Հ/Հ	Փոխադրամիջոցի մակնիշը, պետհամարանիշը, շինությունը	2017թ.տրված արտոնության գումարը		2018թ.տրված արտոնության գումարը	
		Գույքահարկ	Հողի հարկ	Գույքահարկ	Հողի հարկ
1	CHRYSLER TOW COUNTR 34 QN 620	60203 /2017թ. հարկ/	-	60200 2018թ. հարկ	-
2	ՖՈՒԿՍՎԱԳԵՆ PASSAT 17 SO 228	50402 /2017թ. հարկ	-	50450 2018թ. հարկ	-
3	MERCEDES-BENZ E 350 99 SC 998	70628 2015թ. -ի տույժ	-	-	-
4	JEEP GRAND CHEROKE 3.1 TD LIMITED 15 SO 150	95297 /2011-2013թ.թ. - տույժեր/	-	-	-
5	TOYOTA CAMRY 2.4 80 OU 444 MERCEDES-BENZ S 500 L 45 OO 001	33975/253044 2013-2015թ.թ. -ի տույժեր	--	-	-
6	MERCEDES-BENZ E 320 26 LU 448	169511 2011-2015թ.թ. - ի տույժեր	-	-	-
7	LEXUS LX 470 80 LU 050	105137 2013-2016թ.թ. - տույժեր	-	-	-
8	MERCEDES-BENZ S 500 35 UV 845	159886 2014-2015թ.թ. - տույժեր	-	-	-
9	MERCEDES-BENZ G55 AMG 09 DD 999	784375 2011-2015թ.թ.տույժեր	-	-	-
10	MERCEDES-BENZ C 500 08 LL 898	186055 2014-2016թ.թ. -ի տույժեր	-	-	-
11	MOSKVICH 412 IE 45 SL 403	33458 2008-2016թ.թ.տույժեր	-	-	-
12	ԲՄՎ 528 Ի 71 SU 777	-	-	247683 2011-2017թ.թ. -	--

				ի մայր գումար և 2011- 2017թ.թ.տույժեր	
13	LEXUS GX 470 45 QD 001	90615 2013- 2015թ.թ.տույժեր	-	-	-
14	շինություն	176000 2017թ. հարկ	18746 2017թ. հարկ	175986 2018թ. հարկ	18746 2018թ. հարկ
15	1.GAZ 311000 009 LO 70 2.GAZ 2705 219 SO 45 3.VAZ 21065 412 SO 45 4.OPEL SINTRA 2.2 436 SO 45	58800 2017թ.հարկ	-	58800 2018թ.հարկ	-
	ԸՆԴԱՄԵՆԸ փոխադրամիջոցի գույքահարկ	2151386	-	417133	-
	ԸՆԴԱՄԵՆԸ շինության գույքահարկ	176000	-	175986	-
	Ընդամենը հողի հարկ	-	18746	-	18746
	ԸՆԴԱՄԵՆԸ	2327386	18746	593119	18746

Հերևանք

Համայնքապետարանի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 22.06.2012թ. N 822-Ն որոշմամբ հաստատված “Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի” 6-րդ կետի 1-ին ենթակետի, այն է՝ “Համայնքի ղեկավարը հարկ վճարողի դիմումը և սույն կարգի 5-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ հարկային արտոնության տրամադրմանը համաձայնելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում հարկային արտոնության գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև հարկային արտոնություններ տալու վերաբերյալ հարկ վճարողի ներկայացրած փաստաթղթերը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը” պահանջը և 2017-2018 թթ. ընթացքում ընդհանուր՝ 2,196.2 հազ. դրամի գույքահարկի արտոնություններ է տրամադրել փոխադրամիջոցների գծով գույքահարկ վճարողներին:

Առաջարկ

Համայնքի բյուջեի հաշվին, համայնքի ավագանու կողմից գույքահարկի արտոնություններ տրամադրել ՀՀ կառավարության 22.06.2012թ. N 822-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Համայնքապետարանի դիրքորոշումը

2017-18թթ. Գյումրի համայնքի ավագանու կողմից տրված գույքահարկի տույժերի նկատմամբ արտոնությունների տրամադրման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ քաղաքացու դիմումը Գյումրու համայնքապետարան մուտքագրվելուց հետո յուրաքանչյուր դեպք ուսումնասիրվել է և ճշտվել է դիմումում նշված հանգամանքների արժանահավատությունը: Որպես մասնավոր դեպք կից ներկայացնում ենք BMW 528I մակնիշի 71SU777 պետհամարանիշի ավտոմեքենայի լուսանկարների պատճենները: Ավելացնենք նաև, որ հաշվեքննության արձանագրությունում նշված ֆիզիկական անձանց արտոնություններ են տրվել միայն տույժերի մասով, գույքահարկի մայր գումարի ապառքները ամբողջությամբ վճարելու պայմանով, հավաքագրման ցուցանիշների բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակում:

8. Գույքահարկով հարկվող շինությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հաշվեքննության ընթացքում ընտրանքային կարգով իրականացված, գույքահարկով հարկման օբյեկտ հանդիսացող, շենք- շինությունների հաշվառման և գույքագրման ընթացքում պարզվել է որ՝

8.1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, տարիներ առաջ (2007-2010թթ.) կառուցված շենք շինությունների սեփականատերեր, ստանալով համայնքապետարանից շինարարության թույլտվություն, սահմանված շինարարական աշխատանքների տևողություն ժամկետում չավարտելով շինության կառուցումը, չեն ստացել համայնքապետարանից շինարարության ավարտական ակտեր և չեն կատարել գույքի պետական գրանցում, որի արդյունքում առ այսօր իրենց պատկանող շինությունների մասով չեն դարձել համայնքի համար եկամտի աղբյուր, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ-8

Հ/Հ	Շին. թույլտվության №	Տրման ամսաթիվ	Օբյեկտի անվանումը	Օբյեկտի հասցեն	Ընդհանուր մակերես (քառ.մ)	Կառուցապատող	Շին. տևողությունը (ամիս)	Նշումներ
1	15/07	16/02/07	քաղաքային բիզնես կենտրոն	Շիրակացի փող. 56գ և 56գ/1	6514.5	Ֆիզիկական անձ	37	ՎԵԳԱ
2	145/07	17/09/07	առևտրի և սպասարկման օբյեկտ	Մ.Խորենացի փող. 25/2 և 25/2ա	365.0	Ֆիզիկական անձ	10.4	
3	146/07	18/09/07	առևտրա-սպասարկման օբյեկտ	Կոմիտասի փող. 2/2	345.73	Ֆիզիկական անձ	11	
4	69/08	15/05/08	առևտրի և սպասարկման օբյեկտ	Վ.Սարգսյան փող. 29/4	341.9	Ֆիզիկական անձ	8	
5	177/08	26/09/08	առևտրի և սպասարկման օբյեկտ	Գ.Նժդեհի փող. 8բ և 8գ	846.2	Ֆիզիկական անձ	15.5	

6	183/08	8/10/2008	քնակելի մասով առևտրի և սպասարկման օբյեկտ	Խրիմյան Հայրիկ փող. 33բ	458.85	Ֆիզիկական անձ	11	Կիսակառույց
7	182/07	22/10/07	սպասարկման օբյեկտ	Մ.Խորենացի փող. 29/8	244.83	Ֆիզիկական անձ	10	
8	65/08	13/05/08	սպասարկման օբյեկտ	Պ.Սևակի փող. 8/4	247.91	Ֆիզիկական անձ	9.5	ՖԻՆԿԱ
9	42/10	12/05/10	առևտրի և սպասարկման օբյեկտ	Մ.Խորենացի փող. 33/2	366.52	Ֆիզիկական անձ	10	ROM
10	150/07	25/09/07	առևտրի և սպասարկման օբյեկտ	Մանուշյան փող. 15/4 և 15/4ա	229.9	Ֆիզիկական անձ	8	
11	187/07	25/10/07	առևտրի և սպասարկման օբյեկտ	Պ.Սևակի փող. 14ա	109.6	„Նևինկա“ ԱԿ	4	
12	198/07	7/11/2007	առևտրի և սպասարկման օբյեկտ	Երևանյան խճ. 89/1	145.74	Ֆիզիկական անձ	8	TOMA
13	225/07	5/12/2007	առևտրի և սպասարկման օբյեկտ	Հաղթանակի պող. 44բ	102.94	Ֆիզիկական անձ	8	ՆԱՆԵ
14	149/08	25/08/08	առևտրի սրահ	Վ.Սարգսյան փող. 19/5	245.11	Ֆիզիկական անձ	8	Առևտրի սրահ

8.2.Համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք նորակառույց (2017-2018թթ.) շենք շինությունների սեփականատերեր, ստանալով համայնքապետարանից շինարարության թույլտվություն, սահմանված շինարարական աշխատանքների տևողություն ժամկետում չավարտելով շինության կառուցումը կամ վերակառուցումը, չեն կատարել գույքի պետական գրանցում և իրենց պատկանող շինությունների մասով, կամ վերակառուցված մասով չեն դարձել համայնքի համար եկամտի աղբյուր, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ-9

Հ/Հ	Շին. Թույլտվության №	Շին. թույլ տրման ամսաթիվ	Օբյեկտի անվանումը	Օբյեկտի հասցեն	Կառուցապատող	Շին. աշխատանքների տևողություն (ամիս)
1	03/17	13/03/2017	անհատական քնակելի տուն և արհեստանոց	Կ. Դեմիրճյան 87	Ֆիզիկական անձ	4
2	09/17	04/04/2018	տաղավար	Շիրակացի 50/9	Ֆիզիկական անձ	1.5
3	12/17	18/04/2017	բանկի տարածքի վերակառուցում	Աբովյան 248/7	“Ամերիաբանկ” ՓԲԸ	1
4	13/17	21/04/2017	առևտրի սրահի ընդլայնում	Երևանյան խճ. N95/2; N95/3	Ֆիզիկական անձ	3.7

5	15/17	21/04/2017	քնակարանի վերակառուցում	Գորկի փող. №72/1 շենքի քն.10 և Գորկի փող. №72/3	Ֆիզիկական անձ	2
6	21/17	09/06/2017	քնակելի տուն	Ռուսթավելի փող. 2-րդ նրբանցք թիվ 17	Ֆիզիկական անձ	4.5
7	22/17	15/06/2017	ավտոտնակ և պարիսպ	Այգաբաց 4 շարք №23/3	Ֆիզիկական անձ	4
8	24/17	19/06/2017	քնակելի տուն	Ղուկասյան փող. 16/2	Ֆիզիկական անձ	12
9	34/17	07/08/2017	քնակելի տուն	Մերկուրովի փող. №7դ	Ֆիզիկական անձ	7
10	35/17	14/08/2017	քնակելի տուն	Լ. Մաղոյան 216/3	Ֆիզիկական անձ	2
11	36/17	17/08/2017	քնակելի տուն	Կոմիտերնի փող. №2/6	Ֆիզիկական անձ	10
12	39/17	20/09/2017	քնակելի տուն	Ծուլուկիձե փող. №21/2	Ֆիզիկական անձ	24
13	42/17	29/09/2017	ավտոտնակ	Մուշ-2 թաղ. 9-րդ փող. №11/1	Ֆիզիկական անձ	2
14	03/18	22/02/2018	քնակելի տան կառուցում	«Անի» թաղ. 3 փողոց № 1/3	Ֆիզիկական անձ	14.3
15	07/18	13/04/2018	քնակելի տան ընդլայնում	Մուշ 2 թաղ. №3/1	Ֆիզիկական անձ	6
16	12/18	04/05/2018	սպասարկման օբյեկտ	Խր. Հայրիկ փողոց №49/1	Ֆիզիկական անձ	10
17	26/18	25/06/2018	խանութի վերակառուցում ընդլայնում	Տիմիրյազևի փող. №41	Ֆիզիկական անձ	10
18	28/18	29/06/2018	քնակելի տուն	Շ. Կորդինյան փող. 1-ին փակուղի №10/3	Ֆիզիկական անձ	2
19	36/18	13/08/2018	ավտոտնակ	Գ.Նժդեհի հրապ. №4/9	Ֆիզիկական անձ	7.1
20	44/18	31/08/2018	առևտրի և ապասարկման օբյեկտ	Կամոյի փող. №71/5	Ֆիզիկական անձ	6
21	52/18	19/09/2018	ավտոտնակ	Թքիխյան խճ. 1-ին թաղ. №5/4	Ֆիզիկական անձ	3
22	53/18	23/09/2018	քնակելի տուն	Թքիխյան խճ. 1-ին թաղ. №41/4	Ֆիզիկական անձ	5
23	71/18	21/12/2018	տեխնիկական մասնաշենք	Զիվանու հրապ. №1	Ֆիզիկական անձ	10

8.3. Համայնքի տարածքում գործող 13 հասարակական նշանակության օբյեկտների (առևտրի սրահների) զբաղեցրած, 3.0մլն. կադաստրային արժեքը չգերազանցող բնակելի նշանակության, շենք շինությունների գործառնական նշանակությունը չի փոխված հասարակականի, որի արդյունքում համայնքի բյուջեն զրկվել է լրացուցիչ եկամուտից՝ գույքահարկից, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ- 10

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Հասցե	Գործում է որպես	Կադաստրային արժեք /դրամ/	Պետական գրանցման ամսաթիվ	Գործառնական նշանակությունը
1.	Ֆիզիկական անձ	Կամոյի փող. 75ա շ. 25բն.	Առևտրի սրահ	1866165	23.09.2017	բնակարան
2.	Ֆիզիկական անձ	Շիրակացու փող. 54դ շ. 22 բն.	Առևտրի սրահ	2071892	07.05.2019	բնակարան
3.	Ֆիզիկական անձ	Պ. Սևակ շ. 65բն.	Առևտրի սրահ	2973943	03.09.2015	բնակարան
4.	Ֆիզիկական անձ	Անի թաղ. 11 փող. 6 շ. 11բն.	Առևտրի սրահ	2102158	24.11.2016	բնակարան
5.	Ֆիզիկական անձ	Տ.Ճարտարապետ 26շ. 1 բն.	Առևտրի սրահ	1168247	30.06.2004	բնակարան
6.	Ֆիզիկական անձ	Մ. Մկրտչյան 36ա շ. 14 բն.	Առևտրի սրահ	1606908	16.04.2015	բնակարան
7.	Ֆիզիկական անձ	Իսահակյան 3շ. 58 բն.	Առևտրի սրահ	1201048	24.07.2006	բնակարան
8.	Ֆիզիկական անձ	Ղանդիլյան 1շ. 9 բն.	Առևտրի սրահ	1913693	09.08.2011	բնակարան
9.	Ֆիզիկական անձ	Ղանդիլյան 51ա շ. 16բն.	Առևտրի սրահ	2219274	21.07.2006	բնակարան
10.	Ֆիզիկական անձ	Տերյան փող. 27	Առևտրի սրահ	612115	28.03.2005	բնակելի տուն
11.	Ֆիզիկական անձ	Այգաբաց 4 շարք 17ա	Առևտրի սրահ	1975109	31.05.2005	բնակելի տուն
12.	Ֆիզիկական անձ	Անի թաղ. 3 փող. 3շ. 74 բն.	Առևտրի սրահ	1385763	02.08.2007	բնակարան
13.	Ֆիզիկական անձ	Կ.Հալաբյան 13շ. 26բն.	Առևտրի սրահ	1091429	02.08.2016	բնակարան

Հեղևանք

Համայնքապետարանի կողմից չի պահպանվել Գույքահարկի մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ “Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ” և ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ մասի ա) կետի՝ “ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները ՀՀ կառավարության

առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներ ներկայացնում մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը՝ նախորդ ամսվա ընթացքում ՀՀ օրենսդրության համապատասխան նոր կառուցված, նոր առաջացած (ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ ունեցող) շենքերի, շինությունների ընթացիկ հաշվառման մասին՝ պահանջները՝ իր վարչական տարածքում գտնվող շենք- շինությունների ընթացիկ հաշվառման մասին տեղեկատվությունը չի ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում և զրկվել է լրացուցիչ եկամտից:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ՝ համայնքի տարածքում գտնվող պետական գրանցում չստացած շենք-շինություններՖը անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառելու և գրանցումն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև համայնքի տարածքում որպես հասարակական նշանակության օբյեկտ գործող (առևտրի սրահներ) շինությունների գործառնական նշանակությունը բնակելիից հասարակականի փոխելու ուղղությամբ, բավարարելով ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշման պահանջները:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Թվով 14 օբյեկտների շինարարության թույլտվությունները տրվել են 2007-2008 թվականներին, շինթույլտվություն ստացած օբյեկտներից երկուսի (Շիրակացի 56գ- 56գ/1 և Խորենացի 33/2) շինաշխատանքներն ավարտված են, որոնց ավարտական ակտի տրամադրումն ու փաստագրումը գտնվում է ընթացքի մեջ: Օբյեկտներից ևս երկուսը՝ (Գ.Նժդեհի 8բ-8գ և Հաղթանակի 44բ) կառուցապատողների կողմից օտարվել են այլ անձանց: Մնացած օբյեկտների մի մասի շինարարական աշխատանքները դադարեցված են տարբեր պատճառներով, ինչպես նաև կան մի քանի շինություններ որոնք նախագծային խախտումներով կառուցելու պատճառով հայտնվել են ինքնական կառույցի կարգավիճակում և դրանց սեփականատերերի նկատմամբ կիրառվել են և կիրառվելու են օրենքով նախատեսված միջոցառումներ:

2017-2018 թվականների ընթացքում շին.թույլտվություններ ստացած օբյեկտների վերաբերյալ հայտնվում է, որ ցուցակում ընդգրկված թվով 23 օբյեկտներից 17-ը անհատական բնակելի տներ, ավտոտնակներ և օժանդակ կառույցներ են: ՀՀ կառավարության 2015 թվականի 596-ն որոշման 123-րդ կետի համաձայն նշված տիպի կառույցների շինարարության տևողության ժամկետները կառուցապատողների կողմից խախտելու դեպքում նրանց նկատմամբ վարչական պատասխանատվություն կամ այլ ներգործության միջոցներ չի նախատեսվում, իսկ թվով 6 առևտրի և սպասարկման օբյեկտների վերաբերյալ կառուցապատողները դիմել են ավարտական ակտեր ստանալու համար, սակայն փաստաթղթերի ոչ լիարժեքության պատճառով փաստագրումը հետաձգվել է մինչև կառուցապատողների կողմից պատշաճ կարգով լիարժեք փաստաթղթեր ներկայացնելը:

8.3 կետի վերաբերյալ տեղեկացնում են ներկայացված աղյուսակում նշված թվով 13 առևտրի սրահների գործառնական նշանակության փոփոխություններ չեն կատարվել, քանի որ սեփականատերերը այդ հարցերով համայնքի ղեկավարին չեն դիմել, իսկ ՀՀ կառավարության 2002 թվականի 88 որոշմամբ շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական

նշանակության փոփոխությունները կատարվում են սեփականատիրոջ կամ համապատասխան լիազորություններով օժտված անձի կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

Գույքահարկով հարկվող, սակայն պետական գրանցում չունեցող, շինաշխատանքները ավարտված, ինչպես նաև անավարտ շենք-շինությունների պետական գրանցման և գույքահարկի հարկումը ապահովելու նպատակով համայնքապետարանը պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում կադաստրի կոմիտեին և համապատասխան աշխատանքներ է կատարում կառուցապատողների հետ:

9. Տեղական տուրքերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հաշվի առնելով համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերի դրույքաչափերը և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջը, այն է՝ տեղական տուրք գանձող պաշտոնատար անձինք տեղական տուրքի հաշվարկն իրականացնում և տեղական տուրքը գանձում են նախքան այդ գործողությունների իրականացումը կամ ծառայությունների մատուցումը, հաշվեքննությամբ պարզվել է որ.

Համայնքի 2017թ. բյուջեի տեղական տուրքերից մուտքերի տարեկան հաստատված պլանը կազմել է՝ 100,977.8 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է՝ 98,499.8 հազ. դրամ, իսկ փաստացին կազմել է՝ 90,196.6 հազ. դրամ, հետևաբար տեղական տուրքերից համայնքի բյուջե նախատեսվածից պակաս է գանձվել՝ 8,303.2 հազ. դրամ:

Համայնքի 2018թ. բյուջեի տեղական տուրքերից մուտքերի տարեկան հաստատված պլանը կազմել է՝ 101,611.8 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը կազմել է՝ 101,441.8 հազ. դրամ, իսկ փաստացին կազմել է՝ 93,686.9 հազ. դրամ, հետևաբար տեղական տուրքերից համայնքի բյուջե նախատեսվածից պակաս է գանձվել՝ 7,754.9 հազ. դրամ:

Այսպիսով՝ համայնքում առանց թույլտվության աշխատող տեղական տուրք վճարողների կողմից 2017-թթ. համայնքի բյուջե նախատեսվածից պակաս է վճարվել ընդամենը՝ 16,058.1 հազ. դրամ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից 29.11.2019թ., ՀՀ պետական եկամուտների նախագահին ուղղված՝ “Գյումրու համայնքի տարածքում 2017-2018թթ. գործունեություն իրականացրած հանրային սննդի օբյեկտների քանակների և մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնողների ելակետային տվյալների վերաբերյալ” NՀՊԵ-468 գրության ի պատասխան, ՀՀ պետական եկամուտների նախագահի ներկայացված տեղեկատվության համաձայն՝

1.Գյումրի համայնքում գործունեություն իրականացրած հանրային սննդի օբյեկտների քանակները կազմել է՝ 2017թ.՝ 104 օբյեկտ և 2018թ.՝ 88 օբյեկտ: Մինչդեռ համայնքի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ համայնքում գործունեություն իրականացրած հանրային սննդի օբյեկտների քանակները կազմել է՝ 2017թ.՝ 61 օբյեկտ և 2018թ.՝ 59 օբյեկտ, տարբերությունը կազմել է՝ 2017թ.՝ 43 օբյեկտ պակաս և 2018թ.՝ 29 օբյեկտ պակաս: Պակաս հաշվառված օբյեկտների կողմից 2017-2018թթ. տեղական տուրքերի համայնքի բյուջե չվճարված

գումարների հաշվարկ հնարավոր չի կատարել, քանի որ օբյեկտներում հանրային սննդի կազմակերպման և իրացման համար տեղական տուրքը սահմանվում է ըստ հիմնական և ոչ հիմնական շինությունների, ինչպես նաև ըստ օբյեկտների ընդհանուր մակերեսների, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը չհաշվառված օբյեկտների մասով համայնքի 2017-2018թթ. տեղական տուրքերի բազայում բացակայում է:

2.Գյումրու համայնքում 2017-2018թթ. գործունեություն իրականացրած թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնողների ելակետային տվյալների վերաբերյալ տեղեկատվության համաձայն, տվյալ տարվա ընթացքում յուրաքանչյուր թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնողի տարեկան միջին ելակետային տվյալների հանրագումարը կազմել է՝ 2017թ.՝ 42 մեքենա և 2018թ.՝ 44 մեքենա: Մինչդեռ համայնքի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնողների քանակը կազմել է՝ 2017թ.՝ 16 մեքենա և 2018թ.՝ 17 մեքենա, տարբերությունը կազմել է՝ 2017թ.՝ 26 մեքենա պակաս և 2018թ.՝ 27 մեքենա պակաս: Հաշվի առնելով այն, որ այս ծառայությունն իրականացնելու համար տեղական տուրքը սահմանվել է տարեկան 10,0 հազ. դրամ, ապա ստացվում է, որ 2017-2018թթ. պակաս է հաշվառվել 53 մեքենա և համայնքի բյուջե չի վճարվել 530.0 հազ. դրամ տեղական տուրքի գումար:

Համայնքում առանց թույլտվության աշխատող տեղական տուրք վճարողների կողմից 2017-2018թթ. համայնքի բյուջե նախատեսվածից պակաս է վճարվել ընդամենը՝ 16,058.1 հազ. դրամ, իսկ մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնողների կողմից համայնքի 2017-2018թթ. բյուջե չի վճարվել պակաս հաշվառված 53 մարդատար տաքսի ավտոմեքենայի համար 530.0 հազ. դրամ

Հերևանք

Համայնքապետարանը չի բավարարել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ «Տեղական տուրքը և (կամ) վճարը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է տեղական տուրք և (կամ) վճար հաշվարկող և գանձող պաշտոնատար անձանց վրա:» և 20-րդ հոդվածի՝ «Տեղական տուրքերը և վճարները

հաշվարկելու ու գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը:» պահանջները և համայնքում առանց թույլտվության աշխատող տեղական տուրք վճարողների կողմից 2017-2018թթ. համայնքի բյուջե նախատեսվածից պակաս է վճարվել ընդամենը՝ 16,058.1 հազ. դրամ, իսկ մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնողների կողմից

համայնքի 2017-2018թթ. բյուջե չի վճարվել պակաս հաշվառված 53 մարդատար տաքսի ավտոմեքենայի համար 530.0 հազ. դրամ:

Առաջարկություն

Տեղական տուրքի հաշվարկն իրականացնել և տեղական տուրքը գանձել նախքան այդ գործողությունների իրականացումը կամ ծառայությունների մատուցումը, բավարարելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Համայնքապետարանի դիրքորոշումը

2017-2018 թվականների համար որպես առանց տեղական տուրքի գանձման և առանց թույլտվության գործունեություն ծավալելու մասով հայտնում եմ, որ 16.058.1 հազար ՀՀ դրամ գումար պակաս հավաքագրելը այլ ոչ թե չգանձելը ինչպես նշվել է արձանագրությունում հետևանք է կանխատեսված և փաստացի ցուցանիշների տարբերության: Մասնավորապես՝ ելնելով նախորդ տարիների փորձից և հաշվի առնելով համայնքի զարգացման միտումները կանխատեսվել էր ավելի շատ տուրքի գանձում ենթադրող գործունեություն ծավալողների կամ գործունեության տեսակների քանակ, սակայն փաստացի եղել է ավելի քիչ, իսկ պակաս հավաքագրված գումարի մեծությունը գոյացել է տուրքի գանձում ենթադրող գործունեության տեսակների և դրանց հիման վրա գործունեություն ծավալողների քանակային տարբերություններից: Ինչ վերաբերվում է ժամանակին իրենց պարտավորությունները չկատարած տնտեսվարողներին, ապա այդ մասով կազմվել են համապատասխան արձանագրություններ ՀՀ «Վարչական իրավախախտումների մասին» օրենքի 16916 հոդվածով:

Հանրային սննդի օբյեկտների վերաբերյալ արձանագրած անհամապատասխանությունների մասով պարզաբանում եմ՝

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետը սահմանում է տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար, իսկ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը հստակ սահմանում է հանրային սննդի ծառայության հիմնական հասկացությունը, այն է՝ սննդի ապահովման ծառայություններ, խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում, սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր, ինչի համար վերը նշված ծառայություններ մատուցողները պարտավոր են օրենքով սահմանված ժամկետում և կարգով վճարել տեղական տուրքը և ստանալ համապատասխան թույլտվություն:

Կարծում եմ հանրային սննդի օբյեկտների քանակների վերաբերյալ արձանագրած անհամապատասխանությունները ունեն հստակեցման կարիք, քանզի Ձեր հարցմանն ի պատասխան ՀՀ հարկային տեսչության կողմից տրամադրված տեղեկատվությունը հանրային սննդի օբյեկտների ելակետային տվյալների մասով ենթադրում է, որ դրանում ներառվել են նաև օրինակ՝ հացի արտադրամասերը, որոնց գործունեության համար չի նախատեսվում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության ստացում, հետևաբար նաև տեղական տուրքի վճարում:

Տաքսի ծառայություններ մատուցող տնտեսվարողների քանակի վերաբերյալ արձանագրած անհամապատասխանությունների մասով պարզաբանում եմ՝

Գյումրու համայնքապետարանի համապատասխան բաժին դիմած Գյումրի քաղաքում տաքսի ծառայություն մատուցող տնտեսվարողների և պատասխանատու պաշտոնյաների շրջայցերի

արդյունքում ձևավորվել է տաքսի ծառայություն մատուցող տնտեսվարողների շրջանակը, ինչի հիման վրա հաշվարկվել, գանձվել է տեղական տուրք և տրամադրվել է պահանջվող թույլտվությունները: Նշեմ նաև, որ Գյումրի համայնքի տարածքում տաքսի ծառայություն մատուցող տնտեսվարող սուբյեկտների քանակի վերաբերյալ տվյալների տրամադրման Գյումրու համայնքապետարանի հարցմանն ի պատասխան ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Գյումրու տարածքային հարկային տեսչությունը 2016 թվականի հունվարի 22-ի թիվ 206 գրությամբ հիշյալ տեղեկությունները որակել է որպես հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն և չի տրամադրել տեղեկատվություն տաքսի ծառայություն մատուցող տնտեսվարողների քանակի և հասցեների վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ տեղական տուրք վճարողները պարտավոր են սահմանված ժամկետում և կարգով լրիվ վճարել օրենքով սահմանված տեղական տուրքերը, դրանց վճարումը հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները ներկայացնել օրենքով սահմանված գործողություններ իրականացնող կամ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով ծառայություններ մատուցող անձանց, սահմանված համապատասխան թույլտվությունն ստանալուց հետո նոր տուրք վճարողը կարող է և պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել և իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

10. Վարձակալությամբ փրված հողամասերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հողամասերն օգտագործման տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ հողային օրենսգրքով, 2001 թ. ապրիլի 12-ի թիվ- 286 որոշման՝ ՀՀ կառավարության “Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին” համապատասխան: 2003 թ. դեկտեմբերի 24-ին ընդունված ՀՀ կառավարության թիվ 1746-Ն որոշմամբ սահմանվել են Հայաստանի հանրապետության բնակավայրերի հողերի նոր /գործող/ կադաստրային արժեքները:

2017թ. դրությամբ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից վարձակալությամբ են տրվել 92.39 հա հողային տարածքներ և 2731 ավտոտնակների հողատարածքներ: Տարեկան վարձավճարի չափը կազմում է 116,577.1 հազ. դրամ, համայնքի բյուջե է վճարվել 107,811.1 հազ. դրամ: 31.12.2017 դրությամբ վարձավճարների գծով պարտքը կազմում է 51,115.2 հազ. դրամ, տույժը՝ 38,643.7 հազ. դրամ:

2018թ. դրությամբ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից վարձակալությամբ են տրվել 114.92 հա հողային տարածքներ և 2528 ավտոտնակների հողատարածքներ: Տարեկան վարձավճարի չափը կազմում է 116,951.6 հազ. դրամ, համայնքի բյուջե է վճարվել 106,595.2 հազ. դրամ, 31.12.2018 դրությամբ վարձավճարների գծով պարտքը կազմում է 61,341.5 հազ. դրամ, տույժը՝ 46,523.8 հազ. դրամ:

Համայնքի ավագանու 2010թ. դեկտեմբերի 16-ի «Գյումրի քաղաքում անօրինական տեղադրված ավտոտնակների համար հողի վարձավճարի չափ սահմանելու մասին»

ավագանու N 236 որոշման համաձայն՝ վարձավճարի չափը սահմանվել է 12.0 հազ. դրամ: Սակայն նշենք, որ 2017-2018թթ. դրությամբ 88 ավտոտնակների հողատարածքներ վարձակալության են տրվել 16,8.-24.0 հազ. դրամով:

Հերևանք

Հողօգտագործողների կողմից խախտվել են պայմանագրային պարտավորությունները, որի դիմաց 31.12.2017թ. դրությամբ հաշվարկվել և արձանագրվել է 89,759.0 հազ. դրամի պարտք՝ ներառյալ տույժերը:

31.12.2018թ. դրությամբ հաշվարկվել և արձանագրվել է 107,865.3 հազ. դրամի պարտք՝ ներառյալ տույժերը:

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է՝ մրցույթներին հաղթող են ճանաչվել լավագույն պայմաններ առաջարկող մասնակիցները, սակայն, պետք է նշել, որ մրցույթներին հայտ ներկայացրած մնացած մասնակիցների կողմից առաջարկված պայմանները նշված չեն:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ պայմանագրով նախատեսված ժամկետներում հողերի վարձակալության վճարների գանձման համար:

Պահպանել համայնքի ավագանու 2010թ. դեկտեմբերի 16-ի «Գյումրի քաղաքում անօրինական տեղադրված ավտոտնակների համար հողի վարձավճարի չափ սահմանելու մասին» ավագանու N 236 որոշմամբ սահմանված վարձավճարի չափը:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Հայտնում են, որ արձանագրությունում նշված 2017թ. և 2018թ. Բյուջեների հողի և գույքի վարձակալության գծով սեփական եկամուտները պլանավորելիս ուսումնասիրվել են նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, նպատակ ունենալով բյուջեի տվյալ եկամտային հոգվածների պլանավորումը կատարել հնարավորինս իրատեսական: Գույքի և հողի վարձակալությունների գծով ապառքների պարզաբանման, ճշգրտման և գանձման գործընթացը կրում է ամենօրյա բնույթ և իր մեջ ներառում է, նախագգուշացումների և ծանուցումների ուղղարկում, վարչական վարույթներ, դատական հայցեր, բռնագանձման պահանջներ: 2017-18թվականներին ուղարկվել է գույքի և հողի վարձակալության գծով թվով 154 նախագգուշացում, որի արդյունքում վճարվել է 1854.0 հազ. դրամ: Իրավաբանական բաժին է ուղարկվել 34 գործ 68275.7 հազ. դրամ ընդհանուր գումարով, որից ուղարկվել է ԴԱՀԿ թվով 4 գործ՝ 15181.8 հազ. դրամ ընդհանուր գումարով, ներկայացվել է թվով 4 սնանկության պահանջ 452.8 հազ. դրամ ընդհանուր գումարով, թվով 11 գործից գանձվել է 7759.4 հազ. դրամ:

11. Գույքի վարձակալություն

Անհամապատասխանություն

Համայնքապետարանի կողմից 2017թ. ընթացքում վարձակալության է տրվել 61 միավոր 8745.5 քմ ընդհանուր մակերեսով գույք՝ հասարակական կառույց, բնակելի տուն, գետնանցումներ, հեռուստաաշտարակ, կաթսայատան ծխնելույզ, շենքեր, բնակարաններ, հենասյուներ և այլն: 2018թ. ընթացքում վարձակալության է տրվել 63 միավոր 9046.5 քմ ընդհանուր մակերեսով նմանատիպ գույք:

Հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ առկա է գույքի վարձակալության տրամադրման փաստացի և շուկայական գների տարբերություն:

Հերևանք

Գույքի վարձակալության ապառքը 31.12.17թ. դրությամբ կազմել է 4,848.0 հազ. դրամ, տույժ՝ 1,415.4 հազ. դրամ:

31.12.2018թ. դրությամբ գույքի վարձակալության ապառքը կազմել է 2,890.9 հազ. դրամ, տույժ՝ 2,715.8 հազ. դրամ:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ պայմանագրով նախատեսված ժամկետներում գույքերի վարձակալության վճարների գանձմանը:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Հայտնում եմ, որ արձանագրությունում նշված 2017թ. և 2018թ. Բյուջեների գույքի վարձակալության գծով սեփական եկամուտները պլանավորելիս ուսումնասիրվել են նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, նպատակ ունենալով բյուջեի տվյալ եկամտային հոդվածների պլանավորումը կատարել հնարավորինս իրատեսական: Գույքի վարձակալությունների գծով ապառքների պարզաբանման, ճշգրտման և գանձման գործընթացը կրում է ամենօրյա բնույթ և իր մեջ ներառում է, նախագգուշացումների և ծանուցումների ուղղարկում, վարչական վարույթներ, դատական հայցեր, բռնագանձման պահանջներ: 2017-18թվականներին ուղարկվել է գույքի վարձակալության գծով թվով 4 նախագգուշացում, 1 գործից գանձվել է 1748.3 հազ. դրամ:

12. Աճուրդային կարգով իրականացված հողերի օտարումների վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հողերի աճուրդային վաճառքի ժամանակ Գյումրու համայնքապետարանը հիմք է ընդունել «Քաղաքացիական օրենսգիրք»-ը, ՀՀ «Հողային օրենսգիրք»-ը, «Գյումրու համայնքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2001 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 286 որոշումը, առաջնորդվել է ՀՀ կառավարության, Գյումրու ավագանու և համայնքապետարանի որոշումներով:

Համայնքապետարանի կողմից 31.12.2017թ. դրությամբ կատարվել է 12,640.29 քմ մակերեսով աճուրդային եղանակով 18 հողի օտարում՝ 25,929.2 հազ. դրամի:

31.12.2018թ. դրությամբ կատարվել է 53,697.19 քմ մակերեսով հողի 48 աճուրդային եղանակով օտարում՝ 85,669,1 հազ. դրամի:

Հետևանք

Համայնքապետարանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդներում հաղթող ճանաչված մասնակիցների մեծամասնության կողմից գրեթե չեն կատարվել պայմանագրերով նախատեսված պարտավորությունները: Այդ պարտականություններն են՝

- Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում ձեռք բերել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման օրվանից չորսամսյա ժամկետում ներկայացնել նախագծային փաստաթղթերը համաձայնեցման համար:
- Նախագծային փաստաթղթերը համաձայնեցման օրվանից մեկ ամսվա ընթացքում ներկայացնել ՀՀ կառավարության 2002թ.փետրվարի 2-ի թիվ 91 որոշմամբ սահմանված փաստաթղթերի փաթեթը շինարարության թույլտվություն ձեռք բերելու նպատակով:
- Շինարարության թույլտվության տրամադրման ամսաթվից ոչ ուշ քան հինգ ամսում սկսել շինարարական աշխատանքների իրականացումը:
- Շինարարական աշխատանքները իրականացնել և ավարտել «ՀՀ քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի Ժ կետի և 23-րդ հոդվածի պահանջներին համաձայն:
- ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 626 որոշման սահմանված կարգով ավարտել շինարարության ավարտի փաստագրումը:
- Շինարարության ավարտի փաստագրման օրվանից մեկ ամսվա ընթացքում կատարել շինարարությամբ ստեղծված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթի կրկնօրինակը:
- Հողմասն ըստ գործառնական նշանակության չօգտագործելու, սահմանված ժամկետներում շինարարական աշխատանքները չիրականացնելու կամ շինարարության ընթացքում չհամաձայնեցված նախագծային շեղումներ թույլ տալու դեպքում կիրառվում են օրենքով նախատեսված ներգործության միջոցներ, այդ թվում հողամասի նկատմամբ իրավունքների հարկադիր կարգով դադարում դատական կարգով համաձայն ՀՀ քաղաքացիական և հողային օրենսգրքերի:
- Վաճառողի պահանջով ներկայացնել շինարարական-մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույցը:

- Իրացման, հողամասի ազատման պարագաների առկայության դեպքում կողմերի միջև կնքվում է առանձին համաձայնագիր: Ժամանակավոր կառույցների ապամոնտաժման, տեղափոխման ծախսերը կրում է գնորդը, եթե այլ բան նախատեսված չէ համաձայնագրով:

Վերոնշյալ պարտավորությունները չեն կատարվել համայնքի սեփականություն հանդիսացող մի շարք հողմասերի աճուրդներում հաղթող ճանաչված մասնակիցների կողմից: Մասնավորապես, Հաղթանակի պողոտա 33/2 հասցեի 60,2 քմ մակերեսով հողամասի, Ֆորալբերգի փողոց 8 հասցեի 8000,0 քմ մակերեսով հողամասի, Վիեննայի փողոց 13/1 հասցեի 420,31 քմ մակերեսով հողամասի, Պարույր Սևակի փողոց 23/2 հասցեի 5000,0 քմ մակերեսով հողամասի, Բուլվարային փողոցի 1-ին փակուղի 29/1 հասցեի 1687,0 քմ մակերեսով հողամասի, Պարույր Սևակի փողոցի 22 հասցեի 10000,0 քմ մակերեսով հողամասի, Կոշտոյան փողոց 5/12 հասցեի 264,0 քմ մակերեսով հողամասի, Ալ. Մանուկյան փողոց 2/23 հասցեի 184,08 քմ մակերեսով հողամասի, Վազգեն Սարգսյանի փողոց 48/3 հասցեի 661,7 քմ մակերեսով հողամասի, Ղուկասյան փողոց 2/8 հասցեի 360,52 քմ մակերեսով հողամասի, Պարույր Սևակի փողոց 23/4 հասցեի 15000,0 քմ մակերեսով հողամասի, Մուսալյան փողոց 169/4 հասցեի 152,1 քմ մակերեսով հողամասի, Վազգեն Սարգսյանի փողոց 19/10 հասցեի 138,4 քմ մակերեսով հողամասի աճուրդների դեպքում:

Առաջարկ

Ձեռնարկել միջոցառումներ համայնքապետարանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդներում հաղթող ճանաչված մասնակիցների կողմից պայմանագրերով նախատեսված պարտականությունների կատարմանը:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Հայտնում եմ, որ հողամասերի օտարումներից հետո սեփականատերերի կողմից պայմանագրով սահմանված կետերը չկատարելու դեպքերում սեփականատերերը իրավիրվել են համայնքապետարան և քննարկվել են սահմանված ժամկետների հարցերը, բանավոր զգուշացվել են, որ սեղմ ժամկետներում դիմեն համայնքապետարան պայմանագրով սահմանված կետերի կատարման համար, սահմանված ժամկետներում չներկայանալու դեպքում գրավոր ծանուցվում են:

13. Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր

Անհամապատասխանություն

2017թ. դրությամբ համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցներից աճուրդային կարգով վաճառվել է 1 շինություն 31,36 քմ մակերեսով, 2333,0 քմ հողատարածքով, գումարը՝ 2,625.0 հազ. դրամ:

2018թ. համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցներից աճուրդային կարգով վաճառվել է 2 շինություն: Շինություններից մեկը՝ 437,23 քմ մակերեսով, 0.053765հա հողատարածքով, վաճառվել է 1,050.0 հազ. դրամով, մյուսը՝ 43,34քմ մակերեսով և 0.005652 հա հողատարածքով, վաճառվել է 605.8 հազ. դրամով:

Հերևանք

Համայնքային սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի 4/7 հասցեի շինությունը /31,36 քմ մակերեսով, 2333,0քմ հողատարածքով / «Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ անկախ գնահատողի կողմից գնահատվել է 3, 280. 0 հազ. դրամ, որը համայնքի ավագանու 30.04.2015թ. N 56-Ն որոշմամբ հաստատվել է որպես շինության՝ աճուրդային կարգով վաճառքի մեկնարկային գին: Համայնքի ավագանու 04.09.2015թ. N 137-Ն որոշմամբ այդ մեկնարկային գինը փոփոխվել է՝ դառնալով 2,500.0 հազ. դրամ և վաճառվել է 2,625.0 հազ. դրամով:

Համայնքային սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի 10/2 հասցեի շինությունը /437,23քմ մակերեսով, 0.053765 հա հողատարածքով / «Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ անկախ գնահատողի կողմից գնահատվել է 1,481.0 հազ. դրամ: Համայնքի ավագանու 19.04.2018թ. N 59-Ն որոշումով շինության վաճառքի մեկնարկային գին է սահմանվել 1,000.0 հազ. դրամ և վաճառվել է 1,050.0հազ. դրամով:

Առաջարկ

Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցները աճուրդային կարգով վաճառել անկախ գնահատողի կողմից գնահատված արժեքից ոչ պակաս:

Համայնքապետարանի դիրքորոշումը

ՀՀ հաշվեքննիչ պալատի հաշվեքննության արձանագրության 5-րդ կետի վերաբերյալ պարզաբանում եմ՝

ա) Գյումրու համայնքապետարանը, համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 15042015-08-0012) Ղարսի խճուղի N 4/7 հասցեի անշարժ գույքը (զուգարան, պարիսպ՝ 31,36 քմ և հողամաս՝ 2333,0 քմ մակերեսներով) աճուրդային կարգով օտարելու նպատակով համայնքը դիմել է համապատասխան որակավորում ունեցող «Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊ ընկերությանը գույքի շուկայական արժեքի գնահատման համար: Գնահատման եզրակացության հաշվետվությամբ անշարժ գույքը գնահատվել է 3 280 000 ՀՀ դրամ, որը հանդիսանում է գույքի մեկնարկային գին սահմանելու համար կողմնորոշիչ արժեք: Գնահատման եզրակացությունը ներկայացվել է Գյումրի համայնքի ավագանու քննարկմանը: Ավագանու 30.04.2015 թվականի N 56-Ն որոշմամբ հաստատվել է գույքի վաճառքի մեկնարկային գին 3 280 000 ՀՀ դրամ: Օրենքով սահմանված կարգով՝ զանգվածային լրատվամիջոցներով հայտարարվել է աճուրդ-վաճառք: Սակայն, աճուրդին մասնակիցներ չլինելու պատճառով այն համարվել է չկայացած (08.06.2015թ. N 3 արձանագրություն): Գույքը ներկայացվել է ավագանու քննարկմանը՝ վաճառքի մեկնարկային գինը

փոփոխելու նպատակով, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: 04.11.2015թ. N 137-Ն որոշմամբ ավագանին սահմանել է գույքի վաճառքի նոր մեկնարկային գին 2 500 000 ՀՀ դրամ: Կրկին հայտարարվել է աճուրդ-վաճառք և ամենաբարձր գին առաջարկող մասնակիցը (2 625 000 ՀՀ դրամ) ճանաչվել է հաղթող:

բ) Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 13042018-08-0002) Ղարսի խճուղի N 10/2 հասցեի գույքը «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊ ընկերության կողմից գնահատվել է 1 481 000 ՀՀ դրամ, որից 437,23 քմ պահեստը (կիսաքանդ շինություն) գնահատվել է 848 000 ՀՀ դրամ, իսկ 537,65 քմ հողամասը 633 000 ՀՀ դրամ :Գնահատման եզրակացությունը ներկայացվել է համայնքի ավագանու քննարկմանը վաճառքի մեկնարկային գին սահմանելու համար: Ավագանին հաշվի առնելով շինության վթարայնության բարձր աստիճանը գույքի վաճառքի մեկնարկային գին է սահմանել 1000000 ՀՀ դրամ:

14. Համայնքային հիմնարկների կողմից ծառայությունների կամ կադրավորող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ

Անհամապատասխանություն

Համայնքապետարանի կողմից 2017-2018թթ. վճարներ են գանձվել Գյումրու ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների ճանապարհների շահագործման և ուղեվարձի դիմաց՝ հիմք ընդունելով Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 29.12.2005թ. թիվ 14 որոշումը:

Հետևանք

Վերոնշյալ վճարները ներառված չեն 2017-2018թթ. համար համայնքի ավագանու կողմից հաստատված՝ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող 12.12.2016թ. N 217-Ն և 06.12.2017թ. N 146-Ն որոշումներում:

Առաջարկ

Համայնքի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների ճանապարհների շահագործման և ուղեվարձի դիմաց գանձումները կատարել հիմք ընդունելով համայնքի ավագանու կողմից սահմանված տվյալ տարվա տեղական վճարների դրույքաճափերը սահմանող որոշումները:

15. Գյումրու համայնքում գործող մարզադպրոցների վերաբերյալ

Անհամապատասխանություն

Գյումրու համայնքում գործում են թվով 15 «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ներ: 2017թ. դրությամբ Գյումրու համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց, փոխհատուցվող վճարների նկատմամբ 2017թ. սեպտեմբերի 12-ին Ն 95-Ա որոշման կարգով՝

100-տոկոսով արտոնություն կիրառելու ենթակա են.

- ա. երկկողմանի ծնողազուրկ երեխաները,
- բ. զոհված զինծառայողների երեխաները,
- գ. 1-ին կարգի հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաները,
- դ. հաշմանդամություն ունեցող երեխաները,
- ե. նույն ընտանիքից հաստատություն հաճախող երկուսից ավել յուրաքանչյուր երեխա,
- զ. համայնքի հավաքական թիմերի անդամները:

50-տոկոսով արտոնություն կիրառելու ենթակա են՝

- ա. միակողմանի ծնողազուրկ երեխաները,
- բ. նույն ընտանիքից հաստատություն հաճախող 2-երեխաներից մեկը:

Գյումրու քաղաքային համայնքում գործող թվով 15 համալիր մանկապատանեկան մարզադպրոցներից թվով 12-ում համայնքի ավագանու որոշումով, 2017-թթ. ամսական վարձավճար է սահմանվել 500 դրամ գումար, իսկ «Մարմնամարզական մարզաձևի մանկապատանեկան մարզադպրոցում»՝ 4000 դրամ գումար, «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցում» ուսման վարձավճարը սահմանվել է 5000 դրամ գումար, և «Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցում»՝ 7000 դրամ գումար: Համայնքի ենթակայության տակ գտնվող «Բոնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի, «Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի և «Ատլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի փաստաթղթերը, ըստ պատասխանատու ստորաբաժանման տեղեկանքի, առգրավված են և գտնվում են քննչական կոմիտեի վարույթում: Ըստ մարզադպրոցների կանոնադրության՝ գործունեության առարկան համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների իրականացումն է: Մարզադպրոցում գործում են սկզբնական պատրաստականություն, ուսումնամարզական, սպորտային կատարելագործման և սպորտային բարձրագույն վարպետության խմբեր:

Համայնքի ենթակայության տակ գտնվող թվով 4 «մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ- ների գույքի վարձակալության դիմաց 2017թ. համար վճարվել է 5,438.5 հազ. դրամ, իսկ 2018թ. համար վճարվել է 7,366.0 հազ. դրամ:

Որոշ մարզադպրոցներում ծնողվճարների դրամարկղային մուտքի օրդերների վրա բացակայում են վճարողների ստորագրությունները և համարակալումը, ինչպես նաև առկա են դեպքեր, երբ չեն լրացվել դրամարկղի մուտքի օրդերներ ընդանրապես: Հավաքագրված

ծնողվճարները սպորտդպրոցների կողմից համայնքի բյուջե մուտքագրվել է ոչ պատշաճ, սահմանված ժամանակին:

Մասնավորապես, ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցում, Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց, Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոցում, Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոցում, Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցում, Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոցում և Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ներում որոշ մարզիչներ, չեն համապատասխանում իրենց կրթական տվյալներով:

Օրինակ՝ Ջրային մարզաձևի մարզիչը, ավարտել է Բրյուսովի համալսարանը, Տիգրան Պետրոսյանի անվան մարզադպրոցում առանց համապատասխան կրթության անձինք աշխատում են որպես մարզիչ: Յուրի Վարդանյանի անվան մարզադպրոցում թվով 7-մարզիչներ աշխատում են միջնակարգ կրթությամբ: Հրաձգության մարզադպրոցում միջնակարգ կրթությամբ 3 անձ նույնպես աշխատում է որպես մարզիչ: Մարմնամարզական մարզաձևերի մարզադպրոցում թվով 5 մարզիչ չունեն համապատասխան կրթություն: Ալեքսան Հակոբյանի անվան մարզադպրոցում մարզիչը ավարտել է ԵԱՊՀ, սակայն աշխատում է որպես մարզիչ: Արամ Սարգսյանի անվան մարզադպրոցում 2 մարզիչ ավարտել է ԵԱՊՀ, սակայն աշխատում են որպես մարզիչ: Համայնքի մանկապատանեկան մարզադպրոցներում ծնողվճարները հիմնականում հավաքագրվել են մարզիչների միջոցով, որոնց մատյանները կնքված և համարակալված չեն տնօրինության կողմից: Հավաքագրված գումարը ներկայացվել է հաշվապահություն և հաշվապահության միջոցով փոխանցվել է համայնքի բյուջե:

Հերեվանք

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 05.10.2017 թ. N 1260-Ն հաստատված «Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման կարգի» II –րդ գլխի 5-րդ կետով սահմանված պահանջների նկատմամբ: ՀՈԱԿ-ներում որոշ մարզիչներ, չեն համապատասխանում իրենց կրթական ՀՈԱԿ-ների Կանոնադրության 4-րդ գլխի 33 կետով: տվյալներով, որը պահանջվում է Որոշ մարզադպրոցներում ծնողվճարների դրամարկղային մուտքի օրդերների վրա բացակայում են վճարողների ստորագրությունները և համարակալումը ինչպես նաև առկա են դեպքեր, երբ չեն լրացվել դրամարկղի մուտքի օրդերներ ընդանրապես: Հավաքագրված ծնողվճարները սպորտդպրոցների կողմից համայնքի բյուջե մուտքագրվել է ոչ պատշաճ, սահմանված ժամանակին:

Մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ներում որոշ մարզիչներ, չեն համապատասխանում իրենց կրթական տվյալներով:

Առաջարկ

Առաջնորդվել ՀՀ կառավարության 05.10.2017 թ. N 1260-Ն որոշման պահանջներով: Պահպանել կանոնադրության 4-րդ գլխի 33 – կետով սահմանված պահանջը:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Պարզաբանում եմ, որ արձանագրությունում նշված Գյումրու համայնքային ենթակայության մարզական արտադպրոցական ծառայություններ մատուցող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՀՈԱԿ) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների (այսուհետ՝ վարձավճարներ) գանձումը «Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Պարերի և սպորտային պարերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ներում իրականացվում է հավուր պատշաճի: Ինչ վերաբերվում է մնացած թվով 12 (տասներկու) ՀՈԱԿ-ներին ապա տեղեկացնում եմ, որ Գյումրի համայնքի ավագանու կողմից սահմանված վարձավճարը հաշվի առած ավագանու կողմից հաստատված գեղջերը, կազմում է՝ ամսական 250-ից 500 ՀՀ դրամ, գումարի չափի փոքր լինելու պատճառով ծնողները հրաժարվում են գնալ բանկ, հերթ կանգնել և հավելյալ 100-200 ՀՀ դրամ միջնորդավճար վճարել: Ուստի հավաքագրումը իրականացվում է մարզիչների կողմից և մուտք է կատարվում համայնքային բյուջե: Ծարունակաբար տարվում են աշխատանքներ ծնողների հետ համաձայնության գալու հարցում, որպեսզի վարձավճարները վճարեն բանկերում կամ ՀՈԱԿ-ների դրամարկղերում՝ սահմանված կարգին համապատասխան: Մարզիչների կողմից հավաքագրված վարձավճարները օրենքով սահմանված ժամանակետներում մուտքագրվում են համայնքի բյուջե, առանց դրամական կորստի:

ՀՈԱԿ-ների որոշ մարզիչների կրթության անհամապատասխանության վերաբերյալ պարզաբանում եմ, որ կատարվել է ուսումնասիրություն և պարզվել է, որ նշված մարզադպրոցների մարզիչները ունեն համապատասխան կրթություն, որակավորում, մարզական կոչումներ և մասնագիտական ստաժ, իսկ ովքեր չեն անցել ԿԳՄՍ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումը ազատվել են աշխատանքից: Նշենք որ կան լավագույն մասնագետներ, որոնք հրավիրվել են աշխատանքի չունենալով մասնագիտական կրթություն, պատճառը համապատասխան կրթությամբ մարզիչների բացակայությունն է, իսկ ընտրված մարզիչները ժամանակին եղել են լավագույն արդյունքներ ցուցաբերած մարզիկներ և շարունակաբար մասնակցել և մասնակցում են ԿԳՄՍ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Տարվում են աշխատանքներ մարզադպրոցների փաստաթղթերը լիարժեք դարձնելու ուղղությամբ:

16. Տրանսպորտային միջոցների և վառելիքի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հաշվեքննությամբ պարզվեց, որ 2017թ. համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված թվով 7-միավոր ավտոմեքենա չի շահագործվել, որոնց վերաբերյալ առկա է ավագանու որոշումը օտարելու մասին, սակայն մինչ հաշվեքննություն իրականացնելու օրվա դրությամբ չեն գնահատվել անկախ գնահատողի կողմից և չեն օտարվել:

Պատասխանատու անձի կողմից վառելիքը վարորդներին բաշխվել է կտրոններով յուրաքանչյուր մեկ ամսվա համար: Յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ տարվել է հաշվառում և լրացվել ուղեթերթիկները, տվյալ շաբաթվա վառելիքի վերաբերյալ: Սակայն առկա են նաև ավտոմեքենաներ, որոնց վազքաչափերը չեն աշխատում: Մասնավորապես՝ գազ 31100 մակնիշի 529LL70 պետ.համարանիշի ավտոմեքենան: Ըստ պատասխանատուի, վազքը ուղեթերթիկներում լրացվել է վարորդներին տրված վառելիքի կտրոններով, իսկ տրված վառելիքի չափից ելնելով ավտոուղեգրերը լրացվել են տրված վառելիքի ընդհանուր քանակությունից կատարելով հաշվարկ՝ կիրառելով ավտոմեքենաների վառելիքի ծախսի գործարանային նորմաները: Ավտոմեքենաների երթուղային թերթերի վրա մասամբ բացակայում են ժամը և վերջնական վազքի տվյալները: Հարկ է նշել, որ պատասխանատու անձի կողմից գրագրությունները կատարվել են թերի:

Տրանսպորտային միջոցների վերաբերյալ

2017 թվական

Աղյուսակ 11

No:	Հոդված	Սկզբնական մնացորդ առ 01.01.2017թ.	Գնում 2017թ. ընթացքում	Վաճառք 2017թ. ընթացքում	Վերջնական մնացորդ առ 31.12.2017թ.
1	Ընդամենը տրանսպորտային միջոցներ, որից	19	0	0	19
1.1	շահագործվող	15	0	0	15
1.2	չշահագործվող	4	0	0	4

2018 թվական

Աղյուսակ 12

No:	Հոդված	Սկզբնական մնացորդ առ 01.01.2018թ.	Գնում 2018թ. ընթացքում	Վաճառք 2018թ. ընթացքում	Վերջնական մնացորդ առ 31.12.2018թ.
1	Ընդամենը տրանսպորտային միջոցներ, որից	19	0	0	19
1.1	շահագործվող	12	0	0	12
1.2	չշահագործվող	7	0	0	7

Շահագործվող և չշահագործվող տրանսպորտային միջոցների վերաբերյալ 2017-2018 թթ.

	Գույքային համար	Անվանում	Համախառն հաշվեկշռային արժեք	Վիճակ 2017	Վիճակ 2018
1	00401	ավտոմեքենա ԳԱՀ 31105-120 861LL11	2,784,000.00	Շահագործվող	Շահագործվող
2	00871	ավտոմեքենա OPEL ZAFIRA 1.6 157LL70	2,658,000.00	Շահագործվող	Շահագործվող
3	00816	ավտոմեքենա ԳԱՀ 3102-121 119LL70	2,223,000.00	Շահագործվող	Շահագործվող
4	00405	ԳԱՀ 31105 109S045	4,090,000.00	Շահագործվող	Շահագործվող
5	00406	ԳԱՀ 31100 718SL45 – 529LL70	6,396,500.00	Շահագործվող	Շահագործվող
6	00407	ՎԱՀ 2115 007S045	3,160,000.00	Շահագործվող	Շահագործվող
7	00408	ԳԱՀ 31029 151SL45 – 530LL70	5,569,200.00	Շահագործվող	Շահագործվող
8	00819	ԳԱՀ 31105 – 100 122LL70	2,830,000.00	Շահագործվող	Շահագործվող
9	01004	Ավտոմեքենա MERCEDES-BENZ C180 241LL70	3,200,000.00	Շահագործվող	Շահագործվող
10	00807	ավտոմեքենա ԳԱՀ 3102 109LL70	2,994,000.00	Շահագործվող	Շահագործվող
11	00874	ավտոմեքենա ԳԱՀ 3102 677LL70	2,754,000.00	Շահագործվող	Շահագործվող
12	00396	ՎԱՀ 21121 216S045	3,780,000.00	Շահագործվող	Չշահագործվող
13	00397	ԳԱՀ 31105 079LL02	5,000,000.00	Չշահագործվող	Չշահագործվող
14	00400	ավտոմեքենա BMW X5 4.4 112LL70	9,800,000.00	Չշահագործվող	Չշահագործվող
15	00402	ավտոմեքենա BMW X5 3.0i 075LL70	8,460,000.00	Չշահագործվող	Չշահագործվող
16	00412	ԳԱՀ 310290 388LL01 – 528LL70	5,569,200.00	Շահագործվող	Չշահագործվող
17	00430	ԳԱՀ 13 4793 ADB Չայկա	4,940,000.00	Շահագ. չհանձնված	Շահագ. չհանձնված
18	00854	Ավտոմեքենա ՎԱՀ 21063 140LL70	1,256,000.00	Շահագործվող	Չշահագործվող
19		ԳԱՀ 3102		Շահագործվող	Շահագործվող

Հետևանք

Առկա է անհամապատասխանություն ՀՀ Ֆինանսների նախարարի 2016 թ. փետրվարի 1-ի թիվ 37- ն հրամանի պահանջների նկատմամբ: Հավելված 1-ի 48 կետը, ինչպես նաև հավելված 2-ով հաստատված գրանցամատյանների օրինակելի ձևերի պահանջները:

Առաջարկ

Առաջնորդվել ՀՀ Ֆինանսների նախարարի 2016թ. փետրվարի 1-ի թիվ 37- ն հրամանի պահանջների դրույթներով: Հավելված 1-ի 48-րդ կետը, ինչպես նաև հավելված 2-ով հաստատված գրանցամատյանների օրինակելի ձևերի պահանջներով:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Պարզաբանում եմ, որ Համայնքապետարանի հաշվեկշռում հաշվառված և չշահագործվող թվով յոթ ծառայողական մեքենաներից չորսի օտարման վերաբերյալ համայնքի ավագանին կայացրել է օտարման որոշում և անկախ գնահատողի կողմից տրանսպորտային միջոցների գնահատման արդյունքում կազմված հաշվետվության հիման վրա սահմանել է աճուրդի մեկնարկային գին: Օրենքով սահմանված կարգով հայտարարված աճուրդ-վաճառքին մասնակից չլինելու պատճառով այն համարվել է չկայացած:

Ինչ վերաբերվում է ծառայողական մեքենաների շահագործման նպատակով տրամադրված վառելիքի ծախսագրման թերություններին ապա հայտնում եմ որ վառելիքի բաշխումը իրայանացվել է բաշխման տեղեկագրերի հիման վրա, իսկ ծախսագրումները կատարվել են ծառայողական մեքենաների երթուղային թերթիկներում արտացոլված վազքի հիման վրա կիրառելով ՀՀ կառավարության 01 հունիսի 2005 թվականի N 1001-Ն որոշմամբ սահմանված նորմատիվները և համապատասխան գործակիցները: Վազքաչափի ցուցիչների որոշակի խախտումների դեպքում կիրառել ենք հիշյալ որոշմամբ սահմանված նորմատիվները, ինչպես նաև իրականացրել ենք փաստացի վազքի խրոնոմետրաժ հիմք ընդունելով ծառայողական մեքենայից օգտվողի կողմից տրամադրված երթերի տվյալները:

17. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի մասով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվել են Գյումրու համայնքապետարանի բնակկոմունալ բաժնի կողմից: Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների գծով աշխատակիցներն ընդգրկվել են համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի տեխսպասարկման անձնակազմ բաժնում: Առկա է եղել անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով մասով, այն է. «Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը»: 2017 թ. երկրորդ կիսամյակից սկսած համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվել են «Գյումրու կոմունալ ծառայություն» Համայնքային Բյուջետային Հիմնարկի միջոցով /այսուհետ՝ Բյուջետային հիմնարկ/:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով, համայնքի ավագանի 2017-2018 թթ. համար չի հաստատել համայնքի սանիտարական մաքրմանը վերաբերող ամբողջական սխեման, որը պետք է պարունակեր հետևյալ հիմնական տարրերը, այն է՝ համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասագերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

Հաշվեքննությանը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջին բավարարող լիարժեք փաստաթուղթ չի ներկայացվել, փոխարենը տրամադրվել է համայնքի ավագանու կողմից հաստատված «Համայնքի վարչական տարածքում աղբահանության իրականացման ժամանակացույցն՝ ըստ աղբամանների տեղաբաշխման», որն իրենից ներկայացնում է համայնքի վարչական տարածքում աղբահանության իրականացման ժամանակացույցը, աղբամանների տեղադրման վայրերը (հասցեները), աղբամանների տեսակները, չափսերը, քանակները, մեքենայի երթուղին, յուրաքանչյուր մեքենային ամրացված տարածքը, բանվորի քանակը: Հաշվեքննությանը տրամադրվել է նաև «Սանիտարական մաքրման աշխատանքներում բանվորի տեղաբաշխման» վերաբերյալ փաստաթուղթ, որը համայնքի ավագանու կողմից չի հաստատվել:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի մասով, այն է՝ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները պետք է պարտադիր և պարբերաբար իրականացվեն սույն օրենքով նախատեսված սանիտարական մաքրման սխեմային համապատասխան:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի

2017-2018 թթ. ընթացքում աղբահանության և սանիտարական մաքրման նախահաշիվները կազմվել են առանց սանիտարական մաքրման սխեմաների հաստատման:

մասով համայնքում օգտահանման ենթակա թափոնների տեսակավորում չի կատարվել, օգտագործման ու վերամշակման համար պայմաններ են ստեղծվել, որոնք կնվազեցնին աղբավայրերում տեղադրվող թափոնների ծավալները:

Հեղևանք

Արդյունքում, 2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում քաղաքապետարնն, իրականացնելով աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները, հնարավորություն չի ունեցել

պատշաճ վերահսկողություն իրականացնել կատարվող աշխատանքների նկատմամբ, քանի որ ծառայությունը մատուցողը և վերահսկողը նույն մարմինն է:

Համայնքի 2017-2018թթ. աղբահանության և սանիտարական մաքրման նախահաշիվները կազմվել են առանց սանիտարական մաքրման սխեմաների պատշաճ հաստատման, նախահաշիվներում առկա ծախսերի հիմնավորումը հաշվեքննությանը չի ներկայացվել, մասնավորապես՝ համայնքում առաջացող աղբի քանակների ծավալների և քաշի հաշվառում չի տարվել, իսկ սանիտարական մաքրման օրական մակերեսների հաշվարկը կատարվել է թերի, որի պատճառով հնարավոր չի որոշել սանիտարական մաքրման աշխատանքներում ընդգրկվելիք աշխատողների ճիշտ թվաքանակը:

Առաջարկ

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացնելիս առաջնորդվել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերի, 8-րդ հոդվածի 1-ին մասի և 13-րդ հոդվածի պահանջներով:

Համայնքապետարանի դիրքորոշումը

“Աղբահանության և սանիտարական մաքրման մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների անհամապատասխանությունը վերացվել է և 2017թ. երկրորդ կիսամյակից սկսած համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվել են “Գյումրու կոմունալ ծառայություն” համայնքային բյուջետային հիմնարկի միջոցով:

“Աղբահանության և սանիտարական մաքրման մասին” ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով անհամապատասխանությունը առաջիկայում կուղղենք և կլրացնենք այն պահանջները, որոնք ընդգրկված չեն եղել համայնքի ավագանու կողմից հաստատված փաստաթղթում:

“Աղբահանության և սանիտարական մաքրման մասին” ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի մասով նախատեսված միջոցառումները չեն կատարվել, քանի, որ 2017թվականին ՀՀ Կառավարությունը Ասիական Զարգացման բանկի ֆինանսավորմամբ նախատեսում էր մարզերում ստեղծել նոր աղբավայրեր, որտեղ իրականացվելու էին նաև կոշտ թափոնների վերամշակման գործառույթներ: Ոսումնասիրությունների արդյունքում Շիրակի մարզում որոշվել էր նման վայր ընտրել Ախուրյանի տարածաշրջանի Բենիամին համայնքի վարչական տարածքը, որ նախատեսվում էր կատարել աղբի տեղափոխում, ծավալների, կշռի որոշում, տեսակավորում և վերամշակում:

18. ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի մասով արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն

ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ.թիվ 25-Ն հրամանով հաստատվել է «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջների թիվ 2.1.7.002-09 սանիտարական կանոնները և նորմերը»: Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կատարման ընթացքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները կապված վերը նշված հրամանի հետ:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ համայնքում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կատարման ընթացքում չի պահպնվել առողջապահության նախարարի վերը նշված հրամանի հետևյալ պահանջները՝ մասնավորապես.

1. Չի պահպանվում փողոցում աղբամանների միջև հեռավորության չափորոշիչը (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 21),
2. Աղբահավաքման կոնտեյներները չունեն կափարիչներ (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 11),
3. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը չեն ախտահանվում աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից՝ քլորակրի (10 %), լիզոլի (5-8%) կրեոլինի (5-8%), նավթալիզոլի (10-15%), ֆենոլի (3-5%) նատրիում մետասիլիկատի (1-3%) ախտահանիչ լուծույթներով (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 19),
4. Աղբավայրը չունի տնտեսակենցաղային գոտի, կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման հարթակ ու սարքավորումներ, տեխնիկական ջրի պահուստային տարողություն (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 22),
5. Աղբավայրի տարածքը շրջապատից մեկուսացված չէ ցանկապատով (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 34-8),
6. Սպառման թափոնների աղբավայրում թափոնները հաճախ այրվում են (սանիտարական կանոններ և նորմեր թիվ 2.1.7.002-09 կետ 35):

**Քաղաքային աղբավայրը
ցանկապատված ու
անանձնացված չէ և բավականին
մոտ է գտնվում բնակելի
տարածքին:**

Հեղևանք

Արդյունքում, քաղաքային աղբավայրը բավականին մոտ է բնակելի տարածքին:

Այստեղ չկան աղբամանների կամ մեքենաների լվացման համար նախատեսված վայրեր: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում ու խառնվում են (հիմնականում առանց տոփանման) թափոնների հավաքագրման առաջնային գծում: Աղբավայրը ցանկապատված և առանձնացված չէ: Աղբավայրում թաղվել են նաև սատկած կամ վնասազերծված կենդանիների դիակներ՝ մասնավորապես նշված աղբավայրում են թաղվել 2017-2018թթ. ընթացքում համայնքի կողմից վնասազերծված թափառող շների դիակները: Նվազագույն ընդունելի շահագործում իրականացնելու համար աղբավայրն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ և որակի մեքենա- մեխանիզմներով:

Առաջարկ

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կատարելիս առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանով հաստատված “Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքեր իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգենիկ պահանջների թիվ 2.1.7.002-09 սանիտարական կանոնների և նորմերի” 11-րդ, 21-րդ, 19-րդ, 22-րդ, 34-8-րդ և 35-րդ կետերի պահանջներով:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Աղբահանության կոնտեյներները չունեն կափարիչներ: Փորձը ցույց է տվել, որ ազգաբնակչությունը չի օգտվելու նման աղբարկղերից, ուստի նպատակահարմար չէ լրացուցիչ ծախս կատարել կափարիչների տեղադրելու համար:

Աղբատար ավտոմեքենաների թափքերը չեն ախտահանվում: Նկատի ունենալով, որ աղբադաշտում նման հնարավորություն չկա, մեքենաների թափքերը հաճախակի լվացվում են ավտովազման կետերում: 2020թ. սուրվենցիոն ծրագրերով նախատեսված է ձեռք բերել ավտովազման 2 հատ սարքավորում: Դրանք կտեղադրվեն ավտոպարկում և աղբադաշտում, որով հարցը վերջնականապես կկարգավորվի:

Աղբավայրի տարածքը մեկուսացված չէ ցանկապատով: Նկատի ունենալով, որ առաջիկայում կկառուցվի աղբի վերամշակման գործարան և եղած աղբը նույնպես կտեղափոխվի այդ գործարան, ուստի նպատակահարմար չէ լրացուցիչ մեծ ծախսեր կատարել տարածքը ցանկապատելու համար: Այս պահին աղբավայրի տարածքը երեք կողմերով առանձնացված է շրջակա միջավայրից երկրաշարժի փլատակների և շինարարական աղբի տեղադրման արդյունքում: Սպառման թափոնների աղբավայրում թափոնները հաճախ այրվում են: Իրոք, աղբի ինքնայրման դեպքեր լինում են, բայց արտանետումները մթնոլորտ չափվել է մասնագետների կողմից և համապատասխանում է թույլատրելի նորմաներին: Հարկ է նշել, որ քաղաքային աղբավայրը գործում է 1954 թվականից, իսկ Մուշ 2-2 թաղամասը կառուցվել է 2011 թվականին: Ժամանակին թաղամասի կառուցման տարածքի ընտրությունն է սխալ կատարվել:

Սատկած կամ վնասագերծված կենդանիների դիակները թաղվել են ոչ թե աղբավայրի տարածքում, այլ մինչև աղբավայր հասնելը մոտ 1կմ հեռավորության վրա գտնվող 6-7 մետր խորություն ունեցող խրամատում:

19.Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատակիցների աշխատավարձերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017-2018թթ. համար հաստատված հաստիքացուցակներով յուրաքանչյուր տարի նախատեսվել և պահվել են 145 սանիտարական մաքրման գծով բանվորներ: Սանիտարական մաքրման բանվորների թվաքանակի հաշվարկի համար հաշվեքննությանը ներկայացվել է «Համայնքի սանիտարական մաքրման բանվորների տեղաբաշխման վերաբերյալ» տեղեկատվություն: Ըստ տեղեկատվության ընդհանուր մաքրվող մակերեսը պայմանականորեն բաժանվել է 18 տարածքների, որոնց մեջ ներառված են որոշակի թվով փողոցներ և հրապարակներ: Ըստ ներկայացված տեղեկատվության, սանիտարական մաքրման ընդհանուր մակերեսը կազմում է 856742 քմ /ճանապարհների երթևեկելի մասից՝ որպես մաքրվող տարածք, ընդգրկվել է 6 մ, իսկ որոշակի փողոցներ մաքրվում են երկու կամ երեք օրը մեկ անգամ/, իսկ օրական մաքրվող ընդհանուր մակերեսը, ըստ կատարված հաշվարկի, կազմել է 482590 քմ, որտեղ երթևեկելի մասից ընդգրկված է 3մ, և հաշվի է առնվել փողոցների մաքրման հաճախականությունը: Այսպիսով, ըստ սանիտարական մաքրման բանվորների տեղաբաշխման տեղեկատվության, ստացվում է, որ մեկ բանվորին միջինը օրական բաժին է ընկնում 2475քմ-ից մինչև 6000 քմ մաքրվող տարածք, այսինքն՝ բանվորների միջև մաքրվող տարածքների բաժանումը կատարվել է անհավասարաչափ:

Հետևանք

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով, համայնքի ավագանին 2017-2018 թվականների համար չի հաստատել համայնքիսանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները:

Սանիտարական մաքրմանը բաժին ընկնող տարածքների հաշվարկները թերի կատարելու հետևանքով սանիտարական մաքրման աշխատակիցների միջև աշխատանքների բաշխումը կատարվել է անհավասարաչափ: Կնքված աշխատանքային պայմանագրերում աշխատավարձի չափը բոլորի համար հավասար է և աշխատողներին վճարվել է հավասարաչափ աշխատավարձ:

Առաջարկ

Համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերը կնքել ելնելով նրանց կողմից տվյալ աշխատանքում ներգրավվածության աստիճանից:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատակիցների աշխատավարձի վերաբերյալ: Մաքրող բանվորների կողմից ավվող մակերեսների տարբերությունը կախված է նրանից, թե ինչպիսի աղտոտվածություն ունեն տվյալ փողոցները կամ հրապարակները: Բացի դրանից դա կախված է նրանից, թե ինչ հաճախականությամբ են մաքրվում փողոցները: Ընդհանուր ծանրաբեռնվածությունը բոլոր բանվորների մոտ գրեթե հավասար են և բանվորների կողմից այդ առիթով երբեք դժգոհություն չի առաջացել:

20. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կատարման ընթացքում ծախսված վառելանյութի և ավտոյուղերի ծախսի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Ավտոյուղերի ծախսը 2017թ. ընթացքում կազմել է 3,810.3 հազ. դրամ և 2018թ.՝ 1,984.5 հազ. դրամ, կամ 2018թ. ավտոյուղերի ծախսը մոտ 2 անգամ ավելի պակաս է 2017թ. ծախսի նկատմամբ: Պետք է նշել, որ ավտոմեքենաների ավտոյուղերի փոխարինման համար առկա չէ որևէ հաշվառում՝ կապված ավտոմեքենաների կատարած իրական վազքի և հատուկ մեխանիզմի աշխատաժամանակի հետ:

Վառելանյութի ծախսի դուրս գրման համար հիմք են հանդիսացել լրացված ավտոտուղեգրերը: Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներում ներգրավված մեքենամեխանիզմների ավտոտուղեգրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ավտոտուղեգրերը հիմնականում լրացվել են թերի, մասնավորապես՝ ավտոտուղեգրերում չի նշվել մեքենաների մեկնման և ժամանման վայրերը, կատարած երթերը, մեքենաների ցուցիչների տվյալները և այլն: Պետք է նշել, որ շահագործված մեքենամեխանիզմների ցուցիչները որոշ դեպքերում չեն աշխատել և ուղեգրերում արձանագրված վազքերի և հատուկ մեխանիզմի ժամային տվյալները լրացվել են գործարանային նորմերով՝ ստացված վառելիքի ընդհանուր քանակությունից կատարելով հաշվարկ՝ կիրառելով մեքենամեխանիզմների վառելիքի ծախսի գործարանային նորմատիվները: Մասնավորապես՝ ավտոտուղեգրերում վառելիքի ծախսի բաշխումը 2018թ. չորրորդ եռամսյակի ընթացքում կատարվել է հետևյալ սխեմայով՝ 65% վառելիքի ծախսը բաժին է ընկել հատուկ տեխնիկայի մեխանիզմի շահագործմանը և 35%-ը՝ ավտոմեքենայի կատարած վազքին, իսկ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածի համար գործել է նույն սխեման, սակայն հստակ տոկոսային բաժանում չի կիրառվել: Պետք է նշել որ նշված տոկոսային

բաժանումը նորմատիվային պահանջ չէ: Ավտոուղեգրերում ԳԱԶ 3309 մակնիշի հատուկ մեքենաների համար, որոնք թվով 10 են, հատուկ մեխանիզմի աշխատանքի համար նորմատիվային վառելիքի ծախսի չափ 2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածի համար սահմանվել է 2.2 լ/ժամ, իսկ 2018թ. հուլիսի 1-ից մինչև 31.12.2018թ.-ը ընկած ժամանակահատվածի համար 3.8 լ/ժամ: Նշված նորմաները հատուկ մեխանիզմների շահագործման գործարանային նորմաներ են, իսկ հստակ նորմա ստանալու համար պետք է կատարվեր խրոնոմետրաժ՝ ելնելով մեքենայի կատարած վազքից, երթից և հատուկ մեխանիզմի միավոր ժամանակի համար վառելիքի փաստացի ծախսից:

2017-2018 թթ. ընթացքում կենցաղային աղբի, ոչ կենցաղային աղբի և խոշոր եզրաչափերի աղբի փոխադրման և աղբավայրում տեղադրման քանակների վերաբերյալ տեղեկատվությունը համայնքապետարանում բացակայում:

Հետևանք

2017-2018թթ. ընթացքում ավտոուղեգրերում երթերի քանակները չեն նշվել, քանի որ ավտոմեքենաների ցուցիչները հաճախ չեն աշխատել, իսկ «Լոկատոր» համակարգի միջոցով արձանագրված տվյալները հաշվեքննությանը չի ներկայացվել՝ երկար ժամանակով չպահպանվելու պատճառով:

Առկա է անհամապատասխանություն «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի մասով՝ համայնքում աղբահանության ծավալների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը հետևանք է այն բանի, որ աղբատար ավտոմեքենաների համար կազմած ավտոուղեգրերում երթերի քանակները չեն նշվել, քանի որ

ավտոմեքենաների ցուցիչները հաճախակի չեն աշխատել: Ավտոուղեգրերում կատարված վազքերը նշվել են՝ «Լոկատոր» համակարգի միջոցով, որոնց վերաբերյալ հաշվարկները երկար ժամանակով չի պահպանվում և հաշվեքննությանը չի ներկայացվել: Աղբահանության ծավալների ճիշտ հաշվարկումը կարող է հիմք հանդիսանալ սանիտարական մաքրման սխեմաների կազմման համար, որը օրենքի պահանջ է հանդիսանում: Աղբատար մեքենաների ավտոուղեգրերը լրացնել ավտոմեքենաների ցուցիչներին համապատասխան՝ հաշվի առնելով փաստացի վառելիքի ծախսը, ինչպես նաև ավտոուղեգրերում նշել կատարված երթերի քանակը:

Առաջարկ

Համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկին, աղբի հավաքմանը, պահմանը,

փոխադրմանը և տեղադրմանը ներկայացվող պահանջները, ավտոուղեգրերը լրացնել՝ նշելով փաստացի կատարված երթերի քանակը և տեղափոխված աղբի ծավալը:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ընթացքում ծախսված վառելանյութի և ավտոյուղերի ծախսի վերաբերյալ: Վառելանյութի ծախսը ֆիքսվել է ավտոուղեգրերով: Թերություն է համարվել մեքենաների մեկնման և ժամանման վայրերի և ժամանակի չնշելը: Մեքենան մեկնել է ավտոպարկից, շրջել փողոցներում, հասել մինչև աղբադաշտ և վերադարձել ավտոպարկ: Սա ֆիքսվել է նաև “Լոկատոր” համակարգով: Մեքենաների վազքը ցուցիչներից բացի լրացուցիչ ստուգվել է տվյալ մեքենայի գործարանային նորմատիվային ծախսով և “Լոկատոր” համակարգով: Բացիդրանից կատարվել է մեքենաների վազքի խրոնոմետրաժ և համեմատվել նախորդ օրերին կատարած վազքի հետ: 2017թվականի հունվարի 1-ից մինչև 2018թվականի հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածի համար ԳԱՀ – 3309 ավտոմեքենաների հատուկ մեխանիզմների 2,2 լ/ժամ ծախսը 2018թվականի հուլիսի 1-ից հետո 3,8 լ/ժամ դառնալը բացատրվում էր նրանով, որ նշված մեքենաները 6 տարի շահագործվել են առանց հիմնանորոգման, քնականաբար վառելիքի ծախսը չէր կարող մնալ գործարանային նորմատիվների շրջանակում: Բարեկարգման, կանաչապատման և այլ աշխատանքների դեպքում վառելանյութի ծախսի հաշվարկը, մեքենաների կատարած վազքը հաշվարկվել է նույն ձևով:

Ավտոյուղերի ծախսը հիմնականում կատարվել է լրացման ձևով, որը ձևակերպվում է վառելիքի և քսայուղերի հատկացման ամսական տեղեկագրերում և առկա է բոլոր վարորդների ստորագրությունները յուղի ստացման վերաբերյալ: Սակայն երբեմն մեքենաների հիդրավիկ համակարգում գործող ճնշման ռետինե խողովակները շարքից դուրս են գալիս, այդ թվում փողոցում աշխատանքի ժամին և տեղի է ունենում յուղի արտահոսք և կորուստ: Ուստի հնարավոր չէ յուղի փոխարինման, լրացման բոլոր դեպքերի համար պատշաճ փաստաթուղթ ստեղծել:

21. Աղբադաշտի հարթեցման աշխատանքների վերերյալ

Անհամապատասխանություն

2017թ. համայնքապետարանը կենցաղային աղբադաշտի հարթեցման նպատակով յուրաքանչյուր տարի կնքել է երկուական պայմանագրեր: Աղբադաշտի հարթեցման աշխատանքներն իրականացվել են պատկանող T-170 տրակտորի միջոցով: 2017թ. աշխատանքների կատարման համար կնքվել են, ընդհանուր գումարով, 9,188.8 հազ. դրամի պայմանագրեր, 2018թ.՝ 9,126.1 հազ. դրամի պայմանագրեր:

2017թ. կնքված պայմանագրերով կատարողը պարտավորվել է յուրաքանչյուր ամիս հարթեցնել 9600 խմ կենցաղային աղբ: Ըստ ներկայացված կատարողական ակտերի յուրաքանչյուր ամիս կատարողը ցույց է տվել պայմանագրերով նշված ծավալի կենցաղային աղբի հարթեցում: Քանի որ աղբավայրում տեղադրված աղբի փաստացի ծավալների հաշվառում չի տարվել, հետևաբար առկա է անհամապատասխանություն աղբավայր

տեղափոխված և տեղադրված աղբի իրական ծավալների և կատարողական ակտերում նշված ծավալների միջև:

Գյումրու կոմունալ ծառայությունում առկա են ակտ-արձանագրություններ, համաձայն որոնց նշված աշխատանքները ոչ բոլոր դեպքերում է կատարվել պայմանագրի պահանջների համաձայն՝ ամեն օր և անընդհատ:

Աղբադաշտի հարթեցման աշխատանքների դիմաց կատարողին վճարվել է 2017թ. 9,186.7 հազ. դրամ և 2018թ.՝ 8,273.2 հազ. դրամ:

Հեղևանք

Աղբավայրի հարթեցման աշխատանքների համար կազմված կատարողական ակտերում նշված աղբի հարթեցման ծավալները գրվել են ելնելով պայմանագրում նշված ծավալներից՝ առանց հիմնավոր հաշվարկների՝ հաշվի չառնելով աղբավայրում տեղադրված աղբի փաստացի ծավալները:

Առաջարկ

Աղբադաշտի հարթեցման աշխատանքների հետ կապված կատարողական ակտերը կազմելիս հաշվի առնել աղբադաշտ տեղափոխված և տեղադրված աղբի իրական ծավալները, առաջնորդվելով կնքված պայմանագրի պահանջներով:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Խոշոր եզրաչափերի աղբի տեղափոխման ծավալների հաշվարկի չունենալը պայմանավորված է նրանով, որ երկրաշարժից հետո տարբեր թաղամասերում, հատկապես տնակային ավաններում կուտակված է հսկայական քանակությամբ շին. աղբ: Այն հեռացվում է ինչպես համայնքապետարանի, այնպես էլ բնակիչների ուժերով: Հնարավոր չէ հաշվառել հատկապես քանդված տնակներից հետո առաջացած աղբակույտերի ծավալները: Բացի դրանից 2017թ. հանրապետությունում հայտարարված էր “Մաքուր Հայաստան” ծրագիրը որի շրջանակներում քաղաքի տարածքում արձանագրված թվով 50 ոչ պաշտոնական աղբակույտերից հեռացվել է մոտ 300 ավտոմեքենա կոշտ թափոններ:

22. Ավտոմեքենաների վարձակալության վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017թ. համար կնքվել են թվով 4 և 2018թ. համար թվով 9 տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրեր: Կնքված պայմանագրերի համաձայն՝ վարձակալված տրանսպորտային միջոցների համար 2017թ. փոխանցվել է 3,198.5 հազ. դրամ և 2018թ.՝ 3,967.0 հազ. դրամ: Մասնավորապես, 01.11.2017թ. համայնքապետարանը կնքել է ԿԱՄԱԶ-6520 մակնիշի և CAT 428E բարձիջի վարձակալության

պայմանագիր: ԿԱՄԱԶ-ի համար վարձակալության գումարը կազմել է յուրաքանչյուր ամիս 600.0 հազ. դրամ, իսկ բարձիչի համար՝ 700.0 հազ. դրամ: Պայմանագրով՝ ԿԱՄԱԶ մականիշի ավտոմեքենան շահագործվել է 1 ամիս, իսկ բարձիչը՝ 2 ամիս: Կազմվել են կատարողական ակտեր, համաձայն որոնց կատարվել են փողոցների հարթեցման և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքներ: Պետք է նշել, որ ակտերում աշխատանքների ծավալները նշված չեն, ինչպես նաև նախապես չեն կազմվել թերությունների ակտեր, համաձայն որոնց անհրաժեշտություն է առաջացել համապատասխան տեխնիկայի վարձակալության համար:

2017թ. կնքվել են նաև թվով երեք այլ մեքենաների վարձակալության պայմանագրեր, սակայն որևէ փաստաթղթում /պայմանագիր, ավտոուղեգիր, արձանագրություն/ չի նշվել տվյալ տրանսպորտային միջոցի վարձակալության նպատակը:

Հետևանք

Արդյունքում նշված տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրերը կնքվել են առանց հիմնավոր հաշվարկների, այն է՝ աշխատանքների ծավալների և կատարման ժամկետների վերաբերյալ:

Առաջարկ

Տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրերը կնքել անհրաժեշտությունից ելնելով՝ պայմանագրերում նշելով կատարվող ծառայության մատուցման բնույթը, ծավալները և կատարման ժամկետները:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Վարձակալած Կամազ-6520 մականիշի ավտոմեքենան օգտագործվել է Լոռու մարզի Մարգահովիտ գյուղից Գյումրի քաղաքի գլխավոր տոնածառի ճյուղերի տեղափոխման համար: Կամազ մեքենան և բարձիչ տեխնիկան օգտագործվել է նաև Ա.Մանուկյան փողոցի կամուրջի տակ գտնվող տարածքի, Ղորղոբա գետի հունի մաքրման, ինչպես նաև համայնքի տարածքից հողակույտերի, շին.աղբի մաքրման և տեղափոխման, “Մաքուր Հայաստան” ծրագրի իրականացման ուղղությամբ շենքերի փլատակների մաքրման և համայնքի տարածքից հեռացման նպատակով:

23. Կանաչապարման գծով աշխատակիցներին հարկացված աշխատավարձերի վերաբերյալ

2017-2018 թթ. ընթացքում հաստիքացուցակներում կանաչապարման աշխատակիցների թվաքանակը հաստատվել է առանց լիարժեք կատարված հաշվարկների, իսկ նախահաշիվները կազմվել են հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում փաստացի կատարված ծախսերը:

Անհամապատասխանություն

Համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017թ.

հաստիքացուցակում ընդգրկվել են նաև կանաչապատման գծով աշխատանքների կատարման թվով 68 աշխատակիցներ, «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի 2017թ. երկրորդ կիսամյակի համար հաստատված հաստիքացուցակում ընդգրկվել են թվով 61 կանաչապատման աշխատակիցներ և 2018թ. հաստատված հաստիքացուցակում ընդգրկվել են թվով 55 աշխատակիցներ: Պետք է նշել, որ հաստիքացուցակներում կանաչապատման գծով բանվորների աշխատավարձերը յուրաքանչյուր տարի հաշվարկվել է յոթ ամիսների կտրվածքով:

2017թ. ընթացքում կանաչապատման գծով աշխատակիցների փաստացի աշխատավարձը կազմել է 39,798.5 հազ. դրամ, 2018թ.՝ 41,182.5 հազ. դրամ:

Հաշվեքննությանը չի ներկայացվել համայնքի կանաչապատ տարածքների մակերեսների հաշվարկի վերաբերյալ և մեկ աշխատողին բաժին ընկնող կանաչապատ տարածքների խնամքի վերաբերյալ տեղեկատվություն և այլն:

Հերևանք

Արդյունքում, 2017-2018 թթ. ընթացքում հաստիքացուցակներում կանաչապատման աշխատակիցների թվաքանակը հաստատվել է առանց լիարժեք կատարված հաշվարկների, իսկ նախահաշիվները կազմվել են հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում փաստացի կատարված ծախսերը:

Առաջարկ

Կատարել կանաչապատ տարածքների հաշվառում, կանաչապատման աշխատանքներում ներգրավված աշխատողների հաստիքացուցակը հաստատել տվյալ հաշվառումից ելնելով, աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերը կնքել ելնելով նրանց կողմից տվյալ աշխատանքում ներգրավվածության աստիճանից:

24. Կանաչապատման համար ձեռք բերված ծառերի, թփերի և սածիլների համար կադարված փաստացի ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Գյումրու համայնքապետարանը 04.05.2017թ. կնքել է պայմանագիր 400 հատ տարբեր տեսակի ծառերի, 8450 հատ թփերի, 50000 հատ ծաղկասածիլների և 110 կգ գազոնի սերմի ձեռք բերման համար, պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 3,665.0 հազ. դրամ:

Հաշիվ ապրանքագրի դուրս գրման և ապրանքների առաքման ամսաթիվ է նշվել 01.08.2017թ., սակայն համաձայն 28.06.2017թ. կազմած ակտերի, վերը նշված ապրանքները մատակարարի կողմից համայնքապետարանին հանձնվել և վերջինիս կողմից «օգտագործվել» են 2017թ. ապրիլ-մայիս ամիսներին:

Այսպիսով, 2017թ. ընթացքում ծառերի, թփերի և ծաղկասածիլների ձեռք բերման, հանձնման և տեղադրման աշխատանքների կատարման համար կազմված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

«Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի կողմից 2018թ. ընթացքում ձեռք են բերվել 3,310.0 հազ. դրամի ծառեր, թփեր, ծաղկասածիլներ և գազոնի սերմեր: Մասնավորապես՝

«Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի և մատակարար ընկերության միջև 18.04.2018թ. կնքվել է պայմանագիր ծառերի, թփերի և ծաղկասածիլների ձեռքբերման համար՝ ընդհանուր գումարով 2,920.0 հազ. դրամի: Համաձայն տեխնիկական բնութագրի՝ պետք է մատակարարվի 400 հատ տարբեր տեսակի ծառեր, թփեր՝ 8500 հատ, ծաղկասածիլներ՝ 27050 հատ:

Հաշիվ ապրանքագրի դուրս գրման և ապրանքների առաքման ամսաթիվ է նշվել 31.05.2015թ., սակայն համաձայն կազմված ակտի, վերը նշված ապրանքները մատակարարի կողմից համայնքապետարանին հանձնվել է 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին, իսկ տեղադրման ակտը կազմվել է 31.05.2018թ.:

Այսպիսով, 2018թ. ընթացքում ծառերի, թփերի և ծաղկասածիլների ձեռքբերման և հանձնման փաստաթղթերում նույնպես առկա են անհամապատասխանություններ:

2018թ. ընթացքում ձեռք է բերվել նաև 100 կգ գազոնի սերմ, որի համար «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ն 18.04.2018թ. կնքվել է պայմանագիր: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 390.0 հազ. դրամ:

Հետևանք

Առկա է անհամապատասխանություն պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների և փաստացի կազմված փաստաթղթերի հետ, արդյունքում ստացվում է, որ ծառերը, թփերը և սաղկասածիլները ստացվել են ավելի ուշ, քան կազմված փաստաթղթերի համաձայն դրանք տեղադրվել է համապատասխան վայրերում:

Առաջարկ

Կանաչապատման աշխատանքների համար ապրանքների մատակարարումը կատարել ըստ պայմանագրի ժամանակացույցի, իսկ համապատասխան փաստաթղթերը կազմել ելնելով փաստացի կարված աշխատանքներից:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Կանաչապատման համար ձեռք բերված ծառերի, թփերի, սածիլների գնման և հաշիվ-ապրանքագրերի ստացման ժամկետների անհամապատասխանությունը բացատրվում է նրանով, որ մատակարար կազմակերպությունը ժամանակին տրամադրել է պայմանագրով նախատեսված ապրանքները, սակայն էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը ներկայացրել է ավելի ուշ, թյուրիմացաբար ներառելով ոչ ճիշտ տեղեկատվություն փաստացի մատակարարման վերաբերյալ,

քանզի համայնքապետարանում առկա են ապրանքների իրական մատակարարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունները:

25. 2017-2018թթ. ընթացքում համայնքի բյուջեից թափառող կենդանիների վնասագերծման համար կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

2017-2018թթ. ընթացքում համայնքի թափառող կենդանիների վնասագերծման աշխատանքների կատարման համար համայնքի բյուջեից փաստացի հատկացվել է 6,639.3 հազ. դրամ, այդ թվում 2017թ.' 3,488.1 հազ. դրամ և 2018թ.' 3,151.2 հազ. դրամ:

Քաղաքի թափառող կենդանիների վնասագերծման աշխատանքները կատարվել են 2017թ.' «Հավերժ հիշատակ» ՓԲԸ-ի կողմից և 2018թ.' «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» ՀՈԱԿ-ի կողմից: Գյումրու համայնքապետարանը 2017-2018 թթ. ընթացքում վերը նշված ծառայությունների ձեռք բերումը կատարել է մեկ անձից, և այդ նպատակով 2017թ.«Հավերժ հիշատակ» ՓԲԸ-ի հետ կնքվել են թվով երեք պայմանագրեր, ընդհանուր գումարով 4,334.2 հազ. դրամի, 2018թ.' «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» ՀՈԱԿ-ի հետ կնքվել են թվով 4 պայմանագրեր, ընդհանուր գումարով 3,699.0 հազ. դրամի:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի մասով, այն է.

Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասով՝ այն է.

1) Արգելվում է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Ըստ պայմանագրերին կից տեխնիկական բնութագրերի՝ մեկ թափուռ կենդանու համար սահմանվել է վնասերծման վճար՝ 1400 դրամ, բանվորի վճարը մեկ օրվա համար կազմել է

3500 դրամ, ավտոծառայության վճար մեկ օրվա համար՝ 4000 դրամ և մեկ օրվա համար ավտոմեքենայի վառելանյութ՝ բնական սեղմած գազ՝ 2000 դրամ: Պետք է նշել, որ տեխնիկական բնութագրում հստակ չի նշվել թե ինչպես պետք է իրականացնել թափառող կենդանիների վնասազերծումը և ինչպես պետք է վարվել վնասազերծված կենդանիների հետ: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն է.

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Այսպիսով, ձեռք բերվող ծառայության տեխնիկական բնութագրերը կազմվել են թերի և հստակ չեն նկարագրել ձեռք բերվող ծառայության պայմանները:

Ըստ «Հավերժ հիշատակ» ՓԲԸ-ի և «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» ՀՈԱԿ-ի կողմից 2017-2018 թթ. ընթացքում ներկայացված հաշվետվությունների՝ վնասազերծման ընդհանուր գումարը կազմել է 6,604.4 հազ. դրամ, այդ թվում 2017թ. ընթացքում կազմել է 3,361.9 հազ. դրամ, որից որսորդի վճարը կազմել է 2,269.4 հազ. դրամ, կամ վնասազերծվել է 1621 կենդանի, 2018թ. կազմել է 3,242.5 հազ. դրամ, այդ թվում որսորդի վճարը կազմել է 1,771.0 հազ. դրամ, կամ վնասազերծվել է 1265 կենդանի:

2017թ. նշված ծառայությունների մատուցման համար համայնքի բյուջեից փոխանցվել է 3,488.1 հազ. դրամ և 2018թ.՝ 3,151.2 հազ. դրամ:

Հետևանք

Համայնքապետարանի կողմից 2017-2018 թթ. ընթացքում համայնքի թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների ձեռքբերման մասով հաշվեքննությամբ արձանագրվել են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 13-րդ հոդվածների մասով՝ գնումը մեկ անձից կատարելը հիմնավորված չէ և տեխնիկական բնութագրերում հստակ չեն նկարագրվել ձեռքբերվող ծառայության պայմանները:

Առաջարկ

Համայնքի թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների համար պայմանագրերը կնքել ղեկավարվելով “Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին” ՀՀ օրենքի, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 13-րդ հոդվածների պահանջներով:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Հայտնում են, որ թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների գնման համար տեխնիկական բնութագրերը կազմվել են պատասխանատու ստրաթեգիայի կողմից՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումներից, իսկ ծառայությունների գնումը կազմակերպվել է համայնքային կազմակերպությունների միջոցով, քանի որ նմանատիպ ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններ ցանկություն չեն հայտնել իրականացնել հիշյալ ծառայությունը: Ուստի և խնդրի լուծման հրատապությունից ելնելով գնումը կատարվել է մեկ անձից, գնում կատարելու եղանակով, համայնքային կազմակերպությունների միջոցով:

26. Բարեկարգման աշխատանքների համար վառելանյութի և ավտոյուղերի փաստացի կադարված ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Վառելանյութի ծախսի դուրս գրման համար հիմք են հանդիսացել լրացված ավտոուղեգրերը: Բարեկարգման աշխատանքներում ներգրավված մեքենամեխանիկաների ավտոուղեգրերը նույնպես լրացվել են նմանատիպ թերություններով, ինչպես որ լրացված են աղբահանության և սանիտարական աշխատանքներում ներգրավված մեքենա-մեխանիկաների ավտոուղեգրերի վերաբերյալ արդեն մանրամասն նկարագրված է:

2018թ. օգոստոս ամսին Բյուջետային հիմնարկը՝ փաստաթղթերով դիզելային վառելիքի բացակայության պայմանաններում ցույց է տվել 555 լիտր դիզելային վառելիքի ծախս:

Դիզելային վառելիքի ձեռքբերման և ծախսի հաշվեքննությամբ պարզվել է, որ 2017թ. ընթացքում համայնքապետարանը դիզ. վառելիքի ձեռքբերման համար 30.01.2017թ. վականին պայմանագիր է կնքել մատակարար կազմակերպության հետ: Պայմանագրով նախատեսվել է ձեռք բերել 110000 լիտր դիզ վառելիք,

մեկ լիտրի արժեքը կազմել է 294 դրամ, ընդհանուր գումարով 32,340.0 հազ. դրամի: 01.01.2017 թ. դրությամբ դիզելային վառելիքի մնացորդը կազմել է 12250 լիտր, 2017թ. ընթացքում ստացվել է 110000 լիտր դիզելային վառելիք, ծախսվել է 113125 լիտր, 01.01.2018թ. դրությամբ դիզելային վառելիքի մնացորդը կազմել է 9125 լիտր: 2018թ. ընթացքում ստացվել է 110000 լիտր դիզ. վառելիք, ծախսվել է 128222 լիտր, 01.01.2019 թ. դրությամբ դիզելային վառելիքի մնացորդը կազմել է 903 լիտր:

2018թ.ապրիլ ամսին փոխատվության կարգով ձեռք է բերվել դիզ. վառելիք երկու ֆիզիկական անձանցից, յուրաքանչյուրից 5000-ական լիտր և այն հետ է վերադարձվել վերջիններիս 2018 թվականի հունիս ամսին:

Հեղևանք

Այսպիսով, 2018թ. օգոստոս ամսին Բյուջետային հիմնարկը՝ փաստաթղթերով դիզելային վառելիքի բացակայության պայմանաններում ցույց է տվել 555 լիտր դիզելային վառելիքի ծախս:

Առաջարկ

Բյուջետային հիմնարկի կողմից դիզեյնին վառելիքի հաշվառումը կատարել հաշվի առնելով մուտքագրված և ելքագրված վառելանյութի փաստացի ծավալները:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Բարեկարգման աշխատանքների դեպքում վառելանյութի, քսայուղերի ծախսի հաշվարկը և դուրսգրումը կատարվել է նույն եղանակով, ինչպես աղբահանության ծառայությունների վառելանյութի և քսայուղերի ծախսագրման պարագայում: Ինչ վերաբերվում է համայնքապետարանում փաստաթղթերով 555 լիտր վառելիք չունենալու և ծախսագրելու հանգամանքին, ապա հայտնում են, որ 2018 թվականի օգոստոս ամսի սկզբին մատակարար կազմակերպությանը ամբողջությամբ տրամադրել է դիզ վառելիքի կտրոնները, սակայն տեխնիկական վրիպակի պատճառով էլեկտրոնային հարկային հաշիվ դուրս չի գրել որն էլ հանդիսացել է անհամապատասխանության պատճառ:

27. Գյումրու համայնքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման աշխատանքների վերաբերյալ

Անհամապատասխանություն

Գյումրու համայնքապետարանի և տվյալ ծառայությունը մատուցող ընկերության միջև 2017թ. կնքել են թվով երեք պայմանագրեր, ընդհանուր գումարով 92,486.6 հազ. դրամի և 2018թ. կնքվել է մեկ պայմանագիր՝ 87,750.0 հազ. դրամի:

Համաձայն 2017-2018 թթ. համար կնքված պայմանագրերին կից հավելվածների, ներկայացված ծավալաթերթերում հաշվարկները կատարվել են 5200-5300 սովորական լամպերի և 1000 հատ էկոնոմ լամպերի հաշվարկով: Ստացվել է, որ մեկ սովորական լամպով լուսատուի մեկ կետի համար 1 ամսվա շահագործման ծառայության արժեքը կազմել է 1300 դրամ, իսկ մեկ հատ էկոնոմ լամպով լուսատուի մեկ կետի համար 1 ամսվա շահագործման ծառայության արժեքը կազմել է 650 դրամ: Նշված պայմանագրերին կից ծավալաթերթերում առկա են սխալ կատարված հաշվարկներ, մասնավորապես 29.12.2016թ. կնքված պայմանագրին կից ծավալաթերթում 5200 հատ լամպերի 1 ամիս 22 օր շահագործման ծախսը հաշվարկվել է 12,168.0 հազ. դրամ և մեկ լուսատուի մեկ ամսվա շահագործման ծախսը ինչպես նշվել է վերևում հաշվարկվել է 1300 դրամ: Սակայն, ըստ կատարված վերահաշվարկի ստացվել է, որ մեկ լուսատուի մեկ ամսվա շահագործման ծախսը կազմում է 1325 դրամ (12168000/53օր/5200լուսատուx30օր): 1000 հատ էկոնոմ լամպերի համար 1 ամիս 22 օր շահագործման ծախսը հաշվարկվել է 1,170.0 հազ. դրամ և մեկ լուսատուի մեկ ամսվա շահագործման ծախսը, ինչպես նշվել է վերևում, հաշվարկվել է 650 դրամ: Սակայն, ըստ կատարված վերահաշվարկի ստացվել է մեկ էկոնոմ լամպով լուսատուի մեկ ամսվա շահագործման ծախսը կազմում է 662 դրամ (1170000/53օր/1000լուսատուx30օր):

23.02.2017թ. կնքված պայմանագրին կից ծավալաթերթում 5200 հատ լամպերի 25 օրվա համար շահագործման ծախսը հաշվարկվել է 5,495.2 հազ. դրամ և մեկ լուսատուի մեկ ամսվա շահագործման ծախսը հաշվարկվել է 1300 դրամ: Ըստ կատարված վերահաշվարկի ստացվել է մեկ լուսատուի մեկ օրվա շահագործման ծախսը կազմում է 42.27 դրամ, մեկ ամսվա համար կլինի 1268 դրամ (5,495226/25օր/5200լուսատուx30օր): 1000 հատ էկոնոմ լամպերի համար 25 օրվա համար շահագործման ծախսը հաշվարկվել է 528387 հազ. դրամ և մեկ լուսատուի մեկ ամսվա շահագործման ծախսը հաշվարկվել է 650 դրամ: Սակայն, ըստ կատարված վերահաշվարկի ստացվել է, որ մեկ էկոնոմ լամպով լուսատուի մեկ ամսվա շահագործման ծախսը կազմում է 634 դրամ (528387/25օր/1000լուսատուx30օր):

Արդյուքում, ըստ կատարված վերահաշվարկների 2017թ. ընթացքում առանց մրցույթի կնքված երկու պայմանագրերի գնման ժամանակացույցերի սահմաններում հաշվարկված գումարները համապատասխանում է 01.01.2017թ. մինչև 19.03.2017թ. ներկայացված կատարարողական ակտերի գումարներին:

Պետք է նշել, որ 2017թ. համար կնքված երկու պայմանագրերով՝ 29.12.2016թ. և 23.02.2017թ. գնումը կատարվել է մեկ անձից՝ առանց մրցույթ հայտարարելու:

23.02.2017թ. կնքված պայմանագրի առումով առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի մասով, որտեղ նշվում են մեկ անձից գնում կատարելու պայմանները:

2017-2018 թթ. համար անցկացված մրցույթների արդյունքներում հաղթող կազմակերպությունը ներկայացրել է նույն գնային առաջարկը՝ մեկ լուսատուի շահագործման հաշվով, չնայած այն բանի որ 2017թ. մրցույթին մասնակցել են երկու մասնակիցներ, իսկ 2018թ.մրցույթին մասնակցել և հաղթող է ճանաչվել նույն ընկերությունը:

Համայնքապետարանի կողմից հաշվեքննությանը չի ներկայացվել լուսավորության ցանցի համար կազմած որևէ թերությունների ակտեր, ինչպես նաև չի ներկայացվել փաստաթղթեր ծառայություն մատուցող ընկերության կողմից փոխարինված էլեկտրական սարքավորումների և նյութերի վերաբերյալ:

Հետևանք

Արդյունքում, համայնքի գիշերային լուսավորության ցանցի շահագործումը 2017-2018 թթ. ընթացքում իրականացվել է նույն կազմակերպության կողմից, յուրաքանչյուր տարի ներկայացնելով նույն գնային առաջարկը, այսինքն մեկ կետի շահագործման ծառայության արժեքը կազմել է նույն գումարը, չնայած այն բանին, որ մրցույթին մասնակցել է նաև այլ կազմակերպություն: Պայմանագրերը կնքվել են ծավալաթերթերի հիման վրա կատարված հաշվարկներից ելնելով, սակայն կատարողական ակտերը յուրաքանչյուր ամիս ներկայացվել

են նույն գումարի չափով, մեկ միավորի սպասարկման գումարը բազմապատկելով ընդհանուր լամպերի թվով:

Առաջարկ

Գյումրու համայնքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման համար ծառայության գնումը կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից փոխարինված էլեկտրական սարքավորումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել համայնքապետարան՝ հաջորդ տարվա համար նախատեսվելիք ծախսերի պլանավորման համար:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Լուսավորության ցանցի շահագործումը և սպասարկումը նույն կազմակերպության կողմից իրականացնելը բացատրվում է հետևյալով. Մրցութները եղել են էլեկտրոնային և բաց՝ “Գնումների մասին” ՀՀ օրենքին համապատասխան: Մրցութներին մասնակցության հայտ ներկայացրել է միայն տվյալ ընկերությունը, որն էլ ճանաչվել է մրցույթի հաղթող: Փողոցային լուսավորության ցանցը սպասարկող ընկերության հետ լրացուցիչ կնքված 29.12.2016թ. և 23.02.2017թ. պայմանագրերով հաշվարկված գումարները համապատասխանում են 01.01.2017թ. մինչև 19.03.2017թ. ներկայացրած կատարողական ակտերի գումարին: 29.12.2016 թվականին կնքված համաձայնագրով գնումը կատարվել է մեկ անձից գնման եղանակով, քանի որ տվյալ ժամանակաշրջանում գործող և ոլորտը կարգավորող օրենսդրությունը հնարավորություն էր տալիս կնքել նախորդ պայմանագրի 20% չափով լրացուցիչ համաձայնագիր: 23.02.2017 թվականին կնքված պայմանագրով գնումը կատարվել է մեկ անձից գնման եղանակով, քանզի մրցույթը արդեն հայտարարված էր և տարաբնույթ պարզաբանումների պատճառով ժամկետների առումով ձգձգվում էր ու հնարավոր չէր այդ ընթացքում համայնքի փողոցային լուսավորության ողջ համակարգը թողնել առանց սպասարկման: Ինչ վերաբերում է սպասարկման պայմանագրերի շրջանակներում ձեռք բերվող լամպերի, դրոսելների, հաշվիչների որակի և շահագործման ժամկետներին, դրանք առկա են մրցույթի հայտերի նախահաշվում, որը կազմվում է ըստ հանրապետությունում գործող միասնական նորմատիվների և գների ժողովածուի (ЕНП): Ծառայություն մատուցող ընկերության կողմից փոխարինված էլ.սարքավորումների և նյութերի վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել, քանի որ ընկերությունը մրցույթը շահել է 1 լամպի շահագործման և սպասարկման հաշվարկով, իսկ օգտագործված նյութերի և սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացման պայմանագրային պարտավորություն ընկերությունը չի ունեցել:

28. «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի կողմից 2017-2018 թթ. ընթացքում կատարված գնումների գործընթացի վերաբերյալ

Անհամապատասխանություն

«Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի կողմից 2017-2018 թթ. ընթացքում կատարվել է 90,920.7 հազ. դրամի ապրանքների և ծառայությունների գնում, այդ թվում 2017թ.

ընթացքում կատարվել է 8,935.4 հազ. դրամի գնում և 2018թ. ընթացքում կատարվել է 81,985.3 հազ.դրամի:

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի մասով, այն է.

Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

«Մեկ անձից գնում» ընթացակարգի, այն է. Գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը՝ 1,000.0 հազ. դրամը, հիմքով 2017-2018թթ. ընթացքում, ընդհանուր գումարային արտահայտությամբ, իրականացվել են 19,932.8 հազ. դրամի ձեռքբերումներ: Կատարված հաշվեքննության արդյունքում պարզվել է, որ շատ հաճախ նույն գնման առարկան բաժանվել է առանձին չափաբաժինների, օրինակ՝ 2017թ. ընթացքում ձեռք են բերվել 2,083.0 հազ. դրամի ավտոպահեստամասեր, որը բաժանվել է 11 առանձին չափաբաժինների, իսկ 2018թ. ձեռք են բերվել 3,782.0 հազ. դրամի ավտոպահեստամասեր, այն բաժանվել է 20 առանձին չափաբաժինների: Շինանյութի ձեռք բերման մասով՝ 2017թ. ընթացքում ձեռք է բերվել 3,552.3 հազ. դրամի շինանյութ, որը բաժանվել է 10 առանձին չափաբաժինների և այլն: Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Ընդ որում՝ վերոնշյալ ձեռքբերումների շրջանակներում ապրանքներ մատակարարած կազմակերպությունները հիմնականում նույնն են:

Հետևանք

Արդյունքում 2017-2018 թթ. ընթացքում ձեռքբերված ապրանքների մասով գնման առարկան Բյուջետային հիմնարկի կողմից բաժանվել է առանձին չափաբաժինների մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Առաջարկ

Բյուջետային հիմնարկի կարիքների համար գնումները կատարելիս առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով:

Համայնքապետարանի դիրքորոշումը

Պետք է նշել, որ համայնքապետարանի և համայնքային հիմնարկի կողմից մատուցվող ծառայությունների իրականացման ընթացքում հաճախակի առաջանում են անկանխատեսելի իրավիճակներ երբ անհապաղ անհրաժեշտ է շուտափույթ և անհետաձգելի լուծումներ տալ այս կամ այն հրատապ կենսական նշանակություն ունեցող խնդրին, ինչով պայմանավորված երբեմն ժամկետի առումով հնարավոր չի լինում խնդիրների լուծման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումները իրականացնել մրցույթների միջոցով և գնումները կատարվում են մեկ անձից գնում կատարելու եղանակով: Մշտապես տարվում են բազմակողմանի և անհրաժեշտ աշխատանքներ հիշյալ հարցի լուծման ուղղությամբ:

29. «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2017-2018 թթ. ընթացքում կապարված ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Համայնքի 2017թ. բյուջեով «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով փաստացի ծախսը կազմել է 58,966.2 հազ. դրամ, 2018թ.՝ 35,460.0 հազ. դրամ: Ստորև արդյուսակում ներկայացվում է «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով կատարված ծախսերի ուղղվածությունը.

Հազ. դրամ

Ծախսերի ուղղվածությունը	2017թ.	2018թ.
Բնակիչներին տրված դրամական օգնություններ	38,540.0	21,510.0
Աշխարհի և Եվրոպայի առաջնության Գ ու մրում մարզիկների կողմից բարձր սրբյ ու նքներ սրճանագրել ու համար դրամական պրզկներ	20,465.0	13,950.0
Ընդամենը	58,966.0	35,460.0

Գյումրու մարզիկների կողմից Աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքներ արձանագրելու համար դրամական պարգևները վճարվել են անկանխիկ՝

գումարները փոխանցվել են պարգևատրում ստացողների հաշիվներին, իսկ բնակիչներին տրված դրամական օգնությունները վճարվել են համայնքապետարանի դրամարկղից՝ կանխիկ եղանակով:

Համայնքապետարանի դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման հաշվեքննությամբ պարզվել է, որ մեկից ավելի անձանց մեկ միասնական փաստաթղթով դրամարկղից կանխիկ դրամով վճարումները իրականացնելիս առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1260-Ն որոշման հավելված 1-ով սահմանված կարգի 9-րդ, 13-րդ, 15-րդ և 22 -րդ կետերով, այն է «...Տեղեկագրով կանխիկ դրամ վճարելիս՝ դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է սույն կարգի 9-րդ կետում նշված ժամկետում դրամարկղային ելքի օրդերի կազմման օրը: Դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակումը կատարվում է ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ, ոչ ուշ, քան ամսվա վերջին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում...»: «...Մուտքի և ելքի օրդերները համարակալվում են առանձին, այսինքն՝ մուտքի օրդերները համարակալվում են առանձին հերթականությամբ, իսկ ելքի օրդերները՝ առանձին: Համարակալումները վերսկսվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից» : Ավագանու 12.12.2016թ. թիվ 224-Ա որոշմամբ, սահմանվել է, որ համայնքի բնակիչներին պետք է տրվի 1,440.0 հազ. դրամ նպաստ: Դրամարկղի վարման գրքի տվյալների համաձայն՝ նշված գումարը վճարելու համար դրամարկղից ելքագրվել է երկու անգամով՝ 26.12.2016թ. դրամարկղի ելքի թիվ 545 օրդերով 1,340.0 հազ.դրամ և 27.01.2017թ. դրամարկղի թիվ 555 ելքի օրդերով 80.0 հազ.դրամ,՝ 1,420.0 հազ.դրամ: Արդյունքում դրամարկղի փաստաթղթերի համաձայն դրամարկղից ելքագրվել է ընդամենը 1,420.0 հազ.դրամ, մինչդեռ վճարման տեղեկագրերի համաձայն վճարումը ցույց է տրվել 1,440.0 հազ.դրամ, կամ 20.0 հազ.դրամ ավելի քան կատարվել է դրամարկղից ելքագրում:

Այսպես՝

Աղյուսակ-14

ՀՀ	Ավագանու որոշման փարի, ամսաթիվ	Դրամարկղի ելքի օրդերի քանակը	Դրամարկղի ելքի օրդեր				Վճարման տեղեկագրերի համաձայն ելքագրված գումար Հազ. դրամ
			Դրամարկղի վարման գրքում նշված համար	Ճիշտ համարը	Ամսաթիվ	Գումար Հազ. դրամ	
1	12.12.2016թ թիվ 224-Ա Ընդամենը	1	545	545	26.12.2016թ	1,340.0	-
		2	555	555	27.01.2017թ	80.0	1,440.0
						1,420.0	1,440.0
2	10.11.2016թ թիվ 187-Ա	1	542	542	05.12.2016թ	4,000.0	-
		2	543	543	09.12.2016թ	3,000.0	-
		3	544	544	23.12.2016թ	200.0	-

		4	556	556	27.01.2017թ	215.0	7,415.0
	Ընդամենը					7,415.0	7,415.0
3	07.04.2017 թիվ 138-Ա	1	561	561	06.05.2017	5,000.0	-
		2	564	564	12.05.2017թ	1,000.0	-
		3	565	565	17.05.2017թ	1,000.0	-
		4	657	567	22.05.2017թ	500.0	-
		5	569	569	23.06.2017	120.0	7,620.0
	Ընդամենը					7,620.0	7,620.0
4	06.12.2017թ թիվ 135-Ա	1	577	577	19.12.2017թ	7,500.0	-
		2	582	582	24.01.2018թ	190.0	-
		3	583	583	14.02.2018թ	100.0	-
		4	585	585	28.02.2018	15.0	7,805.0
	Ընդամենը					7,805.0	7,805.0
5	19.02.2018 թիվ 5-Ա	1	586	586	28.02.2018	700.0	-
		2	587	587	15.03.2018թ	770.0	1,470.0
	Ընդամենը					1,470.0	1,470.0
6	19.04.2018 թիվ 44-Ա	1	589	589	30.04.2018	3,000.0	-
		2	594	594	04.05.2018	2,000.0	-
		3	596	596	21.05.2018թ	2,500.0	-
		4	560	600	23.05.2018	75.0	7,575.0
	Ընդամենը					7,575.0	7,575.0
7	19.06.2018 թիվ 85-Ա	1	565	605	29.06.2018	1,000.0	-
		2	566	606	11.07.2018թ	690.0	1,690.0
	Ընդամենը					1,690.0	1,690.0
8	11.12.2018թ թիվ 186-Ա	1	575	615	21.12.2018թ	5,000.0	-
		2	576	616	27.12.2018թ	1,735.0	-
		3	578	618	21.01.2019թ	300.0	-
		4	579	619	30.01.2019	70.0	7,105.0
	Ընդամենը					7,105.0	7,105.0

Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1260-Ն որոշման հավելված 1-ով սահմանված կարգի 9-րդ, 13-րդ, 15-րդ և 22 -րդ կետերով, որի արդյունքում համայնքապետարանի հաշվապահությունում դրամարկղի վարման գրքում գումարի մուտքագրման և ելքագրման համարակալումը չի առանձնացվել յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից ընդ որում համարակալումը կատարվել է ոչ ճիշտ, որոշ դեպքերում սխալներով, իսկ վճարման տեղեկագրերով կանխիկ դրամ վճարելիս յուրաքանչյուր ամիս չի փակվել, այլ վճարումները կատարվել են երկուսից երեք ամիսների ընթացքում, և յուրաքանչյուր վճարման տեղեկագրին համապատասխան չի կազմվել դրամարկղի ելք օրդեր, իսկ դրամարկղի ելքագրման օրդերների գումարները արտացոլվել են թերություններով՝ համապատասխանեցնելով ավագանու որոշմամբ տրված օգնության գումարների հետ:

Առանց ավագանու համապատասխան որոշումների 3 քաղաքացիների տրվել է օգնություն՝ ընդամենը 40.0 հազ. դրամ (մեկ քաղաքացու տրվել է 10.0 հազ.դրամ, իսկ երկու քաղաքացիների 15 հազարական դրամ): Առկա է անհամապատասխանություն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի

պահանջների հետ, այն է. «Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ»:

Հերևանք

Արդյունքում համայնքապետարանի հաշվապահությունում դրամարկղի վարման գրքում գումարի մուտքագրման և ելքագրման համարակալումը չի առանձնացվել յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից ընդորում համարակալումը կատարվել է ոչ ճիշտ, որոշ դեպքերում սխալներով, իսկ վճարման տեղեկագրերով կանխիկ դրամ վճարելիս յուրաքանչյուր ամիս չի փակվել, այլ վճարումները կատարվել են երկուսից երեք ամիսների ընթացքում, և յուրաքանչյուր վճարման տեղեկագրին համապատասխան չի կազմվել դրամարկղի ելք օրդեր, իսկ դրամարկղի ելքագրման օրդերների գումարները նշվել են կամայականորեն՝ համապատասխանեցնելով ավագանու որոշմամբ տրված օգնության գումարների հետ:

Առաջարկ

Դրամարկղից կանխիկ դրամ վճարներ կատարելիս առաջնորդվել ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Համայնքապետարանի դիրքորոշումը

2017-2018 թվականների դրամարկղային գործառնությունների մասով իրականացված հաշվեքննության արդյունքներով արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ հայտնում են, որ տվյալ երևույթի կանխման և հետագայում դրամարկղային գործառնությունները ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգին համապատասխան իրականացնելու նպատակով տրվել են հստակ հրահանգներ նմանատիպ վրիպումները կանխելու ուղղությամբ:

Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի թիվ 224-Ա որոշմամբ բնակիչներին հատկացվելիք 1 440 0 հազ. դրամ նպաստից ընդհանուր ցուցակում ելնելով հրատապությունից սխալմամբ 20.0 հազ դրամ ավել է վճարվել, որը հետագայում ուղղվել է:

Պարզաբանում են, որ դրամական օգնություն ստացած թվով երեք քաղաքացիներին անուն ազգանունները տեխնիկական վրիպակի պատճառով դուրս է մնացել վճարման տեղեկագրերից: Հարկ է նշել, որ հետագայում կատարվել է ճշտում և վճարումները ներառվել են 4729(այլ նպաստներ բյուջեից) տնտեսագիտական հոդվածի ծախսերի մեջ և որպես Գյումրի համայնքի բյուջեի ծախս ներկայացվել է ավագանու հաստատման:

30. «Այլ ծախսեր» հոդվածով 2017-2018թթ. ընթացքում կադարված ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Համայնքի 2017թ. բյուջեով «Այլ ծախսեր» հոդվածով ծախսը կազմել է 20,702.7 հազ. դրամ, 2018թ.՝ 19,955.3 հազ. դրամ: Ստորև՝ աղյուսակում, ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածով կատարված ծախսերի ուղղվածությունը.

Աղյուսակ-15 Հազ. դրամ

Ծախսերի ուղղվածությունը	2017թ.	2018թ.
Գյումրու օրվա առթիվ միջոցառում	7,606.8	7,400.4
Կանանց միջազգային օրվա առթիվ միջոցառում	3,000.0	2,735.1
Ամանորի առթիվ միջոցառում	6,080.0	5,769.3
Այլ միջոցառումներ և ապրանքների ձեռքբերումներ	4,015.9	4,051.4
Ընդամենը	20,702.7	19,955.3

Արդյունքում 2017-2018 թթ. ձեռք բերված ծառայության մասով գնման առարկան քաղաքապետարանի կողմից բաժանվել է առանձին չափաբաժինների մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Նշված հոդվածով ծախսերն իրականացնելու համար գնումներն իրականացվել են երկու ընթացակարգով՝ գնանշման հարցումով /ԳՀ/ և մեկ անձից: 2017թ. գնանշման հարցումով իրականացվել է 12,258.1 հազ. դրամի և մեկ անձից 8444.6 հազ. դրամի ծառայության գնում:

2018թ. գնանշման հարցումով իրականացվել է 12,483.6 հազ. դրամի և մեկ անձից 7,472.6 հազ. դրամի ծառայության գնում:

Նշված ծառայության գնումը իրականացվել է չորս տարբեր տնտեսագիտական հոդվածներով, նույն թվում «Այլ ծախսեր» /4861/ հոդվածով երկու կազմակերպության միջոցով 1,041.9 հազ. դրամի:

Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի պահանջների հետ, այն է. «Մեկ գնման առարկան արգելվում է բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով», ինչպես նաև նույն օրենքի 23-րդ հոդվածի, 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, այն է. 1) «գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ» և 2) «արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել»:

Հեղևանք

Արդյունքում 2017թ. ձեռքբերված ծառայության մասով գնման առարկան համայնքապետարանի կողմից բաժանվել է առանձին չափաբաժինների մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով:

Առաջարկ

Առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով:

31. «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով կատարված ծախսերի վերաբերյալ

Անհամապատասխանություն

Համայնքի կարիքների համար 2018թ. ֆոնդային բյուջեով «Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով նախատեսվել է 161,737,3 հազ. դրամի ծախս: Նշված ծախսի դիմաց փաստացին կազմել է 153,647.6 հազ. դրամ: Նույն թվում ձեռք է բերվել ԿԱՄԱՂ - 53215 մակնիշի ավտոմեքենայի բազայի վրա կողային բեռնումով երեք հատ աղբատար KO - 440-5 ընդամենը՝ 92,250.0 հազ. դրամի և երկու հատ ինքնաթափ ԿԱՄԱՂ - 55111 մակնիշի ավտոմեքենաներ ընդամենը՝ 44,060.0 հազ. դրամի, ընդհանուր՝ 136,310.0 հազ. դրամի:

ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՊՁԲ- 05/18 ծածկագրով բաց մրցույթի գնման առաջարկի փաթեթների հաշվեքննությամբ պարզվել է, որ գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. կազմված 3-րդ արձանագրության 1-ին կետով գնահատող հանձնաժողովը ընդունել է ի գիտություն, որ երկու չափաբաժիններով հայտեր են ներկայացրել 4 կազմակերպություններ:

Նույն արձանագրության 2-րդ կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է երկու չափաբաժիններում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների որակավորման չափանիշերի, գնման առարկայի տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանության մասին տվյալներ: Արձանագրվել է, որ 1-ն չափաբաժնով՝ ընկերությունը և 2-րդ չափաբաժնով՝ ընկերությունը ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՊՁԲ- 05/18 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում համարվել են առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ և ներկայացրել են հրավերով սահմանված որակավորման չափանիշերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող գնման առարկայի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ հաղթող կազմակերպությունը 1-ին չափաբաժնի համար ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, իսկ չհաղթողի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ կապված գնման առարկայի տեխնիկական բնութագրի պահանջների հետ:

Անհամապատասխանություններից որպես առավել էական հանձնաժողովը առանձնացրել է հետևյալ բաղադրիչները՝

Աղյուսակ-16

Հ/Հ	Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով բաղադրիչի անվանում	Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով բաղադրիչի ցուցանիշ	Մասնակցի կողմից առաջարկված տեխնիկական բնութագրով բաղադրիչի ցուցանիշ	Համապատասխանություն
1	Անիվային բազա	6x4	4x2	Չի համապատ.
2	Շարժիչի հզորություն ձ/ու	240	230	Չի համապատ.
3	Թափքի օգտակար ծավալ խմ	22	18.5	Չի համապատ.
4	Բեռնող թափոնների զանգված կգ.	8500	8400	Չի համապատ.

Գնահատող հանձնաժողովը համաձայն ՀՀ կառավարության 2017թ.մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի՝ փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1.Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից

2.Չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

24.08.2018թ. կազմված չորրորդ արձանագրության երկրորդ կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ չհաղթող կազմակերպությունը չի շտկել հանձնաժողովի կողմից արձանագրած անհամապատասխանությունը: Այնուհետև հանձնաժողովը որոշել է ծանուցել հաղթող կազմակերպությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղարկել հրավերով սահմանված որակավորման չափանիշերի պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող գնման առարկայի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը: Արդյունքում հաղթող կազմակերպությունը համարվել է որպես 1-ին չափաբաժնի հաղթող և 12.09.2018թ. կնքվել է ԿԱՄԱՁ - 53215

մակնիշի ավտոմեքենայի բազայի վրա կողային բեռնումով երեք հատ KO-440-5 աղբատարների ձեռքբերման համար պայմանագիր 92,250.0 հազ.դրամի:

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ հաղթող կազմակերպությունը 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին, որի արդյունքում որպես 1-ին տեղը զբաղեցրած կազմակերպություն նրա հետ 12.09.2018թ. կնքվել է երկու հատ ինքնաթափ ԿԱՄԱՁ – 55111 մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերման համար պայմանագիր 44,060.0 հազ. դրամի:

Պարզվել է նաև, որ «Գյումրու կոմունալ ծառայության և աղբահանության ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերման» գնման համար համայնքապետարանում կազմակերպված ՀՀՇՄԳՔՀԿՀ-ԲՄԱՊՁԲ- 05/18 ծածկագրով բաց մրցույթի գնման հայտով, համապատասխան ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագրի հատկանիշները ամբողջությամբ չեն բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքներից և պահանջներից: Այսպես՝ աղբահանության ավտոտրանսպորտային միջոցների 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով կոնկրետ ԿԱՄԱՁ 53215 մակնիշի ավտոմեքենայի բազային տվյալները (<http://kamaz.ru.wikipedia.org.kamaz> 53215 էլեկտրոնային էջ) , իսկ որպես աղբատարի մասի տեխնիկական տվյալները ամբողջությամբ ներկայացված են կոնկրետ KO-440-5-մոդելին բնութագրող հատկանիշները (Cadminfo.ru/spetstechnika/kommunalnaya-tehnika/1.8.1.-musorovozyi, էլեկտրոնային էջ):

Աղյուսակ-17

Հ/Հ	Ավտոմեքենային բնութագրող տեխնիկական հատկանիշների անվանումը	ԿԱՄԱՁ-53215 մակնիշի ավտոմեքենային բնութագրող տեխնիկական հատկանիշներ	Մրցույթի համար սահմանված ավտոմեքենային բնութագրող տեխնիկական հատկանիշներ	Սպեցմաշ ՍՊԸ-ի կողմից մրցույթին ներկայացված ավտոմեքենայի տեխնիկական բնութագրի տվյալներ
1	Բնապահպանական ստանդարտ	Եվրո-2	Եվրո-2	Եվրո-2
2	Անիվային բազա	6x4	6x4	6x4
3	Շարժիչի մոդել	740.31	740.31	740.31
4	Շարժիչի ձ/ու	240	240	240
5	Շարժիչի տեսակ	Դիզել	Դիզել	Դիզել
6	Անվաղորդեր	10.00R20	10.00R20	10.00R20
7	Խցիկի տեսակ	Քնատեղով կամ առանց քնատեղի	Ստանդարտ, առանց քնատեղի	Ստանդարտ, առանց քնատեղի
8	Վառելիքի բաքի ծավալը լիտր	500	500	500
Հ/Հ	Կողային բեռնումով աղբատարին բնութագրող տեխնիկական	KO-440-5-ին բնութագրող տեխնիկական	Մրցույթի համար սահմանված աղբատարին բնութագրող	Սպեցմաշ ՍՊԸ-ի կողմից մրցույթին ներկայացված աղբատարի տեխնիկական բնութագրի

	հատկանիշների անվանումը	հատկանիշները	տեխնիկական հատկանիշներ	տվյալներ
1	Թափքի օգտակար ծավար խմ	22	22	22
2	Բեռնվող թափոնների գանգված կգ	8500	8500	8500
3	Բարձրումը	Կողային	Կողային	Կողային
4	Մանիպուլատորի բեռնամբարձությունը կգ	500	500	700
5	Աղբի խտացման գործակիցը	1.5-6	1.5-6	1.5-6
6	Սարքավորման գանգված կգ	4900	4900	4900
7	Ամբողջական գանգված կգ	20500	20500	20530
8	Չափսեր (երկարությունx լայնությունxբարձրություն) մետր	8.7x2.5x3.6	8.7x2.5x3.6	8.7x2.5x3.9

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի պահանջների հետ՝ այն է գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը...: Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Արդյունքում՝ գնման առարկայի հատկանիշները չնայած այն բանին, որ չեն նշվել կոնկրետ մոդել կամ կոնկրետ աղբյուր, սակայն պարունակել են պահանջ կամ հղում

պարունակող կոնկրետ մոդելին և կոնկրետ աղբյուրին իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրերը չեն պարունակել «կամ համարժեք» բառերը: Չեն ապահովվել մասնակիցների շրջանակի ընդլայնումն հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար:

Առաջարկ

Առաջնորդվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի պահանջներով:

32. Գյումրու համայնքապետարանի ենթակայության կրթական բնագավառի ՀՈԱԿ-ներում 2017-2018 թթ. սննդի ձեռքբերման համար իրականացված մրցույթներում արձանագրված թերությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն

1. <Լապտերիկ> ՀՈԱԿ –2017թ. մասնակցի առաջարկված գների և հաղթող ճանաչվելու մասին թիվ 2 արձանագրությունում կան էական շեղումներ /ապրանքատեսակների համար ԱԱՀ հաշվարկված է 2 անգամ/: Հետագայում մատակարարման պայմանագիրը կնքվել է մասնակցի կողմից ներկայացված գներով, սակայն նույնպես որոշակի անհամապատասխանություններով: 2018թ. գնումների պլանում 11-րդ կետում առկա է անհամապատասխանություն՝ հացի քանակ նշված է 113 կգ, սակայն մրցույթում հայտը ներկայացվել է 2100 կգ հաշվով: 2018թ. մրցույթի հաղթողի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է տուժանքի մասին հայտարարությունը /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ մասի հետ/:

2. <Ծիածան> ՀՈԱԿ - 2017թ. գնման արդյունքների ամփոփման թիվ 2 և 3 արձանագրությունների աղյուսակներում սխալ է ամփոփված հացի համար ներկայացված առաջարկը, այնինչ հացի համար հաղթող է ճանաչվել այլ մասնակից: 39-րդ կետով սահմանված ծիրանի համար նախահաշվային գին սահմանվել է 250 դրամ, սակայն հաղթողը առաջարկել է 350 դրամ և հաղթել է ներկայացված գնով: Թիվ 3 արձանագրության ամսաթիվը սխալ է: Պայամանագիրը կնքված է համատեղ գործունեության վերաբերյալ, սակայն արձանագրություններում համատեղության վերաբերյալ նշումները բացակայում են /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի հետ/: 2018թ. կազմված արձանագրության մեջ նույնպես ամփոփված չէ հացի գները: Գնումների պլանի 53-րդ կետում նշված շոկոլադ կոնֆետի հաղթող է ճանաչվել անհամեմատ ցածր գին ներկայացրած մասնակիցը /նախահաշվային գինը 2500 դրամ,

հաղթած գինը 1350 դրամ/, սակայն նշված մասնակցի հետ կնքված պայմանագրում նշված է շոկոլադապատ կոնֆետի մատակարարում:

3. <Ժպիտ> ՀՈԱԿ – 2017թ. իրականացված գնումներում կան խախտումներ, մասնավորապես որոշ ապրանքների հաղթած գները բարձր են գնումների պլանով նախատեսված նախահաշվային գներից, սակայն հաղթող են ճանաչվել / կարտոֆիլ միջին չափի 100-150, հաց 255-263, շաքարավազ 380-418 և այլն/: Գնումների պլանի 27-րդ կետում կոնֆետ կարամել ապրանքի միավորի գինը նշված է 100 դրամ, այն ինչ հաղթել է 965 դրամ առաջարկած մասնակիցը /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի հետ/: 2018թ. առաջին մասնակիցը ներկայացրել է բոլոր չափաբաժինների մասով, իսկ երկրորդ մասնակիցը որոշակի չափաբաժինների մասով և հաղթել է իր կողմից ներկայացվածները: Գների ամփոփման արձանագրությունում ամփոփոված չէ 54-րդ կետը /ցորենածավար/: Ավելին, արձանագրությամբ նշված է որ տվյալ չափաբաժնի հաղթող է ճանաչվել երկրորդ մասնակիցը, այնինչ տվյալ մասնակիցը այդ չափաբաժնով հայտ չի ներկայացրել: Երկրորդ մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է տուժանքի մասին հայտարարությունը /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի հետ/:

4. <Արծազանք> ՀՈԱԿ – 2017թ. գների ամփոփման արձանագրությունում նշվել է որ 38-39-րդ և 53-րդ կետերով մրցույթը համարել չկայացած, առաջարկված գների նախահաշվային գներից բարձր լինելու հիմքով, սակայն 39-րդ կետի խնձոր միջին չափի ներկայացված գինը՝ 251 դրամը չի գերազանցում նախահաշվային 350 դրամին /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի հետ/:

5. <Լիլիթ> ՀՈԱԿ – 2018թ. գնումների գնահատող հանձնաժողովի թիվ 2 և 3 արձանագրություններում նշված է որ բացի հացից, բոլոր չափաբաժիններով հաղթել է մեկ մասնակից, այնինչ նա չի մասնակցել տվյալ գնմանը, այլ մասնակցել և հաղթող է ճանաչվել մեկ այլ մասնակից:

6. <Լիանա> ՀՈԱԿ – 2017թ. գնման մասնակցության հայտ են ներկայացրել 2 մասնակից /բացառությամբ հաց/, սակայն առաջին մասնակցի կողմից ներկայացվել է 10 ապրանքի հայտ, որոնց համար երկրորդ մասնակիցը հայտ չի ներկայացրել: Արդյունքում յուրաքանչյուր մասնակից հաղթել է իր կողմից ներկայացված հայտը առանց մրցակից ունենալու: 2018թ. թիվ 1 արձանագրության նիստի ամսաթիվը սխալ է գրված:

7. <Արարատ> ՀՈԱԿ – 2017թ. թիվ 3-րդ արձանագրությունում 3.1 կետի աղյուսակում նշված է մասնակից, որը չի մասնակցել տվյալ գնմանը, այլ մասնակցել է մեկ այլ մասնակից: Գների ամփոփման փուլում տեղի են ունեցել բանակցություններ, որի արդյունքում ներկայացված գները համապատասխանեցվել են նախահաշվային գներին, սակայն շաքարավազի գինը մնացել է նախահաշվայինից բարձր 400-420 դրամ /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի հետ/: 2018թ. հրապարակված գնումների պլանում սերուցքային կարագի նախահաշվային գինը սահմանված է 3200դր.,

սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 4500դր.: Ամփոփման փուլում համաձայն արձանագրության, բանակցություններ չեն վարվել և հաղթել է նախահաշվային գնից բարձր գինը /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի հետ/: Նշենք նաև որ գնման հանձնաժողովի թիվ 1 արձանագրության նիստի ամսաթիվը սխալ է նշված:

8. <Գոհար> ՀՈԱԿ – 2017թ. մասնակցի կողմից ներկայացված որոշ ապրանքների գները բարձր են գնումների պլանով նախատեսված նախահաշվային գներից, սակայն ըստ արձանագրության բանակցություններ տեղի չեն ունեցել՝ կարագ-3000-3200 դր., թխվածքաբլիթ 600-700 դր., յուղ հալած 1400-2150 դր., սխտոր 1550-2000 դր., սիսեռ 850-950 դր., տավարի միս 2800-3000 դր. /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի հետ/: 2018թ. թիվ 2 և 3 արձանագրությունների բովանդակությունները վերաբերվում են <Գյումրու Մանկիկ> ՀՈԱԿ-ին, այնինչ գնումը վերաբերվում է <Գոհար> ՀՈԱԿ –ին:

9. <Անի Պարտեզ> ՀՈԱԿ – 2017 թ. գնումների պլանում 37-րդ և 41-րդ կետերը կրկնվում են, սակայն նախահաշվային գները և քանակները տարբեր են:

10. <Կարմիր գլխարկ> ՀՈԱԿ – 2017թ. գնանշման հարցման մասին հայտարարության ամսաթվերը սխալ են /հանձնաժողովի որոշման ամսաթիվը, հայտերի բացման օրվա ամսաթիվը/: Ներկայացված հայտերում առկա են նախահաշվային գնից բարձր գներ: Ըստ 2 արձանագրության տեղի են ունեցել բանակցություններ 2 ապրանքատեսակի վերաբերյալ՝ 16-րդ կետ - խառը կանաչի և 32-րդ կետ - ջեմ տեղական և համապատասխանեցվել են նախահաշվային գներին: Սակայն առկա են նաև երկու ապրանք, որոնք նույնպես բարձր են նախահաշվայինից՝ 1-ին կետ - հաց 255-263 դր. և 58-րդ կետ - պահածոյացված ոլոռ 830-8630դր.: Նշենք, որ 58-րդ կետի՝ պահածոյացված ոլոռ ապրանքատեսակի համար թիվ 2 արձանագրությունում, հավանաբար սխալմամբ 830 դրամի փոխարեն նշվել է 8630 դրամ, այն դեպքում երբ մասնակցի կողմից պահածոյացված ոլոռի գինը ներկայացրել է 830 դրամ: Սակայն թիվ 3 արձանագրությունում նույնպես առաջարկվել պայմանագիր կնքել 8630 դրամով, 22 կգ դիմաց 189860 դրամ /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի հետ/: 2018թ. կայացել է թվով երկու մրցույթ, հոկտեմբերին կազմակերպվել է լրացուցիչ մրցույթ: Նշենք, որ 1-ին մրցույթում ներկայացված փաստաթղթերում /մրցույթի արձանագրություններում, ներկայացված հայտերում և պայմանագրերում/ գնանշման հարցման ծածկագիրը սխալ է:

11. <Ընդել-Գրետել> ՀՈԱԿ -2017թ. իրականացված մրցույթին մասնակցել են թվով երկու մասնակից: Սակայն նշենք, որ ուսումնասիրելով երկրորդ մասնակցի կողմից ներկայացված հայտը պարզվում է, որ այն կազմված է անփույթ ձևով՝ այն է, դիմումում և որակավորման չափանիշների բավարարելու հայտարարության մեջ նշված է այլ Ա/Ձ, մասնակցության իրավունքի հայտարարության և գնային առաջարկում նշված է այլ Ա/Ձ: Երկրորդ մասնակիցը ներկայացրել է 9 ապրանքատեսակի համար հայտ /13,15,21,23,25,32,35,37,48/: Թիվ 3 արձանագրության 1.2 կետով հանձնաժողովը որոշել է տվյալ մասնակցին հաղթող ճանաչել

վերոնշված ապրանքատեսակների մասով, իսկ մնացածի մասով առաջին մասնակցին: Սակայն մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրությունից պարզվում է, որ 35-րդ կետի /մանդարին 350դր./ համար մասնակիցները ներկայացրել են հավասար գներ, իսկ մնացած 8 ապրանքների համար առաջին մասնակցի կողմից ներկայացրած գները ավելի ցածր են երկրորդ մասնակցի կողմից ներկայացված գներից և հասկանալի չէ, թե ինչ հիմնավորմամբ է երկրորդ մասնակիցը հաղթող ճանաչվել: Բացի դրանից նշենք, որ 46-րդ կետով ներկայացված գինը բարձր է նախահաշվայինից, սակայն դրա մասին արձանագրությունում որևէ անդրադարձ չկա: Թերություններով է կազմված նաև թիվ 2 արձանագրությունը, մասնավորապես 36-րդ կետում նշված բուսական յուղի համար ներկայացված գինը սխալ է 1945 դրամի փոխարեն նշված է 195 դրամ՝ ընդհանուր արժեքը 214000դրամ, սակայն նշված է 21400դրամ /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի հետ/: 2018թ. կազմակերպված մրցույթին մասնակցել են երկու մասնակից: Թիվ 2 արձանագրությամբ նշված է որ բանակցություններ տեղի չեն ունեցել, սակայն 12,19,27,35 և 36 կետերում առաջարկված գները նախահաշվային գներից բարձր են: Բացի այն թիվ 3 արձանագրության 1.1 և 1.2 կետերում առկա են անհամապատասխանություններ հաղթողների վերաբերյալ: 2018թ.մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում բացակայում են տուժանքի մասին հայտարարությունը /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի հետ/:

12. <Սուրբ Մարիամ> ՀՈԱԿ – 2018թ. մրցույթով հայտարարվել է շոկոլադե ապրանքատեսակի գնման պահանջ /7-րդ կետ/, որի նախահաշվային գին է սահմանվել 2500 դրամ, սակայն մասնակցի կողմից առաջարկվել է անհամեմատ ցածր գին 1550 դրամ: Հետագայում մատակարարվել է շոկոլադեպատ կոնֆետ: Բացի այդ թիվ 2 արձանագրությունում գների ամփափումից հետո հաղթողը նշված է այլ Ա/Ձ., որը տվյալ մրցույթին չի մասնակցել:

13. <Էյլիթիա> ՀՈԱԿ - ըստ 2018 թ. գնման հանձնաժողովի թիվ 2 արձանագրության հաղթողներ են ճանաչվել առաջին մասնակիցը՝ մեկ ապրանք, երկրորդ մասնակիցը՝ մեկ ապրանք, իսկ մնացած չափաբաժինները երրորդ մասնակիցը: Սակայն համեմատելով ներկայացված հայտերի գները պարզվում է, որ ևս 3 ապրանքների համար նվազագույն գին է ներկայացրել երկրորդ մասնակիցը, բայց հաղթող չի ճանաչվել: Նշենք նաև որ թիվ 2 և 3 արձանագրություններում երրորդ մասնակցի կողմից նշված 3 ապրանքների համար ներկայացված գները նույնպես սխալ են ամփոփվել /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի հետ/:

14. <Ձյունիկ> ՀՈԱԿ – 2017թ. կայացած մրցույթում 14-րդ կետի համար /կաղամբ/ նախահաշվային գին է սահմանվել 95 դրամ, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է 102 դրամ: Արդյունքում տեղի են ունեցել բանակցություններ, սակայն գինը մնացել է նախահաշվայինից բարձր /95 դրամ-98 դրամ/:

15. <Երազանք> ՀՈԱԿ – 2017թ. մրցույթային փաթեթները չեն պահպանվել, ուստի և վերլուծություն հնարավոր չէ կատարել /առկա է անհամապատասխանություն

<Հաշվապահական հաշվառման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի հետ/։ 2018թ. իրականացված մրցույթի հիմնական հաղթողի կողմից ներկայացված հայտում բացակայում է տուժանքի մասին հայտարարությունը /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ մասի հետ/։

16. <Ձանգակ> ՀՈԱԿ - ուսումնասիրելով 2017թ. գնումների մասնակցության հայտերը /մասնակցել են թվով երկու մասնակից/, մասնավորապես գնման մասնակցելու դիմումները, պարզվում է , որ 6-րդ /թթվասեր/, 17-րդ /մածուն/ և 53-րդ /կաթ/ կետերով սահմանված ապրանքատեսակների համար դիմումներում նշումները բացակայում են, սակայն մասնակիցներից մեկի կողմից 4-րդ հավելվածով ներկայացված գնի առաջարկի վերջին տողերում տվյալ ապրանքները ներառված են ցանկում։ Նշենք նաև, որ գնման պլանի չափաբաժինների գնառաջարկները բաժանված են երկու մասնակցի միջև, այսինքն գների մրցակցություն ըստ էության տեղի չի ունեցել։ Ուսումնասիրելով 2018թ. գնումների հայտերը՝ պարզվում է, որ մասնակցի կողմից ներկայացված գնառաջարկում 28-րդ կետ /տավարի միս տեղական փափուկ/ չափաբաժնի համար ներկայացվել է նախահաշվային գինը գերազանցող առաջարկ /նախահաշվային գին 3200 դրամ- հայտով ներկայացված գինը 3500 դրամ/, սակայն թիվ 2 և 3 արձանագրություններում հայտի գինը ներկայացված է որպես 3200 դրամ։ Ըստ արձանագրության բանակցություններ տեղի չեն ունեցել։ Հիմնական հաղթողի կողմից ներկայացված հայտում բացակայում է տուժանքի մասին հայտարարությունը /առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի հետ/։

17. <Թոռնիկ Մանուշակ> ՀՈԱԿ - 2018թ. կայացել է երկու մրցույթ. 9 ապրանքատեսակի համար ներկայացված գները բարձր են եղել նախահաշվայինից և բանակցությունների արդյունքում նվազեցում չի կատարվել։ Երկրորդ մրցույթում նախահաշվային գներ են սահմանվել առաջին մրցույթում մասնակցի կողմից ներկայացված գները։ Նույն իրավիճակն է եղել նաև <Գյումրու Մանկիկ> ՀՈԱԿ-ում 2018թ. իրականացված գնման ընթացքում, քանի որ թվով 15 ապրանքատեսակի համար ներկայացված գները եղել են նախահաշվայինից բարձր և բանակցությունների ժամանակ չեն նվազեցվել։ Հայտարարվել է երկրորդ մրցույթը և նախահաշվային գները համապատասխանեցվել են առաջին մրցույթում մատակարարի կողմից ներկայացված հայտերի գներին և հաղթող է ճանաչվել գնման հայտ ներկայացրած մասնակիցը /միակ մասնակից/։ Հատկանշական է այն, որ տվյալ մասնակիցը մասնակցելով այլ կազմակերպությունների կազմակերպված գնումներին այդ ապրանքների համար առաջարկել է այն գները, որոնք ավելի մոտ են եղել առաջին մրցույթի նախահաշվային գներին։ Օրինակի համար նշենք, որ <Թոռնիկ-Մանուշակ> ՀՈԱԿ-ում կարագի գինը առաջարկվել է 3200 դրամ, իսկ <Գյումրու Մանկիկ> ՀՈԱԿ-ում՝ 2400 դրամ, <Թոռնիկ - Մանուշակ> ՀՈԱԿ-ում տավարի մսի գինը առաջարկվել և հաղթել է 3700 դրամ, <Արձագանք> ՀՈԱԿ-ում՝ 3000 դրամ, <Թոռնիկ -Մանուշակ> ՀՈԱԿ-ում մանդարինի գինը առաջարկվել է 600 դրամ, <Ծիածան> ՀՈԱԿ-ում՝ 450 դրամ։ Նշենք նաև, որ հաղթողի կողմից տավարի մսի և մանդարինի առաջարկված գները եղել է ամենաբարձրը 2018թ.։

Գնումների ընթացքում ի հայտ են եկել որոշ անհամապատասխանություններ շոկոլադ, շոկոլադապատ կոնֆետ և կարամել ապրանքատեսակների նախահաշվային գների, հաղթած գների և մատակարարված ապրանքների միջև: Մասնակցի կողմից 2018թ. <Արծազանք>, <Ծիածան>, <Անի Պարտեզ> և <Հուսո Առագաստ> ՀՈԱԿ-երում շոկոլադապատ կոնֆետի գինը ներկայացվել է 1350 դրամ, կարամել կոնֆետը՝ 1100 դրամ և հաղթող ճանաչվել, այն դեպքում երբ դրանց նախահաշվային գները եղել են շոկոլադապատ կոնֆետ 2200-2500 դրամի սահմաններում, իսկ կարամել կոնֆետը՝ 1450-1500 դրամի սահմաններում:

Հերևանք

Առկա են անհամապատասխանություններ <Գնումների մասին> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ կետերի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-N որոշման 44-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի հետ:

Առաջարկ

Ձեռնարկել համապատասխան միջոցներ գնման ընթացակարգերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով կազմակերպելու ուղղությամբ:

Համայնքապետարանի դիրքորոշումը

«Լապտերիկ» ՀՈԱԿ-ում իրականացված հաշվեքննության արդյունքում հայտնաբերված շեղումները և ներկայացված գների անհամապատասխանությունները տեխնիկական վրիպակի արդյունք են: Գնումների պլանում հացի քանակի և ներկայացված հաշվի անհամապատասխանությունը, ինչպես նաև հաղթողի կողմից ներկայացված փաթեթում տուժանքի մասին հայտարարության բացակայությունը գնումների համակարգողի անուշադրության հետևանք են:

-«Ծիածան» ՀՈԱԿ-ում 2017 թվականին կազմակերպված գնման ընթացակարգի բացման նիստի արձանագրությունում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները արտացոլող սյունակում հացի չափաբաժինը այլ ապրանքների հետ միասին նշվել է այլ մասնակցի սյունակում, սակայն արձանագրության վերջաբանում նշվել է, որ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել այլ մասնակից:

39 չափաբաժնի մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը ընդունվել է՝ հաշի առնելով տվյալ ժամանակահատվածում այլ պատվիրատուների մոտ առկա գների վիճակագրությունը:

2018 թվականին ևս արձանագրության վերջաբանում նշվել է, որ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել այլ մասնակից: 53 չափաբաժնի մասով շոկոլադապատ կոնֆետն է, որն հրավերում և պայմանագրում ուղղակի կրճատ շոկոլադ է գրվել: Միավոր արժեքի համար առավելագույն նախահաշվային գին սահմանվել է 2500 ՀՀ դրամ՝ ի նկատի ունենալով շոկոլադապատ կոնֆետի ռուսական տեսականին, սակայն մասնակիցը ներկայացրել է ավելի մատչելի հայկական տարբերակը և պատվիրատուի կողմից առարկություն չի եղել:

-«Ժպիտ» ՀՈԱԿ-ում գնումների պլանով նախատեսված նախահաշվային գների և ներկայացված գների անհամապատասխանության շուրջ իրականացվել են բանավոր բանակցություններ, որոնք, սակայն, չեն արձանագրվել: Գների ամփոփման արձանագրության մեջ առանձին չափաբաժիններով հայտերի ներկայացված չլինելը, ինչպես նաև հաղթողի կողմից ներկայացված փաթեթում տուժանքի

մասին հայտարարության բացակայությունը անփութության հետևանք է (անհրաժեշտության դեպքում կներկայացվի տուժանքի մասին հայտարարության պատճենը):

-«Արձագանք» ՀՈԱԿ-ում 2017թ. մանկապարտեզի սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը 39 չափաբաժնի մասով (խնձորի միջին չափի) համար ներկայացրել է 450 դրամ արժեք, որը գերազանցել է «Արձագանք» ՀՈԱԿ-ի կողմից նախահաշվային 350 դրամը, այդ պատճառով այդ չափաբաժնի մասով մրցույթը չի կայացել: Ձեր նշված 251, 5625 դրամ խնձորի գինը տպագրական սխալ է, որը վրիպել է մրցույթի համակարգողի և հանձնաժողովի անդամների ուշադրությունից: 2017թ խնձորի արժեքը տատանվել է 350-500 դրամի սահմաններում:

-«Լիլիթ» ՀՈԱԿ-ում 2018 թվականին կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրություն 2-ում հայտ ներկայացրած մասնակիցների ցանկում և գնային առաջարկների հիմնական պլաններում արտացոլված են նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների անվանումները, սակայն արձանագրության վերջին հատվածում հաղթող է ճանաչվել նշված ընթացակարգին ընդհանրապես չմասնակցած Ա/Ձ, որը տեխնիկական վրիպակ է: Պայմանագիրը կնքվել է հաղթող մասնակցի հետ:

-«Լիանա» ՀՈԱԿ-ում «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ որպես պատվիրատու ներկայացրել է միայն մրցույթի հրավերը, իսկ մասնակիցների ներկայացրած չափաբաժինների վերաբերյալ որևէ մեկնաբանություն չեն կարող տալ: 2018թ. թիվ 1 ամսաթվի հետ կապված թերությունը տեխնիկական բնույթ է կրում:

-«Արարատ կրթահամալիր» ՀՈԱԿ-ում հայտնաբերված շեղումները և ներկայացված գների անհամապատասխանությունները տեխնիկական վրիպակի արդյունք են և ամսաթվի հետ կապված թերությունը ևս տեխնիկական բնույթ է կրում:

-«Գոհար» - ՀՈԱԿ - ում գնումների պլանով նախատեսված նախահաշվային գների և ներկայացված գների անհամապատասխանության շուրջ իրականացվել են բանավոր բանակցություններ, որոնք չեն արձանագրվել: 2018 թվականի թիվ 2 և 3 արձանագրություններում թույլ է տրվել տեխնիկական վրիպակ՝ «Գոհար» ՀՈԱԿ-ի փոխարեն 2-րդ կետում նշվել է «Գյումրու Մանկիկ» ՀՈԱԿ, սակայն արձանագրության առաջին տողում գրված է «Գոհար» ՀՈԱԿ, ինչպես նաև հանձնաժողովի անդամների ստորագրությունները վկայում են, որ այն վերաբերում է «Գոհար» ՀՈԱԿ-ին:

-«Անի պարտեզ» ՀՈԱԿ-ում 2017 թվականի գնումների պլանում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ՝ 37 և 41 կետերի անվանումները կրկնվել են: Ուստի 41 կետում նշված անվանման փոխարեն պետք է լիներ «վարունգ», որը նշվել է 42 կետի անվան տակ, իսկ 42 կետում պետք է լիներ «լոլիկ»: Նախահաշվային գները և քանակները համապատասխանում են նշված կետերին:

-«Կարմիր գլխարկ» ՀՈԱԿ-ում պահաժողացված ոլոռի արժեքը 830 ՀՀ դրամի փոխարեն նշվել է 8630 ՀՀ դրամ, որը հաստատ սխալմունք է և պահաժողացված ոլոռը 2017թ. ձեռք է բերվել 830 ՀՀ դրամով, հացի մասով բանակցությունները ընթացել են բանավոր կարգով, սակայն գնումների համակարգողի կողմից չի արձանագրվել: Ինչ վերաբերում է ամսաթվերի և գնանշման հարցման ծածկագրերի սխալներին, գնումների համակարգողի կողմից թույլ տրված տեխնիկական վրիպակներ են:

-«Հենգել և Գրետել» ՀՈԱԿ-ում համակարգողի սխալները անուշադրության կամ տպագրական վրիպումների հետևանք է:

-«Սուրբ Մարիամ» ՀՈԱԿ-ում 2018 թվականին կազմակերպված գնման ընթացակարգի 7-րդ կետի պահանջը շոկոլադապատ կոնֆետն է, որն հրավերում և պայմանագրում ուղղակի կրճատ շոկոլադ է գրվել: Միավոր արժեքի համար առավելագույն նախահաշվային գին սահմանվել է 2500 ՀՀ դրամ՝ ի նկատի ունենալով շոկոլադապատ կոնֆետի ռուսական տեսականին, սակայն մասնակիցը ներկայացրել է ավելի մատչելի հայկական տարբերակը և պատվիրատուի կողմից առարկություն չի եղել: Արձանագրություն 2-ում հաղթող է նշված այլ Ա/Ձ՝ տեխնիկական վրիպակի պատճառով: Պայմանագիրը կնքվել է հաղթող մասնակցի հետ:

–«Էլյիթիա» ՀՈԱԿ-ում 2018 թվականին կազմակերպված գնման ընթացակարգի 27, 43 և 60 չափաբաժինների մասով տեղի է ունեցել սխալ հաշվարկ՝ էքսել համակարգով հաշվարկ կատարելու պատճառով:

–«Ձյունիկ» ՀՈԱԿ-ում 2017թ. կայացած մրցույթում տեղ գտած թերությունը համակարգողի անուշադրության պատճառով թույլ տրված տեխնիկական վրիպակ է:

–«Երազանք» ՀՈԱԿ-ում 2017թ-ի Գյումրի համայնքի «Երազանք» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի փաթեթը չի պահպանվել, սակայն մրցույթին վերաբերվող էական բոլոր փաստաթղթերը տեղադրված են OLD.GNUMNER.am էլեկտրոնային կայքում: Ինչ վերաբերվում է 2018թ-ի իրականացված մրցույթի հաղթող մասնակցի կողմից ներկայացված ապահովման վրաբերյալ տուժանքի մասին հայտարարությանը, մրցույթի հայտերի բացման պահին փաստաթուղթը առկա է եղել (անհրաժեշտության դեպքում կտրամադրվի ներկայացված հայտում տուժանքի մասին հայտարարության պատճենը):

–«Ջանգակ» ՀՈԱԿ-ում 2017 թվականին կազմակերպված գնման ընթացակարգի մասնակցի ներկայացրած դիմումի մեջ 6, 17 և 53 չափաբաժինների մասով բացակայում են նշումները, սակայն հիմք է ընդունվել գնային առաջարկում նշված չափաբաժինները, քանի որ վերջինս հանդիսանում է հայտի հիմնական փաստաթուղթ, որը փոփոխման ենթակա չէ:

2018 թվականին գնման ընթացակարգի ժամանակ տեղի է ունեցել 28 չափաբաժնի մասով գնային նվազեցում՝ մինչև 3200 ՀՀ դրամ, և այդ գումարով էլ պայմանագիրը կնքվել է, սակայն բանավոր բանակցությունը չի արտացոլվել արձանագրության մեջ:

2018 թվականին մասնակցի կողմից ներկայացրած հայտի ապահովումը մրցույթի բացման նիստում առկա է եղել մասնակցի փաթեթում, սակայն այնուհետև հայտնվել է այլ թղթապանակում, որն այժմ գտնվել է (կից ներկայացվում է մասնակցի կողմից ներկայացված հայտում տուժանքի մասին հայտարարության պատճենը):

–«Թոռնիկ Մանուշակ» ՀՈԱԿ-ում կազմակերպված գնման ընթացակարգի 2018 թվականի փետրվարի 8-ի բացման նիստում 9 չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցել են պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գինը: Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի գնման ընթացակարգը տվյալ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած: Այնուհետև օրենքի շրջանակում գնումների պլանում կատարվել են փոփոխություններ և նույն թվականի մարտի 1-ին տեղի է ունեցել չկայացած չափաբաժինների մասով նոր գնման ընթացակարգ՝ արդեն փոփոխված գներով:

–«Գյումրու մանկիկ» ՀՈԱԿ-ում գնման ընթացակարգի 2018 թվականի հունվարի 29-ի բացման նիստում 15 չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցել են պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գները: Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի գնման ընթացակարգը տվյալ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած: Այնուհետև օրենքի շրջանակում գնումների պլանում կատարվել են գների վերանայում և նույն թվականի փետրվարի 20-ին տեղի է ունեցել չկայացած չափաբաժինների մասով նոր գնման ընթացակարգ՝ արդեն փոփոխված գներով:

33. ՀՈԱԿ-ներում կազմակերպված մրցույթների նախահաշվային գների և հաղթած մասնակիցների վերլուծության վերաբերյալ

Անհամապատասխանություն

Նախահաշվային գների վերլուծության վերաբերյալ

Ուսումնասիրելով 2017-2018 թթ. նախահաշվային գները գալիս ենք այն եզրակացության, որ նախահաշվային գների որոշման համար որևէ միասնական սկզբունք չկա: Ուսումնասիրության համար իրականացված գնումների շուրջ 80 ապրանքատեսակների ցանկերից առանձնացվել են որոշակի ապրանքներ, որոնց նախահաշվային գների տարբերությունները առավել են՝

Աղյուսակ-18 / դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	2017թ.	2018թ.
1	Հավի մսեղիք սառ.տեղ.ամբողջ.	1000-1900	1350-1550
2	Տավարի միս տեղ.փափ.	2500-2800	3000-3700
3	Պանիր 'Լոռի'	2000-2350	2000-2350
4	Կաթնաշոռ դասական	1200-2250	1400-1800
5	Հաց 'Հրազդան'	255-270	260-270
6	Կարագ սերուցքային	2000-3200	2500-4550
7	Յորենաձավար	200-400	270-350
8	Բլոդս	250-650	380-420
9	Կոնֆետներ շոկոլադապատ	1200-2500	1400-2500
10	Կոնֆետ կարամել	1050-1500	1050-1500
11	Թեյ սև	2200-4800	3500-4200
12	Խնձոր միջին չափսի	200-450	300-400
13	Նարինջ	400-600	520-600
14	Մանդարին	350-500	430-600
15	Յուղ կենդ.կամ բուս.ծագմ.		1360-2150
16	Քաղցր թխվածքաբլիթ		680-1100
17	Ծիրան	250-550	250-400
18	Դեղձ	250-450	320-450
19	Կակաո		3500-6000
20	Կիսել		1250-1700

Հերևանք

Նախահաշվային գների միասնական դիտարկման պարագայում հնարավոր կլինե՞ր ապահովել խնայողությունների ավելի մեծ մակարդակ:

Առաջարկ

Առաջարկվում է համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծել աշխատանքային խումբ հաջորդ տարիների համար նախահաշվային գների որոշման միասնական սկզբունք սահմանելու և այդ սկզբունքների հիման վրա միևնույն տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքների համար միասնական գին սահմանելու համար:

34. 2017թ. ՀՈԱԿ-ների կողմից կազմակերպված մրցույթների մասնակիցների վերլուծություն

2017 թվականին սննդի գնումների ծավալը կազմել է 104,619.2 հազ. դրամ: Հայտարարված թվով 21 մրցույթներում մասնակցել են 7 մատակարարներ, որից՝

1-ին մասնակիցը մասնակցել է միայն հացի գնմանը և եղել է միակ մասնակից և հաղթող /12,629.6 հազ. դրամ/.

2-րդ մասնակիցը մասնակցել է թվով 14 մրցույթում, որից 10 մրցույթում եղել է միակ մասնակից /55,117.7 հազ. դրամ կամ 60.1 %/

3-րդ մասնակիցը մասնակցել է թվով 8 մրցույթներում, որից 4 մրցույթում եղել է միակ մասնակից/26,148.4 հազ. դրամ կամ 28.5 %/

4-րդ մասնակիցը մասնակցել է թվով 4 մրցույթում, և հաղթել է որոշ չափաբաժիններով/929.2 հազ. դրամ կամ 1.01 %/

5-րդ մասնակիցը մասնակցել է թվով 2 մրցույթի, և հաղթել է որոշ չափաբաժինները /6214.7 հազ. դրամ կամ 6.7 %/:

6-րդ մասնակիցը մասնակցել է թվով 1 մրցույթի եղել է հիմնական հաղթողը /2,055.2 հազ. դրամ կամ 2.2 %/

7-րդ մասնակիցը մասնակցել է մեկ մրցույթի և եղել է հիմնական հաղթող/1,524.8 հազ. դրամ կամ 1.6 %/:

2018 թվականին սննդի գնումների ծավալը կազմել է 118,907.0 հազ. դրամ:

Հայտարարված թվով 21 մրցույթներում մասնակցել են 6 մատակարարներ, որից՝

1-ին մասնակիցը մասնակցել է միայն հացի գնմանը և եղել է միակ մասնակից և հաղթող /13,234.6 հազ. դրամ/.

2-րդ մասնակիցը մասնակցել է թվով 13 մրցույթում, որից 1 մրցույթում եղել է միակ մասնակից, 6 մրցույթում եղել է միակ հաղթող, իսկ 6 մրցույթում եղել է հիմնական հաղթող /64,121.4 հազ. դրամ կամ 60.8 %/

3-րդ մասնակիցը մասնակցել է թվով 8 մրցույթի, որից 5 մրցույթում եղել է միակ հաղթող, իսկ 3 մրցույթում եղել է հիմնական հաղթող /36,340.3 հազ. դրամ կամ 34.4%/:

4-րդ մասնակիցը մասնակցել է թվով 17 մրցույթում, որից 6 մրցույթում հաղթել է որոշ չափաբաժիններով /2,026.6 հազ. դրամ կամ 1.9 %/:

5-րդ մասնակիցը մասնակցել է թվով 5 մրցույթի և հաղթող չի ճանաչվել:

6-րդ մասնակիցը մասնակցել է թվով 1 մրցույթի եղել է միակ մասնակից և հաղթողը /2,955.3 հազ. դրամ կամ 2.8 %/:

35. Գյումրու համայնքում գործող կրթական հաստատությունների 2017-2018թթ. հաստատված հաստիքների համապատասխանության վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են նաև Գյումրու համայնքի ավագանու 2017թ. հունիսի 5-ի N68-Ա որոշմամբ հաստատված կրթական ՀՈԱԿ-ների հաստիքացուցակները, դրանք համեմատելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին՝ N 29-Ն հրամանի պահանջների հետ: Արդյունքում պարզվել է, որ բոլոր ՀՈԱԿ-ներում, բացառությամբ Կարմիր Գլխարկ ՀՈԱԿ-ում, Անուիկ ՀՈԱԿ-ում և Գյումրու Մանկիկ ՀՈԱԿ-ում, հաշվապահի հաստիքային միավոր է սահմանված 0.5 դրույք, սակայն նախարարի վերոնշված հրամանով այն սահմանված է 1 դրույք: Բացի այդ Լիանա ՀՈԱԿ-ում սահմանված է բակապահի հաստիք, այնինչ վերոնշված հրամանով այդպիսի հաստիք սահմանված չէ: Արարատ կրթահամալիրի 2017-2018թթ. հաստիքացուցակներում ներառված են դասապատրաստման, դասվարի և օտար լեզվի հաստիքներ, հաշվի առնելով, որ այն ունի նաև տարրական ուսուցման ծրագիր:

2018թ. համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 6-ի N 131-Ա որոշմամբ հաստատված կրթական ՀՈԱԿ-ների հաստիքացուցակների և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հստատելու մասին՝ N 29-Ն հրամանի պահանջների համեմատություն՝

Աղյուսակ -19

	Անվանումը	Մեթոդիստ		Բուժքույր		Գործավար		Հաշվապահ		Բակապահ		Օժանդակ բանվոր		Դերձակ	
		հաստիք ացուցա կ	նախարա րի հրաման	հաստիք ացուցա կ	նախարա րի հրաման	հաստիք ացուցա կ	նախարա րի հրաման	հաստիք ացուցա կ	նախարա րի հրաման	հաստիք ացուցա կ	նախարա րի հրաման	հաստիք ացուցա կ	նախա րարի հրամա ն	հաստիք ացուցա կ	նախարա րի հրաման
1	Հապտերիկ<ՈԱԿ	0.5	1	1	0.75										
2	Ծիածան <ՈԱԿ					1	0.25	0.5	1						
3	Թոռնիկ- Մանուշակ <ՈԱԿ					1	0.25	0.5	1						
4	Ժպիտ<ՈԱԿ							0.5	1						
5	Հոսաստղիկ<ՈԱԿ							0.5	1						
6	Արծազանք<ՈԱԿ					1	0.25	0.5	1			1	0.5		
7	Լիլիթ<ՈԱԿ			1	0.75										
8	Նանուկիկ<ՈԱԿ			1	0.75										
9	Լիանա<ՈԱԿ	0.5	1	1	0.75	0.5	0			0.5	0				
10	Արևիկ<ՈԱԿ			1	0.75									0.5	0.25
11	Արարատ<ՈԱԿ														
12	Գոհար<ՈԱԿ					1	0.25	0.5	1						
13	Փարոս<ՈԱԿ					1	0.25	0.5	1						
14	Անի- պարտեզ<ՈԱԿ							0.5	1						
15	Կարմիր Գլխար կ<ՈԱԿ														

16	ՀենգելյուԳրետե ՀՈԱԿ	0.5	1	1	0.75										
17	ՍուրբՄարիամ ՀՈԱԿ			1	0.75										
18	ԳյումրուՄանկի կՀՈԱԿ			1	0.75										
19	ԷյիթիաՀՈԱԿ							0.5	1						
20	ՁյունիկՀՈԱԿ					1.	0.25	0.5	1			1	0.5		
21	ՀոստԱռագաս տՀՈԱԿ					1	0.25	0.5	1						
22	ԵրագանքՀՈԱ Կ			1	0.75	1	0								
23	Անուլիկ ՀՈԱԿ			1	0.75										
24	ԶանգակՀՈԱԿ					1	0.25	0.5	1						

Հերևանք

Առկա է անհամապատասխանություն ավագանու որոշումների և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունվարի 26-ի ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հստատելու մասին» N 29-Ն հրամանի պահանջների: Նշենք նաև որ 2018 թվականից նախարարի հրամանով սահմանված հաստիքային միավորները պարտադիր նվազագույնն են: Հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների կամ հաստատության արտաբյուջեի առկայության դեպքում կարող են տրամադրվել լրացուցիչ հաստիքներ:

Առաջարկություն

Առկա հաստիքային միավորները համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունվարի 26-ի ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հստատելու մասին» N 29-Ն հրամանի պահանջներին:

Համայնքապետարանի դիրքորոշումը

2019 թվականին համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի N 29-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակ»-ի պարտադիր նվազագույն հաստիքային միավորներին:

Հաշվեքննության արձանագրությունում «Լիանա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017-2018թթ. հաստատված հաստիքացուցակներում «բակապահ»-ի հաստիքի անհամապատասխանությունը օրինակելի հաստիքացուցակին մեխանիկական վրիպակ է՝ հաստիքացուցակում գրված է դռնապան, տարիֆիկացիայում՝ բակապահ:

36. Գյումրու համայնքապետարանի ենթակայության մշակույթի բնագավառի ՀՈԱԿ-ներում 2017-2018 թթ. արձանագրված թերությունների վերաբերյալ

Անհամապատասխանություն

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են ՀԱ. Ալիխանյանի անվ. տիկնիկային թատրոն» ՀՈԱԿ, ՀԱՎ.Իսահակյան տուն թանգարան» ՀՈԱԿ, ՀՄ.Մկրտչյանի տուն թանգարան» ՀՈԱԿ, ՀՀ. Շիրազի տուն թանգարան» ՀՈԱԿ, ՀՄարիամ և Երանուհի Ասլամազյան քույրեր պատկերասրահ» ՀՈԱԿ, որի արդյունքում պարզվել է, որ այցելությունների համար նախատեսված տոմսերը չեն համարակալվել և չեն հաշվառվել /նշված չէ տպված տոմսերի քանակը, վաճառված տոմսերի քանակը և մնացորդները/, այլ ուղղակի

պատճենահանվում են, կնքվում են հաստատության կնիքով և վաճառվում որպես մուտքի տոմս /չեն հանդիսանում խիստ հաշվառման փաստաթուղթ/:

Հեղևանք

Հաշվի առնելով, որ այցելությունների համար նախատեսված տոմսերը չեն համարակալվել և չեն հաշվառվել /չեն հանդիսանում խիստ հաշվառման փաստաթղթեր/, հետևաբար դրանց վաճառված քանակի և մուտքերի վերաբերյալ կարծիք տալ հնարավոր չէր:

Առաջարկություն

Ձեռնարկել համապատասխան միջոցներ այցելությունների համար նախատեսված տոմսերը հաշվառման փաստաթղթերով վաճառելու և դրանց վաճառված քանակը վերահսկելի դարձնելու ուղղությամբ:

Համայնքապետարանի դիրքորոշումը

“Հ.Շիրազի հուշատուն-թանգարան” ՀՈԱԿ-ում 2017 թվականի ավագանու որոշմամբ սահմանվել է համայնքային ենթակայության թանգարանների մուտքի վճար, և այցելուներին սպասարկելու համար ինքնուրույն ստեղծվել են տոմսեր և այցելուները հաշվառվել են գրանցամատյանում:

“Ավ.Իսահակյանի հուշատուն-թանգարան” ՀՈԱԿ-ում 2017 թվականի հուլիս ամսից ավագանու որոշմամբ սահմանվել է համայնքային ենթակայության թանգարանների մուտքի վճար: Այցելուների սպասարկման համար տոմսեր չեն եղել, սակայն առկա է եղել գրանցամատյան համապատասխան սյունակներով, որտեղ հաշվառվել են բոլոր այցելուները:

“Մ.Մկրչյանի թանգարան” ՀՈԱԿ-ում նույնպես 2017 թվականից Գյումրու ավագանու որոշմամբ սահմանվել է համայնքային ենթակայության թանգարանների մուտքի վճար, մինչև 2018 հունվար ամիսը տոմսերը համարակալված չեն եղել, սակայն գրանցվել են համապատասխան մատյանում: Սկսած 2018 թվականի հունվար ամսից տոմսերը արդեն համարակալվել են և դրանց վաճառքի և քանակի, վերաբերյալ տեղեկատվությունն արդեն հստակեցվել է:

“Մ. և Ե. Ասլամազյան քույրերի պատկերասրահ” ՀՈԱԿ-ում նույնպես 2017 թվականին ավագանու որոշմամբ սահմանվել է համայնքային ենթակայության թանգարանների մուտքի վճար և գործընթացը կազմակերպելու համար ստեղծվել են համարակալված տոմսեր, որոնք հաշվառվել են գրանցամատյանում:

“Ա.Ալիխանյանի անվ. Տիկնիկային թատրոն” ՀՈԱԿ-ը իր տոմսերը մշտապես ձեռք է բերել նույն սխեմայով: Քանի որ պարտադիր կերպով գրանցամատյանում հաստատվում է ձեռք բերված տոմսերի քանակը, այնուհետ վաճառված տոմսերից գոյացած գումարը մուտք է արվում և ըստ մեկ տոմսի արժեքի հաշվվում է թե քանի տոմս է վաճառվել և քանիսն է մնացորդ, հետևաբար տոմսերի վաճառված քանակի և մուտքերի վերաբերյալ բնորոշումը հիմնավորված է, որ թատրոնի տոմսերը գտնվում են խիստ հաշվառման տակ:

Բոլոր թանգարանների համար տրվել է նաև հսկիչ դրամարկղային մեքենայի ձեռքբերման հայտ և սպասվում է ՊԵԿ-ի կողմից դրանց տրամադրմանն, ինչն էլ լրացուցիչ վերահսկողություն միջոց կհանդիսանա տոմսերի վաճառքի իրականացման ուղղությամբ:

37. Գյումրու «Ա. Բրուսյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից իրականացված գնման վերաբերյալ

Անհամապատասխանություն

Գյումրու «Ա. Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի և ֆիզիկական անձի միջև 03.07.2017թ. կնքվել է պայմանագիր «BLUTHNER» մականիշի կոնցերտային ռոյալի ձեռքբերման համար 4,500.0 հազ. դրամ գումարով: ՀՈԱԿ-ի և ֆիզիկական անձի միջև նույն օրով 03.07.2017թ. կազմվել է թիվ 1 գնման ակտ: Կոնցերտային ռոյալը ընդունման-հանձնման արձանագրության համաձայն հանձնվել է ՀՈԱԿ-ին միայն 21.10.2017թ.: Կոնցերտային ռոյալի շուկայական արժեքը համաձայն «Ա.Գ. Էսթեյթ» ՍՊԸ-ի հաշվետվության, որը ներկայացվել է «Ա. Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին կազմել է 5,750.0 հազ. դրամ: Ձեռքբերված ռոյալի համար ՀՈԱԿ-ի կողմից ֆիզիկական անձին վճարվել է 4,050.0 հազ. դրամ: Զեռքբերված ռոյալի համար ՀՈԱԿ-ի կողմից ֆիզիկական անձի համար ավանդվել է 450.0 հազ. դրամը ՀՈԱԿ-ի կողմից վճարվել է ֆիզիկական անձի համար եկամտահարկ: Հարկ է նշել, որ վճարված գումարից 2,000.0 հազ. դրամը հատկացրել է համայնքի ավագանին 06.10.2017թ. N 109-Ա որոշմամբ, իսկ մնացած մասը վճարվել է ՀՈԱԿ-ի միջոցներից:

Հերևանք

Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀօրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին 2-րդ և 4-րդ կետերի հետ:

Առաջարկ

Ձեռնարկել համապատասխան միջոցներ գնման ընթացակարգերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով կազմակերպելու ուղղությամբ:

Համայնքապետարանի դիրքորոշումը

“Թիվ 4-րդ երաժշտատական դպրոց” ՀՈԱԿ-ի կողմից ձեռք բերված “BLUTHNER” մակնիշի կոնցերտային ռոյալը, ձեռք է բերվել երկրորդական շուկայից՝ ֆիզիկական անձից: Մինչ գնելը ՀՈԱԿ-ը դիմել է անկախ գնահատող հանդիսացող “Ա.Գ.Էսթեյտ” ՍՊԸ-ին, որը ռաումմասիրել և ներկայացրել է հաշվետվություն, որ գործիքի իրական շուկայական արժեքը այդ պահին կազմում է 5 750,0 հզ. դրամ: Ինչպես նաև գործիքի հետ ծանոթացել են մասնագետ երաժիշտ կատարողներ, ովքեր նույնպես հաստատել են գործիքի որակյալ լինելու փաստը: Բանակցությունների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել գործիքը գնել շուկայական արժեքից ավելի ցածր՝ 4 050,0 հզ. դրամ արժեքով և 450,0 հզ. դրամ փոխանցել եկամտային հարկ՝ որպես հարկային պարտավորություն: ՀՈԱԿ-ի գումարը չբավարարելու պատճառով դիմում է ներկայացվել Գյումրու համայնքապետարան և ավագանու որոշմամբ հատկացվել է 2000,0 հազ. դրամ երկրորդական շուկայից “BLUTHNER” մակնիշի կոնցերտային ռոյալը գնելու համար:

III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2017-2018թթ. բյուջեների մուտքերի վերաբերյալ

Համայնքի 2017-2018թթ. բյուջեների նախատեսված և փաստացի մուտքերը ըստ տարիների ներկայացվում է աղյուսակի տեսքով.

Աղյուսակ-20 /հազ. դրամ/

Գյումրու համայնքի 2017-2018 թթ. բյուջեների եկամուտները				
	2018 թ.		2017 թ.	
	Պլան	Մուտքեր	Պլան	Մուտքեր
Հողի հարկ ֆիզ.	27,756.6	25,307.7	26,753.5	25,910.5
Հողի հարկ իրավ.	20,192.7	21,151.3	19,451.7	20,186.3
Գույքահարկ ֆիզ.	64,509.3	66,514.9	61,641.4	66,024.2
Գույքահարկ իրավ.	31,885.8	35,215.8	32,351.4	33,226.6
Գույքահարկ մեքենա ֆիզ.	432,451.7	398,663.8	409,675.1	391,880.3
Գույքահարկ մեքենա իրավ.	10,177.4	10,712.7	10,735.3	11,606.5
Գույքի վարձ	36,103.7	43,137.2	34,973.3	38,472.1
Հողի վարձ. առևտուր	64,842.0	59,809.2	64,842.0	60,085.5
Հողի վարձ. եկամուտ	15,222.8	17,020.9	14,860.3	15,009.0
Հողի վարձ. ավտոտնակ	36,892.0	31,572.1	36,871.6	33,516.3
Խմիչք/ծխախոտ	29,412.0	27,060.9	30,228.0	27,517.7
Բենզին/գազ	14,100.0	13,514.4	13,500.0	12,950.0
Գովազդ	42,231.6	38,041.6	42,646.8	37,993.4
Ոսկի	1,800.0	1,525.0	2,000.0	1,850.0
Տարսի	170.0	150.0	150.0	160.0
Շին թույլ	3,450.0	3,644.1	1,945.0	1,204.7
Տեխնիկական հեղուկ	840.0	730.5	750.0	587.5
Բացօթյա առևտուր	3,672.0	3,214.9	2,304.0	3,668.9
Ավտոկայանատեղ	0.0	0.0	0.0	0.0
24:00 իջ հեռո	2,675.0	3,125.0	2,100.0	1,675.0
Հանրային սնունդ	2,791.2	2,580.5	2,436.0	2,223.4
ՀՀ Համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու համար	300.0	100.0	300.0	250.0
Աղբի վարձ իրավ.	83,682.8	86,463.0	81,987.3	83,800.4
Աղբի վարձ ֆիզ.	90,360.0	75,472.8	90,279.6	77,462.1

Աղքի վարձ շին.	7,463.5	1,294.4	3,000.0	1,756.7
Տեղական վճար	7,875.0	8,216.1	8,700.0	7,256.0
ՀՈԱԿ-ներ մանկապարտեզներ	166,105.7	174,001.4	114,525.7	120,069.0
ՀՈԱԿ-ներ արտադպրոցական	63,515.0	72,748.5		
ՀՈԱԿ-ներ թանգարաններ	1,594.5	1,027.3		
Մուտքեր տոնավաճառներից	60.0	132.0	40.0	15.0
Արխիվային փասթաթղթերի համար	170.0	4.0	140.0	116.0
Տրանսպորտ	8,000.0	8,700.0	26,250.0	25,500.0
Տուգանք	4,100.0	3,723.0	3,400.0	4,229.9
Ապօրինի շին. օրին	15,640.0	29,204.0	15,000.0	22,420.8
Պետտուրք	32,300.0	34,146.0	33,200.0	30,998.4
Այլ մուտքեր	6,500.0	6,677.7	5,055.3	5,117.3
Հողի օտարում	105,006.8	128,778.0	53,178.0	54,096.5
Գույքի օտարում	8,100.0	9,256.6	8,000.0	8,695.9
Ընդամենը՝ վարչական	1,328,842.3	1,304,602.6	1,192,093.2	1,164,739.5
Ընդամենը՝ ֆոնդային	113,106.8	138,034.6	61,178.0	62,792.4
Ընդամենը՝	1,441,949.1	1,442,637.2	1,253,271.2	1,227,531.9

2. Հողի հարկի վերաբերյալ

Համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց հողի հարկի բազաների ուսումնասիրությամբ պարզվել է որ.

Համայնքի բյուջեի հողի հարկը 2017թ. նախատեսված 46,205.2 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 46,096.8 հազ. դրամ, կամ նախատեսվածի 99.8%-ը, 2018թ. հողի հարկը նախատեսված 47,949.3 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 46,458.9 հազ. դրամ, կամ նախատեսվածի 96.9%-ը:

Համայնքի 2017թ. բյուջեի հողի հարկը պլանավորելու համար հիմք է ընդունվել 01.11.2016թ. դրությամբ բյուջեի հողի հարկի տարեկան հաշվարկային ցուցանիշը, որը կազմել է՝ 46,142.9 հազ. դրամ, որից 26,691.2 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 19,451.7 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է: 2018թ. բյուջեի հողի հարկը պլանավորելու համար հիմք է ընդունվել 02.11.2017թ. դրությամբ բյուջեի հողի հարկի տարեկան հաշվարկային ցուցանիշը, որը կազմել է՝ 47,870.7 հազ. դրամ, որից 27,678.0 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 20,192.7 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է:

Համայնքի բյուջեի հողի հարկի գծով վճարման ենթակա գումարը 01.11.2016թ. դրությամբ կազմել է՝ 77,087.8 հազ. դրամ, որից 68,094.9 հազ. դրամը ֆիզիկական անձանց մասով է՝ ներառյալ 14,396.1 հազ. դրամ ընթացիկ տարվա հարկի չվճարված մասը, իսկ 8,992.9 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է: 02.11.2017թ. դրությամբ այն կազմել է 89,211.0 հազ.

դրամ, որից 80,627.1 հազ. դրամը ֆիզիկական անձանց մասով է՝ ներառյալ 15,429.0 հազ. դրամ ընթացիկ տարվա հարկի չվճարված մասը, իսկ 8,583.9 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է:

3. Գույքահարկի վերաբերյալ

Համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքահարկի բազաների ուսումնասիրության և հարկերի հավաքագրման ստուգմամբ պարզվել է որ.

Գույքահարկի գծով համայնքի բյուջեի մուտքերը 2017թ. նախատեսված 514,403.1 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 502,737.6 հազ. դրամ, կամ նախատեսվածի 97.7%-ը, 2018թ. գույքահարկի գծով բյուջեի մուտքերը նախատեսված 539,024.2 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 511,107.2 հազ. դրամ, կամ նախատեսվածի 94.8%-ը:

Համայնքի 2017թ. բյուջեի գույքահարկը պլանավորելու համար հիմք է ընդունվել 01.11.2016թ. դրությամբ բյուջեի գույքահարկի տարեկան հաշվարկային ցուցանիշը, որը կազմել է՝ 461,731.3 հազ. դրամ, որից 418,644.6 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 43,086.7 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է: 2018թ. բյուջեի գույքահարկը պլանավորելու համար հիմք է ընդունվել 02.11.2017թ. դրությամբ բյուջեի գույքահարկի տարեկան հաշվարկային ցուցանիշը, որը կազմել է՝ 484,757.7 հազ. դրամ, որից 442,699.8 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 42,057.9 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է:

Համայնքի բյուջեի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 01.11.2016թ. դրությամբ կազմել է՝ 645,683.9 հազ. դրամ, որից 589,511.3 հազ. դրամը ֆիզիկական անձանց մասով է՝ ներառյալ 220,027.6 հազ. դրամ ընթացիկ տարվա հարկի չվճարված մասը, իսկ 56,172.6 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է: 02.11.2017թ. դրությամբ այն կազմել է 713,458.5 հազ. դրամ, որից 658,441.3 հազ. դրամը ֆիզիկական անձանց մասով է՝ ներառյալ 222,177.8 հազ. դրամ ընթացիկ տարվա հարկի չվճարված մասը, իսկ 55,017.2 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է:

4. Գյումրու համայնքապետարանի աշխատավարձերի և շահագործվող տրանսպորտային միջոցների վերաբերյալ

